

تاریخ مختصر
جامعه ارمنی در ایران
(به زبان ارمنی)

تالیف :
ادیک باغدادساریان
(ا. گوماتیک)

تهران ۱۳۸۰

ISBN 984-08-0750-9

شابک ۹۶۴-۰۶-۰۷۵۰-۹

Էդիկ Բաղդասարյան
(Էդ. Գեղամանիկ)

Համառոտ ակնարկ
իրանահայ
համայնքի
պատմության

Թեհրան 2002 թ.

ISBN 984-08-0750-9

شابک ۹۶۴-۰۶-۰۷۵۰-۹

Համառոտ ակնարկ իրանահայ համայնքի պատմության

(Հանրագիտարանային ակնարկ)

Իրանը կամ Իրանի Իսլամական Հանրապետությունը (Պարսկաստան), գտնվում է Արմ. Ասիայում: Տարածքը՝ 1,648,195 կմ, բնակչությունը՝ 69 մլն (1999), Մայրաքաղաքն է Թեհրանը:

Հայ իրանական առնչությունները սկզբնավորվել են դեռևս իրանական պետականության կազմավորման ժամանակաշրջանում: Իրանում հայերը եղել են դեռևս մ.թ.ա. 6-րդ դարից: Դրանք հիմնականում զորամասեր էին, որոնք վասալական պարտավորություն էին կատարում՝ ծառայելով Աքեմենյան պետությանը: Ավելի ուշ զգալի թիվ էին կազմում նաև հայ առևտրականներն ու արհեստավորները: Իսկ որպես բնիկներ՝ դեռևս հնագույն ժամանակներից ապրել են Ատրպատականում կամ պատմական Պարսկահայքում (Թավրիզ, Մարանդ, Ուրմիա-Կապուտան, Խոյ, Հեր, Մարաղա, Սալմաստ-Ջարեհանդ, Մակու-Արտազ, Ղարաբաղ-Փայտակարան եւն), որը հայկական պետականության անկումից հետո մտավ Իրանի կազմի մեջ:

Այդ շրջաններում հայերի թիվը զգալիորեն ավելացել է Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95- մ.թ.ա. 55) ժամանակ, երբ վերանվանելով վերոհիշյալ տարածքները, նա մեծ թվով հայ արհեստավորներ, զինվորականներ եւ պետական պաշտոնյաներ է վերաբնակեցրել այստեղ:

Հետագա ժամանակաշրջանում Իրանի հայ բնակչության թիվն ավելացել է հիմնականում բռնագաղթի հետեւանքով:

Հայերի խոշոր բռնագաղթերը իրականացվել են մ.թ. 3-րդ դարում, (Սասանյան Արշավիր թագավորի կողմից), 4-րդ դարում (368-370-ական թթ.) Շապուհ 2-րդի Հայաստան կատարած արշավանքներից հետո: Հայ պատմիչների վկայությամբ այդ շրջանում Իրան են գաղթեցվել մի քանի

հարյուր հազար հայեր, որոնց զգալի մասը բնակեցվել են Խուզիստանում եւ Իրանի հարավ-արեւմտյան շրջաններում:

Հայաստանում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո իրանա-հայկական հակամարտությունն սրվեց եւ ստացավ կրոնական գունավորում: Այդ պատերազմների բուն նպատակն էր տարածքային հարցերը, ինչպես եւ Հայաստանի տարածքով անցնող միջազգային առեւտրական ճանապարհներին տիրանալը:

387-591-ին Հայաստանի մեծագույն մասը (4/5) ենթարկվել է Ի-ի քաղ. ազդեցությանը:

Սասանա-բյուզանդական տիրապետության շրջանում (426-640 թթ.) եւս Հայաստանը պարբերաբար ասպատակել են պարսիկներն ու բյուզանդացիները, եւ մեծ թվով հայեր են գաղթեցվել այդ երկրներ:

Բռնագաղթված հայերին սպասում էր աննախանձելի ճակատագիր: 7-րդ դարի սկզբներին Իրանն ընկավ Արաբական խալիֆայի տիրապետության տակ, նրանք բուն տեղի ժողովրդի հետ մեկտեղ, ընդունելով մեհմեդականություն՝ ձուլվելով ու կորցրին իրենց ազգությունը:

Իրանում հայ բնակավայրերի նոր օջախներ սկսեցին ստեղծվել 11-րդ դարից՝ սելջուկ-մոնղոլների արշավանքների հետեւանքով: Այդ խոշոր գերեվարությունը Հայաստանից Իրան կատարել են սելջուկները 1048 թվականին: Արիստակես Լաստիվերտցին իր «Պատմության» մեջ պատմում է, թե ինչպես Տուղրիլ բեգի հրամանով սելջուկյան մի բանակ Իբրահիմ Յանալիի եւ Գթըլմուշի գլխավորությամբ մտնում է Հայաստան, սրով ու հրով քանդում, ավերում Հայաստանի 24 գավառները եւ մեծ թվով գերիներ վերցնելով ետ վերադառնում: Ըստ Մատթեոս Ուռհայեցու տեղեկության, սելջուկները 150.000 հոգի կոտորելուց հետո այդ թվով էլ հայ ազգաբնակչություն են գերեվարում եւ քշում Իրան: Բացի այդ, հայկական պետականության անկումից հետո՝ 11-րդ դ. Մակուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիայի, Ղարաբաղի եւ այլ նահանգների հայկական շրջանները մտան Իրանի պետության կազմի մեջ:

Արդեն 11-14-րդ դարերում հայկական բնակավայրեր կային Թավրիզ, Մարաղա, Ռաշտ, Սուլթանիե քաղաքներում եւ

Իրանի մի քանի այլ մարզերում, որոնք ունեին նաեւ թեմեր, այդուհանդերձ Իրանի հասարակա-տնտեսական պայմանները դրանց միավորման համար դեռեւս բարենպաստ չէին:

12-րդ դարում արդեն Իրանում այնքան մեծաթիվ էր հայ բնակչությունը, որ հայկական երկու խոշոր թեմեր են ստեղծվել՝ Ատրպատականում, Յեր եւ Ջարեւանդի թեմ եւ Սալմաստի ու պարսկական մայրաքաղաքի թեմ: Տեղեկություններ կան, որ այդ երկու թեմերի առաջնորդները մասնակցել են 1174 թվականին Ղոնդկայում հրավիրված ազգային եկեղեցական ժողովին:

Իրան գերի տարված բազմահազար հայ բնակչության մի մասը ոչնչանում է գերեվարության ճանապարհին, իսկ մնացածները, մասնավորապես արհեստավորները եւ առեւտրականները, կարողանում էին ոտքի կանգնել, համախմբվել եւ հայ գաղթօջախների հիմքը դնել:

Իրանահայ գաղթականության դրությունը զգալի չափով բարելավվում է Մելիք շահի գահակալության ժամանակ (1072-1092): Նա բարյացական վերաբերմունք ցուցաբերեց հայերի նկատմամբ, որի մասին անդրադարձել է Մ. Ուռհայեցին:

Իրանահայ գաղթօջախները ավելի զարգացման եւ Իրանի տնտեսական կյանքում սկսեցին խոշոր դեր կատարել մասնավորապես մոնղոլական տիրապետության շրջանում (1220-1385): Մոնղոլների՝ Հայաստանում կատարած ամենից մեծ գերեվարությունը տեղի է ունեցել 1236-1237-ին, որի մասին տեղեկություն է հաղորդում Կիրակոս Գանձակեցին: Մի այլ գերեվարություն կատարվել է Երզնկայից 1340 թվականին, որի մասին տեղեկություն է հաղորդում Սարգիս գրիչը: Մոնղոլական գերիշխանության շրջանում հայ բնակչություն է տեղափոխվել Իրան ոչ միայն բռնագաղթի ճանապարհով, այլեւ մի մասը՝ կամովին: 13-րդ դարում, առեւտրական տարանցիկ ճանապարհները հարավից տեղափոխվում են հյուսիս: Այդ ճանապարհները Թավրիզի վրայով անցնում էին Տրապիզոն եւ Այաս: Իրանում այն նոր ճանապարհների վրա հիմնվում են մի շարք առեւտրաշատ կենտրոններ: Մայր հայրենիքում ստեղծված ծանր պայմանները ստիպում են բազմաթիվ հայ առեւտրականների եւ արհեստավորների տեղավորվել եւ հաստատվել Իրանի

այս քաղաքներում, ուր գործունեության ավելի լայն ասպարեզներ էին բացվում իրենց առջեւ: Եվ այսպիսով, մոնղոլական տիրեպատության շրջանում ստվարաթիվ գաղթօջախներ են ստեղծվում Թավրիզում, Սուլթանիեում, Մարանդում, Խոյում, Սալմաստում, Մարաղայում, Ռեշտում եւ այլ քաղաքներում: Տեղեկություններ կան, որ բազմաթիվ հայեր եւ քրիստոնյա այլ ժողովուրդներ են ապրել Ռեյ քաղաքում, որը մինչեւ սելջուկյան արշավանքները, Արեւելքի առեւտրական խոշոր կենտրոններից մեկն է հանդիսացել եւ կոչվել է «Տիեզերքի վաճառատուն»:

Հյուսիսային տարանցիկ ճանապարհի վրա հաստատված քաղաքներից ամենից խոշոր հայաշատ կենտրոնն է հանդիսացել Թավրիզը (Դավրիժը), որը հայկական աղբյուրներում հիշվում է նաեւ Գանձակ Շահաստան անունով: Նա, ըստ ուղեգիր Կլավիխոյի տեղեկության, 16-րդ դարի սկզբներում ունեցել է ավելի քան 200,000 տուն՝ այսինքն՝ մոտ մեկ միլիոն բնակչություն: Թավրիզի հայ բնակչության թիվը բավականին մեծ է եղել: Վենետիկի նշանավոր ճանապարհորդ Մարկո Փոլոն, որը 1271 թ. եղել է Թավրիզում եւ իր ուղեգրության մեջ հանգամանորեն կանգ է առել այդ քաղաքի նկարագրության վրա: Նա տեղի քրիստոնյա ժողովուրդներից առաջին հերթին հիշում է հայերին: Մեզ հասած մի տեղեկության համաձայն, Թավրիզը 16-րդ դ. ընկեցել է 700 տուն բնակչություն՝ 12 եկեղեցիներով: Համեմայն դեպս 14-15 դարերում Թավրիզում այնքան շատ հայեր են կենտրոնացված եղել, որ 1345 թ. գրված հայկական մի ձեռագրի հիշատակագիր՝ Ներսես Գրիչը, Թավրիզը համարում է ոչ միայն Ֆարսերի (պարսիկների), այլեւ հայերի մայրաքաղաք: Թավրիզի բնակչության ճնշող մեծամասնությունը հանդիսացել են արիեստավորներն ու առեւտրականները: Քաղաքին մոտիկ գտնվել են նաեւ հայկական գյուղեր: Թավրիզում գրված հնագույն հայկական ձեռագիրը 1334 թվականից է, այն ընդօրինակված է Սարգիս Գրչի կողմից ոմն Հովհաննեսի պատվերով: Գրչի հիշատակարանում Թավրիզում հիշվում է երկու եկեղեցի՝ Ս. Սարգիս եւ Ս. Աստվածածին անուններով:

Թավրիզի հայ համայնքը այդ ժամանակ բաժանված է եղել երեք հատվածների՝ լուսավորչականների, կաթոլիկների ու

հունադավանների: Պարսկահայությունը Վատիկանի ուշադրության կենտրոնում է եղել: 13-15-րդ դդ. կաթոլիկ քարոզիչները լիքն էին պարսկահայ գաղթօջախներում: Վատիկանը քարոզչական երեք կենտրոն է ստեղծել Իրանում՝ Թավրիզում, Մարաղայում եւ Սուլթանիեում: Նա 1330 թ. հռոմադավան հայության համար եպիսկոպոսական թեմ հիմնեց Իրանում՝ նստատեղ ընտրելով Սուլթանիեն: Առաջին թեմական առաջնորդն է հանդիսացել Յովհաննես Կոր (Jean de cor) արքեպիսկոպոսը:

1336 թ. գրված ձեռագիր հիշատակարաններից երեւում է, որ Թավրիզը Ատրպատականի հայ լուսավորչական թեմի առաջնորդական կենտրոն է եղել (եպիսկոպոսներ Ջաքարիա եւ Տերտեր): Թավրիզի քրիստոնյա բնակչության վիճակը, մոնղոլական տիրապետության շրջանում, այնքան էլ գովական չի եղել:

14-15-րդ դարերում իրանահայ խոշոր գաղթօջախ էր հաստատված Սուլթանիեում, որը հիմնվել էր Էլխան Արղունի (1284-1291) կողմից Ձենջանի եւ Ղազվինի միջև: 14-րդ դարի սկզբներին Էլխանության մայրաքաղաքը Թավրիզից տեղափոխվեց այդ քաղաքը: Սուլթանիեն եւս, Թավրիզից անկախ ունեցել է իր հայկական թեմը՝ թեմական առաջնորդներով:

Սուլթանիեի հայ բնակչության մի մասը, հավանական է, եկել է Անիից: Այդ մասին է վկայում 1326 թ. Կարապետ գրչի հիշատակարանը: Սուլթանիեն միջազգային առեւտրում իր խոշոր դիրքը պահպանեց մինչեւ Էլխանության անկումը՝ 1385 թվականը: 14-15-րդ դդ. հայկական մեծ թվով բնակչություն է ունեցել նաեւ Խոյ քաղաքը: Իսպանիայի ճանապարհորդ Կլավիխոն, որը 1405 թ. եղել է Խոյում, իր ուղեգրության մեջ հայտնում է, որ այդ քաղաքի «բնակչության մեծ մասը հայ ցեղից են»: Նա նույնպես հիշատակում է Մակուի հայկական խոշոր գաղթօջախի մասին: Նա հայտնում է, որ 1405 թ. գիշերել է Մակուի բերդում, որի իշխանը, ինչպես բերդը պաշտպանող զինվորները, կաթոլիկ հայեր են եղել: Հայ գաղթավայր է հանդիսացել Մարաղան: Այստեղ գրվել են հայերեն ձեռագրեր եւ պարսկերենով թարգմանվել աշխատություններ:

Սկզբնաղբյուրներում ստվարաթիվ հայ բնակչությունը գոյության մասին հիշատակություններ կան մաե Սարմաստ քաղաքում եւ մրա շրջակա գյուղերում, մաե Ռեշտում: Այստեղ 1494 թ. գոյություն է ունեցել «Հակոբ հայրեպետի» անունով հայոց եկեղեցի:

Բավականին խոշոր հայկական գաղթօջախ գտնվել է Ուրմիայում, որի հայ բնակչությունը հիմնովին տուժել է 1425 թ. Իսկենդերի վայրագությունների հետեւանքով:

Հայ ազգաբնակչության գերեվարումը շարունակվում է մաե Լենկ Թեմուրի ասպատակումների ընթացքում (1386, 1387, 1395, 1396, 1399), որոնց զգայի մասը տարվում է Խորասան:

Լենկ Թեմուրից հետո Հայաստանում եւ պարսկահայ գաղթօջախներում շարունակվում են անընդմեջ ասպատակությունները Ղարա Յուսուֆի (1388/9-1405), Իսկանդարի (1420-1437), Ջեւանշահի (1444-1466) եւ ուրիշների ժամանակ:

Սեֆյան հարետության հիմնադիր շահ Իսմայիլի գահակալության շրջանում է հիմնվել Սպահանի հայ գաղթավայրը: Միալ է այն կարծիքը, որ իբրեւ թե Սպահանի հայ գաղթօջախը ստեղծվել է Շահ Աբբասի բռնագաղթի շնորհիվ:

Շահ Աբբասի բռնագաղթից առաջ Սպահանում հայ համայնքի գոյության մասին են խոսում Առաքել Դավրիժեցին, Հարություն Տեր-Հովհանյանցը, Գրիգոր Աղաբաբյանը: 16-րդ դարի եւրոպացի ճանապարհորդները իրենց ուղեգրությունների մեջ բազմաբնույթ տեղեկություններ են հաղորդում Սպահանում բնակություն հաստատած հայ առեւտրականների եւ արհեստավորների աշխույժ գործունեության մասին:

Ուշագրավ է այն, որ Սեֆյան հարստության հիմնադիր Իսմայիլը, փոքր հասակում, ապաստանել է Աղթամար եւ իր դաստիարակւթւնը ստացել այնտեղ, չնայած հետագայում մրա որդին՝ շահ Թահմազը, երախտամոռ գտնվեց հայերի նկատմամբ:

1514 թ. օգոստոսի 21-ին Չալդրանում սուլթան Սելիմի եւ շահ Իսմայիլի բանակների միջեւ տեղի ուեցող կռվի ժամանակ, երբ պարսիկները պարտություն կրեցին,

թուրքական զորքերը առաջանալով մտան Թավրիզ եւ այստեղից գերի տարան 3000 հայ արհեստավորների իրենց ընտանիքներով:

1603 թվականին պարսկական զորքը, Շահ Աբբասի գլխավորությամբ անցնում է Արաքսը եւ մտնում Ջուղա: Պարսկական բանակը գրավում է Նախիջևանը եւ պաշարում Երեւանը, ուր ամրացել էր թուրքական կայազորը: Այդ ընթացքում պարսկական մի այլ զորամաս անցնում է թուրքական սահմանը, Կարինի ուղղությամբ, ասպատակում Վանի, Մանազկերտի, Ալաշկերտի, Կարինի, Բասենի, Խնուսի գավառները: Արեւմտյան Հայաստանից 60 հազար հայ գաղթականներ են բերվում Իրան:

Երեւանը գրավելուց հետո, Շահ Աբբասը տեղեկանալով զորաբանակի առաջխաղացման մասին, Սինան փաշայի հրամանատարությամբ, որոշում է իրագործել իր ծրագիրը՝ հայերին բռնի գաղթեցնել Իրան: Այդ քայլը Շահ Աբբասը օգտակար էր համարում երկու տեսակետից. նախ՝ ամայի ընդարձակ տարածություն կստեղծեր արշավող թուրքական բանակի առջեւ ու դրանով կոծվարանար նրա պարենավորումը, եւ ասպա՝ հայ գաղթականությունը Իրան տեղափոխելով նպաստած կլիներ իր երկրի տնտեսական կյանքի զարգացմանը:

Իրան տարվող բազմահազար հայ բնակչության զգալի մասը ոչնչանում է:

Բռնագաղթած հայ բնակչությունը իր գաղթի տարբեր փուլերի ընթացքում հաստատվում է Իրանի զանազան շրջաններում՝ Քաշանում, Ղազվինում, Գիլանում, Էնզելիում, Սպահան քաղաքի գավառներում՝ Լնջանում, Ալինջանում, Գանդիմանում եւ Ջղախոռ, Փերիա ու Բուրվարի, Քյազազ, Քյամարա, Գափլա եւ Ղարաղան, Շիրազ, Չարմահալ, Մազանդարան, Համադան եւ այլն:

Եւրոպացի ճանապարհորդներից մեկը՝ Գռուլեն, Հայաստանից Իրան տարված բնակչության թիվը 60.000 ընտանիք է հաշվում: Եթե յուրաքանչյուր ընտանիքում հաշվենք 5 անձ, ապա գերեվարված հայ բնակչության թիվը 300.000-ի է հասնում: Կան տեսակետներ 70.000 ընտանիքի մասին: Ըստ Եւրոպացի ճանապարհորդի՝ քշված գաղթականներից միայն ստրկության վաճառվածների թիվը

100.000 է եղել: Եւրոպացի ճանապարհորդ Շարդենը, բռնագաղթից 40 տարի հետո Մազանդարանում գտնված ժամանակ, ցավով նշում է, որ այդտեղ բերված 30.000 ընտանիքներից մնացել են միայն 400-ը, մնացածները մահացել են կլիմայի վատառողջ լինելու պատճառով: Տվյալներ կան, որ տարեգրված հայության թիվը հասել է մինչեւ 500.000:

Շահ Աբբասը Սպահանի արվարձանում, Ջայանդերուդի մյուս ափին, հայերին թույլ է տալիս հիմնել բնակավայր որի բնակիչները հիմնականում Նախիջևանի եւ Երեւանի գավառներից ու Ջուղա գյուղաքաղաքից բռնագաղթվածներն էին: Վերջիններս, իրենց հին բնակավայրերի անունը պահպանած լինելու համար, նոր տեղն անվանեցին Նոր Ջուղա: Շահը զգալի արտոնություններ է շնորհում հայ առեւտրականներին եւ արհեստավորներին: Նա նույնիսկ թույլ է տալիս այդտեղ հայկական եկեղեցիներ կառուցել, ունենալ դատարաններ: Նրա հրամանով Էջմիածնի վանքի քարերը բերվում են Նոր Ջուղայում կառուցվող եկեղեցիների պատերը ձեւավորելու համար, որը կատարվում է հայ գաղթականությունը պարսկական հողի հետ կապելու նպատակով: Կարճ ժամանակում Նոր Ջուղան դարձավ Իրանի առեւտրական կարելոր կենտրոններից մեկը, որի հայ վաճառականները (խոջաները) 17-րդ դ. եւ 18-րդ դ. առաջին քառորդում դարձան Չնդկաստանի, Եւրոպական ու Ռուսաստանի հետ Իրանի առեւտրա-տնտեսական կապերի զարգացման ակտիվ գործիչներ:

17-րդ դարում դարում եւ 18-րդ դ. խկզբին Նոր Ջուղան դարձավ Իրանի հարավում ապրող հայերի թեմական կենտրոն, ինչպես նաեւ մշակութային կարելոր օջախ անմբողջ գաղութի համար:

18-րդ դ. 20-ական թվականներին աֆղանների արշավանքի հետեւանիքով Նոր Ջուղայի կյանքը ապրեց խոր անկում: Դրան հաջորդած Ֆեոդալական երկպառակությունների եւ պատերազմների շրջանում նրա բնակչության զգալի մասը, հատկապես ապահովված, հարուստ խավը հեռացավ, առավելապես Չնդկաստան, Իրաք եւ արաբական այլ երկրներ, ինչպես եւ Ռուսաստան: Այսուհանդերձ, Իրանում ապրող հայրեի գերակշիռ մասը մնաց երկրում: Նրանք

բնակություն հաստատեցին Իրանի այլ նահանգներում եւ շրջաններում:

Անգլիացի միսիոներ՝ Հանրի Մարթինի վկայությամբ (22 մայիս 1711 թ.) հայկական գաղութ է գոյություն ունեցել Պարսից Ծոցի ափերում գտնված Բուշեիրում, ինքը այդ թվականին հյուր է լինում մի հայ ընտանիքի: 1711 թ. հայերը Բուշեիրում ունեցել են եկեղեցի եւ քահանա: Նոր Ջուղայի վաճառականները երբ սկսեցին Հնդկաստանի հետ իրենց առևտրական հարաբերությունները, գտնվեցին Բանդար Աբբասից, սակայն 1763 թ., երբ անգլիացիները հեռացան այդ նավահանգստից, հայ առևտրականներն է հետեւելով նրենց Բուշեիր հաստատվեցին:

Այդ տարիներին տեղաշարժեր եղան նաեւ հայ գյուղական բնակչության մեջ: Նոր Ջուղայի հարակից Լնջան եւ Ալիջան շրջաններում ապրող բոլոր հայ գյուղացիները տեղափոխվեցին դեպի արեւմուտք ու հարավ-արեւմուտք՝ Փերիայի, Բուրվարիի եւ Չհարմահալի շրջանները: Հաջորդ տասնամյակում հայ գյուղացիների շատ ընտանիքներ Բուրվարի եւ Գյափլա շրջաններից անցան հարեւան Քյամարա եւ Քյազազ շրջանները: Այս տեղաշարժերի ընթացքում ստեղծվում էին հայկական նոր բնակավայրեր եւ կամ համարվում էր արդեն եղածների բնակչությունը:

Իրանի հայ բնակչությունը ծանր վիճակում է գտնվել 18-րդ դարի երկրորդ կեսին, միջ-Ֆեոդալական ընդհարումների ակտիվացման ժամանակաշրջանում, երբ 1747 թվականին սպանվեց Նադիր Շահը:

18-րդ դարի երկրորդ կեսում Իրանում իշխում էր սուրը՝ հաղթահարող խաներից, մահը՝ ավազակային հարձակումներից, տուգանքը՝ ինքնագլուխ իշխաններից եւ տանջանքը՝ հարկապահանջներից: 1753 թվականին Սպահանի եւ Նոր Ջուղայի վրա դրված է եղել 60.000 թուման արտակարգ հարկ: Շատ չանցած երբ Սպահանին կարճ ժամանակով տիրել են աֆղանները, նոր ջուղայեցիներից պահանջվել է եւս 1800 թուման:

18-րդ դարում Իրանի հայ բնակչության անտերունջ վիճակից փորձեցին օգտվել կաթոլիկ միսիոներները, որոնք հաստատվել էին Իրանում դեռեւս Շահ Աբբասի օրոք: Իրանում հաստատվել էին միսիոներական մի քանի

միաբանություն՝ Օգոստինյան, որը գտնվում էր սկզբում պորտուգալական, իսկ հետո իսպանական թագավորի հովանավորության ներքո, Կապուչինյան եւ Հիսուսյան, որոնք գտնվում էին Ֆրանսիական թագավորի հովանավորության ներքո, Կարմեյան, որը գտնվում էր պապի հովանավորության ներքո եւ այլն: Իրանահայությունից կաթոլիկություն են ընդունել այն հայերը, որոնք կապված էին կաթոլիկ աշխարհի հետ: Այսուհանդերձ միսիոներական կազմակերպությունը մեծ հաջողություններ չի ունեցել:

19-րդ դ. 20-30-ական թվականներին իրանահայ գաղութը ենթարկվեց նոր փոփոխությունների: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արեւելյան Հայաստանի մի մասը Ռուսաստանին միանալուց հետո, մոտ 45 հազար հայեր դուրս եկան Իրանի հյուսիսային նահանգներից եւ բնակություն հաստատեցին Երեւանի եւ Նախիջեւանի նահանգներում:

Իրանում մնացած հայերը գլխավորապես բնակվում էին հարավային եւ Հյուսիսային նահանգներում: Հարավաբնակ հայերի կենտրոնը շարունակում էր մնալ Նոյր Ջուղան: Նրան էին ենթարկվում Փերիա, Քյարվանդ, Չհարմահալ, Բուրվարի, Համադան, Շիրազ քաղաքների հայաբնակ օջախները:

1833 թ.-ից հյուսիսային նահանգներում բնակվող հայերի կենտրոնը դառնում է Թավրիզը: Մինչ այդ Մակուի շրջանում գտնվող Թադեի վանքին էր պատկանում առաջնային դերը: Այսուհետեւ Թավրիզը համարվում էր Խոյի, Մակուի, Սալմաստի, Ուրմիայի, Ղարադաղի, Մարաղայի եւ այլ շրջանների հայերի կենտրոն:

19-րդ դ. երկրորդ կեսին Իրանահայ գաղութը շարունակեց աճել ավելի արագ թափով: Ստեղծվում են հայ նոր բնակավայրեր Մեշհեդում, Քերմանշահում եւ այլուր: 20-րդ դ. իսկզբին, Իրանում նավթային արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ հայկական նոր օջախներ առաջացան երկրի հարավում՝ Աբադանում, Ահվազում, Մեջդեդ-Սուլեյմանում եւ այլուր:

17-19-րդ դարերում հայ բնակչության մի մասը հարավային գավառներից փոխադրվում է կենտրոնական գավառները, ստեղծելով մի քանի նոր հայկական բնակավայրեր: Տարագաղթման պատմական այս ընթացքի հետեւանքով Իրանի հայ գաղութը բաժանվեց երկու մասի՝ հյուսիսային

(Թավրիզ կենտրոնով) եւ հարավային (Նոր Ջուղա կենտրոնով): Այս բաժանումը պահպանվում էր մինչեւ 20-րդ դարի 40-ական թվականները:

Թեհրանի բնակչության աճին զուգընթաց խախտվեց գաղութի պատմականորեն ստեղծված այս բաժանումը: Դարիս 40-ական թվականներին ստեղծվեց կենտրոնական նոր շրջան, որի մեջ կենտրոն հանդիսացող Թեհրանի հետ մեկտեղ մտան նաեւ հարակից կենտրոնական, ինչպես նաեւ հարավ-արեւելյան եւ հյուսիս-արեւելյան գավառների հայկական բնակավայրերը: 1946 թ. մեծ ներգաղթ սկսվեց դեպի Խորհրդային Չայաստան: Ելնելով հայրենասիրական ձգտումներից հայերը աճապարանքով Թեհրան մեկնեցին՝ հայրենիք վերադառնալու նպատակով: Սակայն դա բոլորին չհաջողվեց եւ շատերը որոշ դժվարությունների պատճառով մնացին Թեհրանում եւ կազմեցին Թեհրանի ներկայիս հայ բնակչության մեծամասնությունը:

Մինչեւ XX դ. խկիզբը իրանահայության ավանդական կենտրոնավայրերը Ատրպատականը եւ Սպահանի շրջակայքն էին: Դարասկզբից արագորեն աճել է Թեհրանի եւ նրա շրջանի բնակչությունը: 1946-ի հայրենադարձության ժամանակ մեծ թվով իրանահայեր փոխադրվել են Թեհրան եւ հայրենադարձության ընդհատումից հետո բնակչություն հաստատել այնտեղ (1950-ական թթ. վերջին թեհրանահայության թիվը հասել է 65 հազարի, 70-ական թթ. սկզբին՝ ավելի քան 100 հազարի, իսկ հեղափոխության նախօրյակին՝ ավելի քան 120 հազարի): Ընդհանուր առմամբ, Թեհրանի եւ նրա շրջակայքի հայության թիվն անցել է 150 հազարից, մինչդեռ Ատրպատականի եւ իրանահնդկաստանի թեմերի բնակչությունը հասել է ընդամենը 40-50 հազարի: Արմատական տեղաշարժեր են տեղի ունեցել նաեւ քաղաքային եւ գյուղական բնակչության հարաբերակցության մեջ: 1970-ական թթ. վերջին իրանահայության 95%-ը քաղաքաբնակ էր:

1980-ական թթ. երկրի հայահոծ քաղաքներից, հատկապես Ն. Ջուղայից, Խուզեստանի նահանգից, Թեհրանից եւ այլ հայաբնակ վայրերից արհեստավորներ եւ ծառայող հայ ընտանիքների մի մասը տնտեսական պայմանների, բնակարանային խնդրի բարդացման հետեւանքով մեկնել է

նորակառույց քաղաքներ, մասնավորեպես՝ Շահինշահի եւ արդյունաբերական հետանկար ունեցող նորաստեղծ Արաք (նախկին Սուլթանաբադ) քաղաքը:

Իրանահայ համայնքը մշտապես բազմաշերտ է եղել, միավորվով սոցիալական ամենատարբեր խավերի, սակայն դարերի ընթացքում նրա հասարակական կառուցվածքը զգալի փոփոխություններ է կրել: Ամբողջ միջնադարի ընթացքում Իրան տեղափոխված հայերի ճնշող մեծամասնությունը եղել է հողագործ բնակչությունը, որը նոր վայրերում էլ զբաղվել է գերազանցապես գյուղատնտեսությամբ: Սակայն իրանահայ համայնքի սոցիալական կառուցվածքի կարեւոր առանձնահատկություններից մեկը վաճառականների եւ արհեստավորների ստվար շերտի առկայությունն է: Մոնղոլական տիրապետության շրջանից սկսած հայ վաճառականները նշանակալի դեր են խաղացել Իրանի վրայով իրականացվող տարանցիկ առեւտրում: Նրանց ոսկեդարն սկսվել է XVII դ. խկզբին, երբ ասպարեզ են իջել Նոր Ջուղայեցի վաճառականները: Անգլիական Արեւելահնդկական առեւտրական հզոր ընկերության հետ համառմրցակցության պայմաններում Նոր Ջուղայեցի հայ վաճառականներին հոջողվել է շահից ստանալ իրանական հում մետաքսի արտահանման մենաշնորհի իրավունք: Կարճ ժամանակում գործարար կապեր հաստատելով Արեւելքի եւ Արեւմուտքի հետ, նրանք իրենց են ենթարկվել նաեւ Իրանի վրայով կատարվող տարանցիկ առեւտրին: Միջազգային առեւտրում ազդեցիկ ուժ են եղել Սաֆրազյան, Լազարյան, Շահրիմանյան, Վելիջանյան, Խաչդարյան եւ ուրիշ մեծահարուստ առեւտրական տներ: XVII դ. կեսին Նոր Ջուղայեցի վաճառականները եւրոպական առեւտրական կապիտալի ուժեղացող ներթափանցմանը դիմագրավելու նպատակով միավորվել են ընկերությունների մեջ, որոնցից առանձնապես նշանավոր էր «Նոր Ջուղայի հայ առեւտրական ընկերությունը»:

Նոր Ջուղայեցի հայ վաճառականների գործունեությունը ընդգրկել է նաեւ քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների ոլորտը : Նրանցից շատերը հանդես են եկել որպես իրանական կառավարության պաշտոնական

ներկայացուցիչներ երոպական երկրներում: Բազմաբնույթ գործունեության կարելուր կողմերից մեկն էլ այն էր, որ նրանք ծանրակշիռ ավանդ են ներդրել հայ եւ պարսիկ ժողովուրդների երոպական մշակույթի հետ ծանոթանալու գործում:

Մեծահարուստ հայ վաճառականների կողքին զգալի թիվ են կազմել նաեւ մանր ու միջին հայ առեւտրականները, որոնք զբաղվել են գերազանցապես ներքին մանրածախ առեւտրով: XIX դ. կեսից Իրանում նկատվող տնտեսական աշխուժացմանը զուգընթաց, իրանահայ վաճառականները վճռորոշ դիրքեր են գրավել իրանական արտահանման այնպիսի ճյուղերում, ինչպիսիք էին՝ բամբակը, չոր միրգը, բուրդը, ձկնեղենը եւ այլն: Գործարար կապեր հաստատելով Ռուսաստանի եւ Արմ. Եւրոպայի առեւտրաարդյունաբերական շրջանների հետ, նրանք Իրան են ներմուծել արդյունաբերական բազմապիսի ապրանքներ, հաջողությամբ մրցելով իրանական եւ արեւմտաեւրոպական վաճառականների հետ: Առանձնապես լայն գործունեություն են ծավալել Թումանյանցների, Նազարբեգյանցների, Արզումանյանցների, Շահգելդյանցիների առեւտրական տները, որոնք աչքի են ընկել նաեւ վարկադրամային հարաբերությունների եւ արդյունաբերական շինարարության բնագավառում:

XX դ. կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց Իրանում ձեւավորվել է հայ ձեռնարկատերերի մի խավ, որը նշանակալի ներդրումներ է կատարել սննդի եւ տեքստիլ արդյունաբերության ճյուղերում, ինչպես նաեւ տնօրինել սպասարկման ոլորտի բազմաթիվ ձեռնարկություններ (պարենային ու հրուշակեղենի խանութներ, ճաշարաններ, սրճարաններ եւ այլն):

Իրանահայության շրջանում ավանդաբար զարգացած է եղել նաեւ արհեստագործությունը: Հայ արհեստավորների արտադրանքը լայն պահանջարկ է վայելել Իրանում եւ նրա սահմաններից դուրս: Առանձնապես մեծ հռչակ են վայելել հայ ոսկերիչները (որոնց ձեռքում է եղել նաեւ պարսից արքունական ոսկերչությունը), մուշտակագործները (Հովհաննես Ղազարյան), մետաքսագործ վարպետները, գորգագործները: Արքունական հռչակավոր ոսկեգործ

վարպետներից էին՝ Թադեոս Առաքելյանը (Թուրապ խանը), Ստեփան Եղիզարյանը, Առաքելը, Թովմաս խանը, Մելիք Թովմասյանը, Ծերունը (Հովհաննես Մասեհյանի հայրը) եւ ուրիշներ:

Հայ մետաքսագործ եւ շերամապահ վարպետներն այնքան մեծ համարում են ունեցել, որ ռուսական արքունիքի խնդրանքով Իսրայել Օրին 20 հայ ընտանիք է տարել Ռուսաստան այդ ճյուղերը զարգացնելու նպատակով:

Իրանահայության շրջանում լայնորեն տարածված էին նաեւ դերձակությունը, հյուսնությունը, դարբնությունը, կոշկակարությունը, ջուլհակությունը, ներկարարությունը, մեծ թիվ են կազմել որմնադիրները, քարհատները:

XX դ. Ի-ում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետեւանքով համայնքի ամենաբազմամարդ խավը՝ հողագործ գյուղացիությունը, կրկին նվազել է՝ շարունակելով ավելացնել քաղաքաբնակ հայերի թիվը: Ֆաբրիկագործարանային արդյունաբերության զարգացման հետեւանքով աստիճանաբար ձեւավորվել է իրանահայ բանվորությունը, որի մեջ մեծ թիվ են կազմել բարձր որակավորում ունեցող մասնագետները: Հատկապես մեծ թվով հայ բանվորներ են աշխատել նավթարդյունաբերության մեջ: Զգալի թիվ են կազմել պետական պաշտոնյաները եւ տեղական ու արտասահմանյան ընկերություններում ծառայողները:

1950-ական թթ.-ից նկատելիորեն աճել է հայ մտավորականության տեսակարար կշիռը (բժիշկներ, իրավաբաններ, ուսուցիչներ, ինժեներներ), որոնց զգալի մասը մասնագիտական բարձրագույն կրթությունը ստացել է Եւրոպայում ու ԱՄՆ-ում եւ անցել պետական ծառայության: Նշանակալի է նաեւ արվեստի հայ գործիչների (նկարիչներ, ռեժիսորներ եւ այլն) թիվը:

Իրանահայերն անժխտելի դեր են խաղացել նաեւ երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Իրանի նոր պատմության նշանավոր դեմքերից է հայ ազգի քաղաքական գործիչ Միրզա Մելքոն խանը:

Արտաքին գործերի նախարարությունում կարելուր պաշտոններ են զբաղեցրել նաեւ Հովհաննես խան Մեսեհյանը, Սեթ խան Աստվածատուրը, Ենիկոլոփյանները,

Հովհաննես խան Ազլալյանը, Դավիթ խան Դավթյանը եւ ուրիշներ:

Իրանահայությունն ակտիվորեն մասնակցել է XX դ. խկզբին երկրում ծավալված սահմանադրական շարժմանը: 1905-11-ի իրանական հեղափոխության հայտնի գործիչներից էր Եփրեմ խան Դավթյանը: XX դ. խկզբին ընդունված սահմանադրության համաձայն հայերն իրավունք ունեն ներկայացուցիչներ ունենալ իրանական խորհրդարանում (մեջլիսում): Ներկայումս հյուսիսային շրջաններից պատգամավոր է ընտրված Լեւոն Դավթյանը, հարավից Ժորժիկ Աբրահամյանը:

XX դ. վերջից Ի-ում իրենց գործունեությունն են ծավալել հայ քաղաքական կուսակցություններից՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը եւ սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը: ՀՀԴ-ն ակտիվ գործունեություն է ծավալել երկրի հյուսիս-արմենւտյան շրջաններում, որոնք հայդուկային շարժման կարելուր հենակետեր էին: Այստեղ են նախապատրաստվել եւ իրականացվել հայդուկային հնազույն հարձակումներից շատերը, այստեղով են Արմենւտյան Հայաստան տեղափոխվել հեղափոխական խմբեր, գրականություն եւ զենք: 1905-ին Կովկասից եկած հայ սոցիալ-դեմոկրատների ջանքերով Թավրիզում ստեղծվել է Սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն: Իրանի Կոմկուսի հիմնադիրներից է տնտեսագետ, պատմաբան Ավետիս Միքայելյանը (Սուլթանզադե):

Իրանահայերը ակտիվորեն մասնակցել են նաեւ Իրանի ժողովրդական Կուսակցության (Թուդե) հիմնադրմանը (Արտաշես Հովհաննիսյան եւ ուրիշներ):

1980-ին սկսված իրանա-իրաքյան հակամարտության առաջին իսկ օրերին Իրանի հայաշատ վայրերում ստեղծվել են պատերազմին օգնող կոմիտեներ, կազմակերպվել են բուժօգնության դասընթացներ: 1980-ի հոկտեմբերին շուրջ 400 հայ կամավորներ ուղևորվել են զորանոցներ, նրանց մեծ մասը մեկնել է գործող ճակատ: Պատերազմի ընթացքում հարյուրավոր հայ մասնագետներ աշխատել են գործող բանակում: Շոշափելի գումար է կազմել պատերազմի կարիքների համար հայ համայնքի տրամադրած նյութական օգնությանը: Պատերազմում զոհված հայերի թիվը անցնում է

80-ից: 1980-ական թթ. իրանահայ գաղութն ավելի քան 10 հզ. մասնագետներ է ունեցել տնտեսության տարբեր բնագավառներում: Համայնքը հայ երիտասարդությանը տարբեր մասնագիտություններ սովորեցնելու նպատակով ստեղծել էր համապատասխան արհեստանոցներ, որոնք կարճ ժամանակում մեծ ճանաչում են գտել երկրում: Դասընթացներն անվճար էին, տարբեր արհեստանոցներում աշխատող աշակերտները վարձատրվում էին եւ ապահովագրվում: Իրանում շուրջ 10 ընկերություններ զբաղվում էին կոմբայնի, բունկերի արտադրությամբ: Հայերը մեծ ավանդ են ներդրել «Հայ գրուփ», «Վանիկ բունկեր», «Թիոն տանկեր» հաստատությունների աշխատանքներում: Անժխտելի է հայ ժողովրդի մեծ ներդրումը Իրանի արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման, առևտրի ծավալման, արվեստի մշակութային կյանքի բարգավաճման գործում: Ոչ մեծ տոկոս կազմող հայ ձեռնարկատերերի մեծամասնությունը իր կապիտալները ներդրել է մսամթերքների, զովագուցիչ ջրերի եւ այլ ապրանքների արտադրության մեջ, ինչպես նաեւ քաղաքաշինության բնագավառում: Իրանահայ մանր ձեռնարկությունների գործունեության համադրումը իրականացվում է «Իրանի հայ արհեստավորների հավաքականություն» ընկերության կողմից, Հայաստանի հետ տնտեսական հարաբերություններ կազմակերպում է «Իրան-Հայաստան Առևտրական Պալատի» միջոցով, որը ղեկավարում է հայտնի ձեռնարկատեր, ազգային բարերար, Իրանի եւ Հայաստանի առևտրական պալատի նախագահ, Սաթի միջազգային բեռնափոխադրումների տնօրեն Լեւոն Ահարոնյանը:

1998 թ. Թեհրանում նշված ընկերության ջանքերով կազմակերպվել են իրանահայ արհեստավորների արտադրանքի 4-րդ ցուցահանդեսը, որը տարեց տարի մեծ կարեւորություն է ծավալ է ստանում: 1995 թ. ապրիլի 18-ին Իրանի Իսլամական Խորհրդարանը վավերացրեց 13 կետերից բաղկացած Իրանի եւ Հայաստանի պետությունների միջեւ ճանապարհային միջազգային փոխադրության համաձայնագիրը: Իրանից Հայաստան են առաքվում երկաթ, պողպատ եւ թեթեւ արդյունաբերության այլ ապրանքներ:

Հայաստանից Իրան են արտահանվում հաստոցներ, քիմիական արտադրանքներ, ալյումին եւ այլ ապրանքներ: Բեռնափոխադրումներին նպաստեց Արաքս գետի վրա Մեղրու շրջանում կառուցված կամուրջը:

Ներկայումս (1999) Իրանում բնակվում է շուրջ 80 հազար հայ: Համայնքը խիստ շերտավորված է: Կան մեծ թվով արհեստավորներ, արդյունաբերության տարբեր ճյուղերում աշխատող բանվորներ, զգալի թվով մտավորականներ, բժիշկներ, ճարտարապետներ, ուսուցիչներ, պետական հիմնարկների ծառայողներ եւ այլն: Մինչեւ 1979-ի «Իսլամական հեղափոխությունը» զգալի թիվ են կազմել նաեւ հայ խոշոր ձեռնարկատերերի ու առեւտրականները: Հայերի մեծ մասը բնակվում է քաղաքներում՝ Թեհրանում, Թավրիզում, Ռեշտում (Ռաշտ), Ուրմիայում, Սպահանում, ՆորՋուղայում, Շիրազում, Ահվազում, Արաքում , Շահինշահրում, Սարիում, Ղազվինում, Գորգանում եւ Մեշհեդում:

Գործում են ՀԲԸՄ, ՀՕՄ, Հայ մշակութային «Արարատ» կազմակերպությունը, «Հայ կին» միությունը, Իրանահայ Ազգային եւ Մշակութային միությունը, «Թեհրանի հայ կանանց բարեգործական» միությունը, «Արարատ» եւ «Հայ երգ» երաժշտական ընկերությունները: Թեհրանի Ազատ Համալսարանի եւ Սպահանի համալսարանի գրականության Ֆակուլտետներին կից գործում են հայագիտական ամբիոններ: Իրանը սփյուռքի հրատարակչական կենտրոններից է, այստեղ տպագրվում են հայ հեղինակների աշխատություններ, պարբերականներ եւ այլն:

Իրանահայ ներկայիս նշանավոր դեմքերից են՝ հանգուցյալ Արտակ Արք. Մանուկյանը, Կորյուն Արք. Պապյանը, Նշան Ծ. Վարդապետ Թոփուզյանը, վարդապետ Թոսունյանը, գիտնականներ՝ պրոֆ. Ալեքսանդր Աբեյանը, դոկտ. Ալեքսանդր Բաղդյանը, դոկտ. Կարո Լուկասը, դոկտ. Ալենուշ Տերյանը, դոկտ. Հարմիկ Դավթյանը, հայագետներ Լեւոն Մինասյանը, Էդ. Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ), հրատարակիչներ Սեպուհ Ամիրխանյանը, Մարտիկ Պողոսյանը, փաստաբան Ալբերթ Բեռնարդին եւ այլն:

ՀՀ անկախությունից հետո իրանահայ համայնքի եւ Հայաստանի փոխհարաբերություններն ավելի են սերտացել:

Դրան նպաստում են հասարակական-քաղաքական գործիչների, հոգեւոր առաջնորդների, մարզամշակութային կազմակերպությունների եւ անհատ կատարողների երկկողմ փոխայցելությունները, տնտեսական համագործակցությունը:

xxx

ԹԵՐՐԱՆՈՒՄ հայերը բնակություն են հաստատել XVIII դ. 2-րդ կեսին: 1768-ին ձեռնարկել են Ս. Թադեոս-Բարդուղիմեոս եկեղեցու, 1790-95-ին՝ Ս. Գեւորգ եկեղեցու կառուցումը: 1857-ին Թեհրանում եղել է 110, 1913-14-ին՝ 575 հայ ընտանիք (2905 մարդ): 1959-ին այստեղ բնակվել է 65 հզ., 1978-ին՝ շուրջ 110 հզ. հայ: Ներկայումս (1999) Թեհրանի հայության թիվը կազմում է մոտ 50 հզ: Համայնքի ճնշող մեծամասնությունը արհեստավորներ են (ոսկերիչներ, դերձակներ, հյուսներ, կոշկակարներ), զգալի թիվ են կազմում ձեռնարկատերերը, հիմնարկներում ծառայող պաշտոնյաները, ինչպես նաեւ բժիշկները, ճարտարապետները, ինժեներները, փաստաբանները, ուսուցիչները: Մինչեւ 1870-ը՝ բացի վերոհիշյալ երկու եկեղեցիներից, ազգային որեւէ հաստատություն կամ կազմակերպություն չի եղել: 1870-ին հիմնվել է «Ուսումնասիրաց միությունը», որը 1871-ին բացել է Հայկազյան միջնակարգ դպրոցը (2 բաժնով, տղաների՝ Դավթյան, եւ աղջիկների՝ Մարյամյան): 1878-ից սկսել է գործել հայ թատրոնը, 1881-ին հիմնվել է հայ թատերասիրաց ընկերությունը: Ցայս օր Թեհրանում հրատարակվել է 90 անուն պարբերական: 1936-ին իրանական իշխանությունները փակել են բոլոր ազգային, այդ թվում հայկական դպրոցները (վերաբացվել են 1942-43-ին): Քաղաքում կա 25 հայկական դպրոց, 3 մանկապարտեզ եւ 3 մանկամսուր: Գործում են Հայ Կին (1939), Արարատ (1944), Հայ Ակումբ (1954), Իրանահայ Գրողների Միություն (1962), Նոր Էջականներ (1969), Հայ Համալսարանականների Միություն, Իրանահայ Ազգային եւ Մշակութային Միություն (1979), Րաֆֆի համալիր, Հայ ճարտարապետների միություն, Գործում են նաեւ «Ավետիսյան» եւ «Գրիգորիս» բուժարանները եւ այլ

կազմակերպություններն ու միությունները: 1954-ից գործում է ԶԲԸՄ մասնաճյուղը:

Թեհրանում ԶՀ դեսպանատան պաշտոնական բացումը տեղի ունացավ 1992 թ. դեկտ. 22-ին: Եկեղեցիներն են՝ Ս. Թադեոս-Բարդուղիմեոս (1768), Ս. Գեւորգ (1790-95), Ս. Մինաս (1852), Ս. Աստվածածին (1938-45), Ս. Հովհաննես Մատուռ (1936), Ս. Թարգմանչաց (1968), Ս. Սարգիս (1964-70), Ս. Ստեփանոս Մատուռ (1974), Ս. Գրիգոր Լուսավորիչ (1982), Ս. Վարդանանց . Կաթողիկե Ս. Գրիգոր Լուսավորիչ (1950-54), ավետարանական Ս. Հովհաննես (1946): Թեհրանի թեմի ստեղծումը տեղի է ունեցել 1944 թ. Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ:

Տպարանները՝ Ջավահայ տպարանը (1890), ապա Փարոսը (1901-1963), Սողերն (1922), Վերածնունդ (Բոբոխ, 1933-1953), Իրանչափ (1942-56), Ալվան (1943-1952), Ալիք (1950), Մասիս (1955), Անի (1956-80), Արաքս (1955), Նայիրի (1959), Ֆարաբի (1975): Մամուլը (Շավիղ 1894-97): Ներկայումս Ալիք օրաթերթ (1931-ից), Արաքս ամսագիր (1987-ից), Ապագա ամսագիր (1995-1999), Ապագա եռամսյա հանդես (2000-ից), Լույս երկշաբաթաթերթ (2000-ից), մինչ այժմ (2000 թ.) 56 ամսուն տպագիր եւ 34 ամսուն ձեռագիր կամ լուսապատճենավորված մամուլ է հրատարակվել:

ԱՔԱԴԱՆ քաղաքի հայ համայնքը սկզբնավորվել է 1909-ին, երբ Անգլոիրանական նավթային ընկերություններում ծառայության են անցել Չարմահալում, Նոր Ջուղայում, Թեհրանում եւ Թավրիզում բնակվող մի խումբ հայեր: Առաջին համաշխարհային պատերազմի (1914-18) ընթացքում նրանց են միացել Արեւմտյան Հայաստանից, մասնավորապես Վանից գաղթածները: Հայերի թիվն աճել է նաեւ հետագայում 1923-ին կազմելով 400, 1923ին՝ 610, 1938-ին՝ 2 հզ., 1969-ին՝ 5 հզ: Հետագա տարիներին նրանց թիվը նվազել է: Հիմնականում զբաղված էին նավթարդյունաբերության, ինչպես նաեւ առեւտրի մեջ: Համայնքն ուներ եկեղեցի, վարժարան, մարզական ակումբ, «Գուսան» երգչախումբը: Դպրոցը («Աղաբ») հիմնվել է 1949 թ.: Աբադանում լույս է տեսել 3 ամսուն մեքենագիր մամուլ: Իրան-Իրաք պատերազմից(1980)

հետո հայերը ամբողջությամբ հեռացան Աբադանից մյուս քաղաքներ և արտասահման:

ԹԱՎՐԻՋՈՒՄ հայերի հաստատվելու տարեթվի մասին ստույգ տեղեկություններ չկան: Հայտնի է, սակայն, որ XII դ. սելջուկ նվաճողները հազարավոր հայեր են գերեվարել ու բնակեցրել Իրանում, այդ թվում նաեւ Թավրիզում: Եւրոպացի ճանապարհորդներ Մարկո Պոլոն (1271), Գոնգալեսը (1403), Կանտարինին (1476) վկայում են, որ XIII-XV դդ. այստեղ եղել է մեծաթիվ եւ բարգավաճ հայ համայնք: 1334-ին Թավրիզում գրված հայկական մի ձեռագրի հիշատակարանում հիշվում է 2 եկեղեցի՝ Ս. Սարգիս եւ Ս. Աստվածածին, իսկ 1345-ի հայկական մեկ այլ ձեռագրի հիշատակագիր Թավրիզը համարում է ոչ միայն պարսիկների, այլեւ հայերի մայրաքաղաք: Թավրիզահայերի թիվը նվազել կամ աճել է երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների (թուրք-պարսկական պատերազմներ, շահ Աբբաս Ա-ի բռնագաղթ, միջՖեոդալական արյունահեղ կռիվների եւ այլն) համեմատ: 1830-ին Թավրիզում եղել է ընդամենը 40 տուն հայ (Թավրիզահայերից շատերը 1829-30-ին գաղթել են Արեւելյան Հայաստան):

XIX դ. 2-րդ կեսին Իրանի կառավարությունը, ելնելով երկրի տնտեսական եւ քաղաքական շահերից, որոշ արտոնություններ է շնորհել իրանահայ հայմայնքներին. թավրիզահայ համայնքը եւս ստվարացել է: XIX դ. ծերջին եւ XX դ. սկզբին քաղաքի հայ բնակչության թիվը հասել է մոտ 5500-ի: 1946-ին զգալի թվով թավրիզահայեր հայրենաժողարձվել են Խորհրդային Հայաստան: 1977-ին Թավրիզում բնակվել է շուրջ 6 հզ. հայ: Ներկայումս էլ (1999) հայերի թիվը գրեթե 2 հզ. է:

Թավրիզը Ատրպատականի հայոց թեմի կենտրոնն է: Տեղի առաջին հայկական դպրոցները գործել են եկեղեցուն կից (հիշատակություն կա 1670-ից): 1835-ին բացվել է Ներսիսյան (1875-ից Արամյան) դպրոցը, 1875-ին՝ Հայկազյանը, 1879-ին՝ երկու իգական դպրոցներ, որոնք կոչվել են Աննայան (1886-ից): Դպրոցները գործում են ցայսօր՝ Հայկազյան (1882)- Թամարյան (1895)- Մ. Սահակյան ընդհանուր անվամբ: 1909-

36-ին գործել է Թեմական-կենտրոնականը: Կան նաեւ Կաթողիկէ եւ Ավետարանական հայկական դպրոցները: Քաղաքում առաջին հայկական տպարանը հիմնավորվել է 1889-ին, հայերեն առաջին թերթը («Գործ») լույս է տեսել 1903-ին (առ այս օր լույս է տեսել 16 ամուսն տպագիր եւ 24 ամուսն ձեռագիր եւ մեքենագիր պարբերական):

Թավրիզում ազգային-մշակութային կյանքը կազմակերպել եւ ղեկավարել են Թավրիզի լսարանական ընկերություն (1898), Ատրպատականի հայուհյաց բարեգործական միացյալ ընկերությունը (1901), Կուլտուրական միությունը (1916), ՀՕՄ-ը (1926) եւն: Առաջին հայ թատերական ներկայացումը այստեղ տրվել է 1879-ին: Թավրիզեցի էր պատմիչ Առաքել Դավրիժեցին:

ՆՈՐ ԶՈՒՂԱ հայկական գաղթավայրը հիմնադրել են Աբբաս Ա շահի կազմակերպած բռնագաղթի հետեւանքով Իրանի Սպահանի նահանգ քշված Զուղայի հայերը, XVII դ. սկզբին, Ջայանդերուդ գետի ափին՝ Սպահան քաղաքի մոտ: Նպատակ ունենալով հայ վաճառականների միջոցով ընդլայնել Իրանի առեւտրական եւ քաղաքական կապերը օտարերկրյա պետությունների հետ՝ Աբբաս Ա շահը Ն.Ջ.-ին շնորհել է արտոնություններ («Արքունի Խասսերին» վերապահվող իրավունքներ): Ունեցել է ինքնավարություն, որն իրականացրել է քալանթարը (քաղաքագլուխ), դատական գործերը վարել է քեդխուդան (քալանթարի տեղակալը): Կարճ ժամանակում Ն.Ջ. բարգավաճել է, արդեն 1620-ական թթ. ունեցել է ավելի քան 30 հզ. բնակիչ, դարձել երկրի առեւտրական կապիտալի կենտրոն: Նոր Զուղայեցի հայ վաճառականները հանդես են եկել որպես Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջազգային առեւտրա միջնորդներ: 1617-ին Աբբաս Ա չեղյալ է համարել Անգլիայի հետ կնքված առեւտրական պայմանագիրը, ամբողջությամբ Ն. Ջ.-ի հայ վաճառականներին հանձնել իրանական հում մետաքսի արտահանման մենաշնորհը: XVII դ. կեսին Ն.Ջ.-ի հայ վաճառականները ստեղծել են «Նոր Զուղայի հայ առեւտրական ընկերությունը»: Տնտեսական գործունեությամբ

զուգընթաց, նրանք հաճախ կատարել են նաեւ դիվանագիտական հանձնարարություններ:

Գաղութահայ հասարակությունը չի եղել միատարր, զգալի թիվ են կազմել միջին եւ չքավոր խավերը, որոնք հիմնականում զբաղվել են արհեստագործությամբ (մշանավոր են եղել ոսկերիչները, գորգագործները, կերպասագործները, ներկարարները եւն): Ն.Ջ.-ի հայ արհեստավորների սոցիալական բողոքի դրսեւորումները էր 1630-40-ական թթ. դերձակ թումիկի եւ Սեւ Պետրոսի գլխավորությամբ ծագած աղանդավորական շարժումը: 1670-80-ական թթ. գաղութն աստիճանաբար անկում է ապրել՝ Իրանի տնտեսական ճգնաժամի, ուժեղացած ազգային, կրոնական հալածանքների պատճառով: 1722-ի աֆղանների արշավանքի ժամանակ Ն.Ջ. ավերվել է, հայերը գաղթել են Յնդկաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Յուգոսլավիա, Ռուսաստան եւ այլուր:

XVII-XVIII դդ. Ն.Ջ. եղել է հայկական մշակույթի կարեւոր կենտրոն: 1630-ական թթ. Խաչատուր Կեսարացին հիմնել է դպրոց (դասավանդվել է երաժշտություն, պոետիկա, քերականություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ եւն), որը ժամանակակիցները կոչել են «համալսարան»: 1636-ին հիմնադրվել է տպարան (Իրանում առաջինը): Նշանակալի դեր է խաղացել նաեւ Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը, որտեղ աշակերտներին սովորեցրել են եւրոպական լեզուներ եւ «վաճառականության արվեստ»: Վանքին կից բացվել է մատենադարան, որտեղ հավաքվել են բազմաթիվ հայերեն ձեռագրեր: Մեծ զարգացման է հասել որմնանկարչությունը, գեղանկարչությունը, մանրանկարչությունը, ճարտարապետությունը, աշուղական պոեզիան:

Ն.Ջ. եղել է իրանաբնակ (բացառությամբ Ատրպատականի), իսկ հետագայում նաեւ հնդկաստանաբնակ հայերի կրոնական կենտրոնը: XIX-XX դդ. մնացել է որպես թեմական եւ մշակութային կենտրոն: XIX դ. 30-ական թթ. Ն.Ջ.-ում բնակվել է շուրջ 4 հզ. հայ: 1858-ին հիմնվել է Օրիորդաց դպրոցը, 1880-ին մի շարք դպրոցներ միավորվել եւ կազմել են «Ազգային կենտրոնական դպրոցը»: Ն.Ջ. դպրոցները՝ Ս. Ստեփանոս եկեղեցուն կից դպրոց (1833), Կատարինյան

(օրիորդաց, 1854, առաջինը Իրանում), Գեորգ Քանանյան իգական դպրոց ու մանկապարտեզ (1901-05):

Մամուլ՝ Ընկեր (1920), Ն.Ջ. Աւետաբեր (1906-11), Ն.Ջ. Լրաբեր (1904-8), եւ 10 ամուն ձեռագիր եւ մեքենագիր մամուլ:

1905-11-ի իրանական հեղափոխությունից հետո աշխուժացել է Ն.Ջ.-ի մշակութային կյանքը: 1904-8-ին հրատարակվել է «Նոր Ջուղայի Լրաբեր» ամսաթերթը: Կառուցվել է թանգարան-մատենադարանի շենքը (1905): 1930-ական թթ. ստեղծվել են ազգային ակումբներ, կազմակերպվել երգչախմբեր: 1946-ին սկսվել է Ն.Ջ.-ի հայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան: 1952-ին Ն.Ջ.-ում բնակվել է 4 հզ. 675, 1958-ին՝ 5 հզ., 1969-ին՝ 8 հզ., 1979-ին՝ 10 հզ. հայ: Ներկայումս (1999) Նոր Ջուղան Սպահանի թաղամասերից է: Տեղի հայության թիվը շուրջ 8 հզ. է, որը գնալով նոսրանում է: Հիմնականում զբաղվում են արհեստներով, տնայնագործությամբ, զգալի թիվ են կազմում մանր ձեռնարկատերերն ու առեւտրականները: Համայնքի ազգային-մշակութային կյանքում կարեւոր դեր են խաղում մտավորականները:

ԵԿԵՂԵՑԻ

Իրանահայ համայնքի ներքին խնդիրների կարգավորումը հիմնված է կրոնաեկեղեցական ինքնավարության վրա, որն իրականացվում է գոյություն ունեցող թեմերի շրջանակներում: Մինչեւ XX դ. կեսը, Իրանում եղել է երկու թեմ՝ Ատրպատականի եւ Իրանա-հնդկական (Նոր Ջուղայի): 1944-ին կազմավորվել է Թեհրանի թեմը: Մինչեւ դարասկզբի սահմանադրության ընդունումը հայերը ճանաչվել են որպես ազգային փոքրամասնություն, նրանց իրավունքները պահպանվել են պարսից շահերի եւ այլ իշխողների հրովարտակներով: Մինչեւ XX դ. սկիզբը թեմերը միափեծան ղեկավարել են թեմակալ առաջնորդները, սակայն դարասկզբին համայնքի առաջադիմական ուժերի ճնշման տակ մշակվել եւ ընդունվել են թեմական կանոնադրություններ, որոնք սահմանափակել են

առաջնորդների իշխանությունը: Ներկայումս համայնքի թեմերն իրենց գործունեությունն իրականացնում են հայ առաքելական եկեղեցու կանոնների ու ավանդույթների, իրենց կանոնադրությունների հիման վրա գործող վարչական մարմինների որոշումների համաձայն:

Իսլամական Սահմանադրության ընդունումից հետո հայերն ազգային մյուս փոքրամասնությունների նման հռչակվել են կրոնական փոքրամասնություն: Չնայած վաղուց ի վեր իրանահայ թեմերը պետության կողմից դիտվել են որպես ազգային-կրոնական հաստատություններ, միայն 1967-ին են դրանք պաշտոնապես ճանաչվել որպես կրոնամշակութային, բարեգործական ընկերություններ եւ իրավական մարմիններ:

Թեմական խորհուրդները կարգավորում են միայն Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդների ներքին կյանքը: Հայ կաթոլիկներն ու բողոքականները ունեն իրենց եկեղեցիները եւ առաջնորդարանները: Թեհրանի հայ կաթողիկե համայնքը ձեւավորվել է 1934-ին, ներկայումս ընդգրկում է մոտ 1200 հոգի: Այստեղ է գտնվում նրանց պատրիարքական փոխնորդությունն ու առաջնորդարանը: Իրանահայ կաթոլիկների մյուս կենտրոնը Թավրիզն է, որտեղ 1900-ին գործել է Լազարյան լատին միաբանության կազմակերպությունը: 1910-ից ունեն իրենց եկեղեցին (տեղի հայ կաթոլիկների թիվը հասնում է 100-ի):

Իրանահայ բողոքականների կենտրոնը նույնպես Թեհրանն է: Վարչական կառուցվածքով անկախ է, սակայն կցված է Իրանի ավետարանական եկեղեցիների միությանը: 1950-ական թթ. սկզբից ունեն համայնքի ընտրովի խորհուրդ, որը տնօրինում է հանրային, կրթական, կրոնական եւ այլ հարցեր: Հայ բողոքականների թիվը Թեհրանում հասնում է 200-ի, ամբողջ երկրում՝ 2500-ի: Մոտ 250 հոգուց բաղկացած համայնք գոյություն ունի նաեւ Նոր Ջուղայում, որտեղ կա նաեւ ժողովարան (1875-ից) եւ վեցամյա դպրոց: Որոշակի թվով հայ Գալստականներ (Շաբաթականներ) իրենց ժողովատեղիներով գտնվում են Իրանում: Համեմատաբար փոքր թիվ են կազմում հայ Ուղղափառները, Ունիթորները, Կարմեղյանները եւ «եհովայի վկաները»:

Հայ Առաքելական եկեղեցին իրանում ներկայումս ունի երեք թեմ՝ Ատրպատականի, Թեհրանի եւ Սպահանի:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄԸ հնագույնն է: Ընդգրկում է Ատրպատականի տարածքը (Արմ. եւ Արլ. Ադրբեջան նահանգներ): Ատրպատականում հայ առաքելական թեմերի մասին հիշատակություն կա դեռեւս XII դ.-ից: Մինչեւ 1833-ը թեմի կենտրոնը եղել է Արտազի (ներկայումս Մակու) Ս.Թեդեոս Առաքյալի վանքը: 1833-ին Ատրպատականի հայոց առաջնորդ Նիկողայոս Կարբեցի եպիսկոպոսը թեմի կենտրոնը տեղափոխել է Թավրիզ: Առաջնորդարանը տեղավորված է Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցու բակում: Մինչեւ 1956-ը ենթարկվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, այնուհետեւ՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: XX դ. սկզբին թեմի տարածքում բնակվել է ավելի քան 30 հզ. հայ, հետագայում հայրենադարձության հետեւանքով նրանց թիվը նվազել է եւ 1970-ական թթ. վերջին հասել 17 հզ.-ի:

Թեմի տարածքում կա շուրջ 180 եկեղեցի, որոնցից ներկայումս կանգուն են 40-ը: Նշանավոր են Արտազի Ս. Թադեոս Առաքյալի (VI-IX դդ.) եւ Ս. Ստեփանոս նախավկայի (VII-IX դդ.) վանքերը, Թավրիզի Ս. Աստվածածին) 1782 եւ Ս. Սարգիս (1845) եկեղեցիները, Սալմաստի գավառի Ղալասար գյուղի Ս. Սարգիս եկեղեցին (1806), Խոյի Ս. Սարգիս (1120) եկեղեցին, եւն: Թեմի բարձրագույն օրենսդիր մարմինը չորս տարով ընտրվող Թեմական պատգամավորական ժողովն է բաղկացած 17 անդամից: Պատգամավորական ժողովն ընտրվում է 7 հոգուց բաղկացած Թեմական Խորհուրդը, որի նախագահը թեմակալ առաջնորդն է: 1967-ին Ատրպատականի Առաջնորդարանը եւ Թեմական Խորհուրդը պաշտոնապես ճանաչվել են որպես կրոնամշակութային եւ բարեգործական ընկերություն եւ արձանագրվել «Ատրպատականի ընդհանուր հայության Առաջնորդարանի Խորհուրդ» անունով: 1833-ին Թավրիզ տեղափոխվելուց ի վեր թեմի ամենամշանավոր առաջնորդը Ներսես Արքեպիսկոպոս Մելիք Թանգյանն էր (ղեկավարել է 1913-48-ին), այնուհետեւ առաջնորդի տեղապահ Բագրատ ավագ քահանա

Մելքոնյանը: Ներկայումս (2000) թեմը գլխավորում է Նշան Ծ. Վարդապետ Թովուզյանը:

ՍՊԱՀԱՆԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԻՐԱՆԻ ՀԱՅՈՑ

ԹԵՄԸ (մինչև 1960-ը՝ Իրանա-Հնդկաստանի Հայոց թեմ) իրանահայության հնագույն թեմերից է: Ստեղծվել է 1605 թ. Շահ Աբբասյան բռնագաղթի հետեւանքով: Նախապես կոչվել է *Սպահանի* կամ *Նոր Ջուղայի* թեմ: Ընդգրկել է Իրանի ամբողջ տարածքը, բացառությամբ Ատրպատականի թեմի տարածքի: Հետագայում, երբ նրան են ենթարկվել Հնդկաստանի, ճավայի եւ այլ հայկական համայնքներ, կոչվել է Իրանա-Հնդկաստանի թեմ: Մինչև 1944-ը Արաքը եւս նրա մասն է կազմել: 1944-ին նրանից անջատվել է Թեհրանի թեմը, իսկ 1958-ին՝ Հնդկաստանն ու ծայրագույնը Արեւելքը, սակայն թեմը շարունակել է պաշտոնապես կոչվել Իրանա-Հնդկաստանի հայոց թեմ: Նույն ժամանակ (1958 թ.) էլ թեմը անջատվել է Ս. Էջմիածնից եւ անցել Մեծի Տանն Կիրիկիո կաթողիկոսության ենթակայությանը:

Թեմի հիմնադրման օրվանից առաջնորդական կենտրոնը գտնվում է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում: Առաջին առաջնորդը Մեսրոպ Եպիսկոպոսն էր (1605-1620): XX դ. սկզբին մշակվել եւ ընդունվել է թեմական կանոնադրություն: 1923-ին կազմվել է Նոր Ջուղայի համայնական խորհուրդը, որը կրոնական խորհրդի եւ թեմակալ առաջնորդի հետ վարել է թեմի ներքին գործերը: 1930-ական թթ. սկզբից, ի տարբերություն Թեհրանի եւ Ատրպատականի թեմերի, հարավային շրջանների համայնքները իրենց վարչահասարակական գործունեությամբ դարձել են անկախ, չենթարկվելով Նոր Ջուղայի թեմին: Ներկայումս թեմի տարածքի բնակչությունը խիստ նոսրացել է. հայերը լքել են Լնջան, Ալինջան, Չարմահալ, Քյարվանդ գավառները: Թեմի ներկա վարչական սահմանների մեջ մտնում է Սպահանը (որի մեկ շրջանն է Նոր Ջուղան), Շահինշահի նորակառույց քաղաքը, Փերիայի գավառը, Շիրազն ու Խուզիստանը: Թեմի տարածքում կա ավելի քան 105 եկեղեցի, որոնցից կանգուն են 30-ը: Նշանավոր են՝ Ս. Ամենափրկիչ վանքը (1655), Ս. Բեթղեհեն (1628), Ս. Գեւորգ (1611), Ս. Աստվածածին (1613),

Ս. Ստեփանոս (1614), Ս. Սարգիս (1659) եւ Ս. Մինաս (1659) եկեղեցիները: Թեմի ներկայիս (2000 թ.) առաջնորդն է Կորյուն Արքեպիսկոպոս Պապյանը:

ԹԵՅՐԱՆԻ ԹԵՄԸ իրանահայության ամենաերիտասարդ թեմն է: Ստեղծվել է 1944-ին: Ընդգրկում է Թեհրանի իր շրջակայքով, Մեշհեդը, Գորգանը, Սարին, Ռեշտը, Էնզելին, Ղազվինը, Արաքը :

1940-ական թթ. կեսին թեմի բնակչության թիվը հասել է 45 հզ.-ի (որից 25 հզ.-ը բնակվել է Թեհրանում), իսկ 1970-ական թթ. վերջին՝ անցել է 150 հզ.-ից (95% -ը բնակվել է Թեհրանում): 1956-ին Թեհրանի թեմը իրանահայության մյուս թեմերի նման անջատվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եւ անցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայությանը: Առաջնորդարանը կառուցվել է 1970-ին՝ Ս. Սարգիս եկեղեցուն կից: Թեհրանի թեմի առաջին առաջնորդը Վահան Տ. վարդապետ Կոստանյանն էր, նրան փոխարինել է Ռուբեն Եպիսկոպոս Դրամբյանը: 1960-ից մինչեւ 1999 թ. թեմի առաջնորդը Արտակ Արքեպիսկոպոս Մանուկյանն էր, որը միաժամանակ Իրանի միջեկեղեցական խորհրդի նախագահն էր: Ներկայիս Առաջնորդն է Սեպուհ Եպիսկոպոս Սարգսյանը: Ըստ թեմի կանոնադրության, թեմակալ առաջնորդն ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից՝ առանց պաշտոնավարության ժամկետը սահմանելու: Բարձրագույն օրենսդիրը՝ Պատգամավորական ժողովն է, որն ընտրվում է 4 տարով: Անդամների 6/7-ը աշխարհիկ են, իսկ 1/7-ը՝ հոգեւորական: Պատգամավորական ժողովն իր կազմից 2 տարով ընտրում է 9-13 անդամից բաղկացած թեմական խորհուրդ, որը թեմի բարձրագույն գործադիր մարմինն է: Ներկայումս (1999) թեմական խորհրդի ատենապետն է դոկտ. Լեւոն Դավթյանը, փոխատենապետը՝ Ռուբիկ Կարապետյանը:

Թեմի տարածքում կա շուրջ 100 եկեղեցի: Կանգուն են 20-ը, որոնցից 8-ը՝ Թեհրանում: Հնագույնները՝ Ս. Բարդուղիմեոս, Ս. Գեւորգ, Ս. Աստվածածին, Ս. Թարգմանչաց, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Սարգիս, Ս. Մինաս, Ս. Վարդանանց, են:

ԴՊՐՈՑ

Դեռևս XVII դ. 30-ական թթ. Խաչատուր Կեսարացու նախաձեռնությամբ Նոր Ջուղայում բացվել է հայկական բարձրագույն դպրոց (կոչվել է նաեւ «համալսարան» կամ «ճեմարան»: Դասավանդվել են՝ քերականություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ, աստվածաբանություն, երաժշտություն: Իրանահայ համայնքում դպրոցներ գոյություն են ունեցել բոլոր եկեղեցիներին կից, սակայն առաջին աշխարհիկ դպրոցները ստեղծվել են XIX դ. կեսին (1833-ին՝ Նոր Ջուղայում, 1835-ին՝ Թավրիզում, 1870-ին՝ Թեհրանում): Առավել հայտնի են Նոր Ջուղայի, «Ազգային կենտրոնական» (1880), Թավրիզի «Արամյան» (1835), «Հայկազյան» (1882), «Թեմական կենտրոնական» (1909), Թեհրանի «Հայկազյան» (1870) դպրոցները:

1936-ին Ռեզա-շահ Փահրավիի կառավարությունը, վարելով «իրանացման» քաղաքականություն, փակել է բոլոր ազգային դպրոցները: Դրանք վերաբացվել են միայն 1942-43-ին, իսկ Թավրիզի հայկական դպրոցները պարապմունքները վերսկսել են միայն 1956-57-ին: Վերաբացումից հետո դպրոցներին պարտադրվել է պարսկերենով դասավանդում: Տնօրենները եւ ուսուցիչների մեծ մասը պարսիկներ էին: Հայոց լեզուն, պատմությունը եւ կրոնը դասավանդվել են ծրագրից դուրս:

1979-ի հեղափոխությունից հետո Թեհրանի կրթական եւ ընդհանուր վարչության 1981-ի շրջաբերականով բոլոր դպրոցները հայտարարվել են պետական: Սակայն կրոնական փոքրամասնություններն ունեն իրենց հատուկ դպրոցները, որտեղ այլ դպրոցների հետ համանման պայմաններ ունենալուց բացի, ծրագրից դուրս մայրենի լեզվով ուսուցանվում են լեզու եւ գրականություն, կրոնի դաստիարակություն, ոչ-մոսուլման աշակերտները կարող են նաեւ սովորել մյուս դպրոցներում:

Կրոնական փոքրամասնություններն ունեն մսուր-մանկապարտեզներ, ծերանոցներ եւ այլն, որոնց սեփականությունը ամբողջովին պատկանում է նրանց:

Վերացվել է նաեւ համայնքի սեփականատիրական իրավունքներն իր դպրոցների նկատմամբ: Հայկական դպրոցների մանկավարժական կազմը փոխարինվել է պարսիկ ուսուցիչ-ուհիներով ու տեսուչներով՝ վերջիններիս վերապահելով դպրոցների տնօրինությունը: Սակայն 2000-2001 ուսումնական տարվանից իվեր նշանակվում են նաեւ հայ տեսուչներ եւ փոխտեսուչներ: Թեհրանի հայկական ուսուցիչների աջակցությամբ եւ թեմի առաջնորդի ղեկավարությամբ 1981-1982 թթ. ուս. տարում Առաջնորդարանում հիմնվել են հայերեն դասընթացներ:

Երկրի տարբեր նահանգներում հայերենի կրթության վիճակը որոշակիորեն զանազանվում է Թեհրանի ազգային դպրոցներից: Շահինշահի քաղաքի կրթության վարչությունը արտոնել է հայկական դպրոցներին՝ պաշտոնական ծրագրի սահմաններում (բացի կրոնի համար նախատեսված ժամերից) ներառել նաեւ շաբաթական 3 ժամ հայոց լեզվի եւ գրականության հավելյալ ժամեր: Ռեշտ (Ռաշտ) քաղաքի «Մ. Ա. Հորդանանյան» ազգային դպրոցի եւ մանկապարտեզի աշակերտներն ու ուսուցչուհիները հայեր են. պետական ծրագրի հետ մեկտեղ ուսուցանվում են հայոց լեզու եւ կրոն: Բոլոր դպրոցներում ուսուցումն անվճար է: Ծրագրային առարկաներ դասավանդող ուսուցիչները վարձատրվում են պատության կողմից, իսկ ծրագրից դուրս հայոց լեզուն եւ կրոն դասավանդողներին վճարում է Առաջնորդարանը, որը եւ օժանդակ թոշակներ է ստանում աշակերտությունից:

2000 թ. Իրանում գործող ազգային դպրոցներից 25-ը եւ մանկապարտեզներից 3-ը կենտրոնացված են Թեհրանում:

ՍԱՄՅԱՆ ԴՊՐՈՑ հիմնադրվել է 1831-ին Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցուն կից, առաջնորդ Կարապետ Եպիսկոպոս Ջուղայեցու ջանքերով, որը կոչվել է «Ամենափրկչյան ճեմարան», դպրոցը 1833 թ. շարունակում է մադրասաբնակ Գրիգոր Սամյանի նվիրատվությամբ եւ կոչվել նրա անունով: 1831 թ. (2.5 ամիս միայն) եւ 1834-36-ին դպրոցում ուսուցչություն է արել Մեսրոպ Թաղիադյանը: 1837-ին փակվել է: Այս դպրոցը շարունակել է իր գոյությունը մինչեւ 1853-ը, երբ Սամյան առևտրական տունը սնանկացել է:

Աշակերտների թիվը եղել է մոտ 80: Գլխավոր առարկաներն էին՝ հայոց լեզու, թվաբանություն, վայելչագրություն: Ուսուցանել են նաև աշխարհագրություն, անգլերեն և պարսկերեն: Տարբեր տարիներին դպրոցում դասավանդվել են Գեորգ վարդապետ Տեր Հովսեփյանը, Տեր Ավետիս Տեր Ղազարյանը, Տեր Ստեփանոս Հարությունյանը, Կարապետ Ջորիաբյանը, Տեր Հովսեփ Տեր Գրիգորյանը և ուրիշները:

ԱՐԱՄՅԱՆ ԴՊՐՈՑ, երկսեռ, ազգային դպրոց (ութամյա): Հիմնվել է 1835-ին Թավրիզի Ղալա թաղամասի եկեղեցու բակում՝ Սահակ եպիսկոպոս Սաթունյանի նախաձեռնությամբ: Մինչև 1875-ը կոչվել է Ներսիսյան (Ներսես Շնորհալու անունով), հետագայում՝ իրանահայ մեծահարուստ Արամյանի անունով, որը մեծ օժանդակություն է ցույց տվել դպրոցին: Սկզբում արական դպրոց էր, 1887-ին տեղափոխվելով Թումանյանցիների միջոցներով կառուցված «Աննայան դպրոցի շենքը և միանալով օրիորդաց դպրոցի հետ, դարձել է երկսեռ և կոչվել «Արամյան-Աննայան» ազգային դպրոց: 1852-ին ունեցել է 60 աշակերտ, հաջորդ տարի՝ 100: Հետագայում աշակերտների թիվը հասել է 240-260-ի: Դասավանդվել են հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն լեզուներ և այլ առարկաներ: Ուսուցումը հայերեն էր:

Դպրոցի առաջին տեսուչը Տեր Հովսեփ քահանան էր, ուսուցիչները՝ Հակոբ վարժապետ Եղիազարյանը, Սարտիրոս վարժապետ Փափագյանը (հետագայում՝ Մերովբե քահանա Փափագյան) և ուրիշներ: Տարբեր տարիների տեսուչներ են եղել՝ Սամվել Գյուլդադյանը, Աբեղնագով Ալեքսանյանը, Վահան Բժշկյանը, Ալեքսան Տեր Վարդանյանը, Միքայել Ստեփանյանը և ուրիշներ: Դասավանդել են՝ Րաֆֆին, Հրաչյա Աճառյանը, հայագետ-լեզվաբան Մուշեղ Մուշեղյանը, իրանահայ անվանի կրթական գործիչներ- Հովսեփ Գասպարյանը, Հայրապետ Պանիրյանը, Տիգրան ԳալՖայանը, Լևոն Գրիգորյանը, Հայկ Աճեմյանը և ուրիշներ: Դպրոցը գործել է մինչև 1936-ը, երբ Ռեզա շահ Փահլավի հրամանով բոլոր ազգային դպրոցները փակվել են:

ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐԻՆՅԱՆ ԴՊՐՈՑ, տարրական, ապա միջնակարգ իգական ազգային դպրոց Նոր Ջուղայում: Հիմնադրվել է 1858-ին Ս. Կատարինյան մենաստանի՝ «Կուսանաց վանքի» տարածքում, ճավայաբնակ Մանուկ Հորդանանյանի նյութական միջոցներով (թեմակալ առաջնորդ Թադեոս արքեպիսկոպոս Բեկնազարյանի առաջարկությամբ): 1900-ին Մաղաքիա եպիսկոպոս Տերունյանի ջանքերով Նոր Ջուղայում, հնդկաստանում ճավայում կազմակերպված հանգանակության շնորհիվ Նոր Ջուղայի Չարսու թաղում կառուցվել է «Ս. Կատարինյան օրիորդաց դպրոցի» նոր շենք: 1892-ին միացել է Ազգային Կենտրոնականին եւ կոչվել Նոր Ջուղայի ազգային երկսեռ դպրոց: 1936-ին պետականացվել է, 1955-ին՝ կրկին ազգայնացվել: Բացման ժամանակ աշակերտուհիների թիվը 28 էր:

ՀԱՅԿԱԶՅԱՆ ԴՊՐՈՑ, միջնակարգ, երկսեռ ազգային դպրոց: Հիմնավորվել է 1878-ին Թեհրանի «Դարվազե Ղազվին» թաղամասում, արեւմտահայ մտավորականներ՝ պոլսեցի Միքայել Մարգարյան, տաճկահայ Կարապետ Բազիրկանյանի եւ Դամասկոսի Հովսեփ Գասպարյանի նախաձեռնությամբ: Սկզբնական շրջանում գտնվել է եկեղեցու բակում, 1884-ին կառուցվել է առանձին շենք 1903-ին մասնաճյուղ է բացել Հասանաբաղ թաղամասում: Մինչեւ 1906-07 թթ. եղել է արական, այնուհետեւ՝ երկսեռ: 1932-33 թթ. նախկին Նոր Ջուղայեցի եւ Հնդկաստանի բնակիչ, բարերար Դավիթ Դավթյանի նյութական օժանդակությամբ կառուցվեց այժմյան «Դավթյան» նոր շենքը (Միրզաքուլեք խան պող.), որը 1942 թվականից հետո կոչվեց Քուշեշ-Դավթյան: Դասավանդվել են՝ հայոց լեզու եւ գրականություն, պատմություն, պարսկերեն, ֆրանսերեն եւ այլ հանրակրթական առարկաները: Ուսուցումը մինչեւ ազգային դպրոցների փակումը (1936) եղել է հայերենով, վերաբեցումից հետո՝ պարսկերենով, իսկ հայերենն ուսումնասիրվել է պետական ծրագրից դուրս արտաժամյա:

ՀԱՅԿԱԶՅԱՆ ԴՊՐՈՑ, տարրական, ապա միջնակարգ, երկսեռ ազգային դպրոց: Հիմնվել է 1875-ին Թավրիզի

Լիլիավա թաղամասում՝ «Հայկազյան» եւ «Սեւան» առեւտրական ընկերությունների կողմից: 1879-ին այստեղ հիմնվել է նաեւ օրիորդաց դպրոց: 1895-ին այդ դպրոցները տեղափոխվել են Թումանյան եղբայրների կառուցած նոր եռահարկ շենքը (13 դասարաններով եւ սրահով), որը կոչվել է նրանց վաղամեռիկ քրոջ՝ Թամարի անունով: Այդ թվականից էլ սկսել է կոչվել «Հայկազյան-Թամարյան»: XX դ. խկզբին Իրանի միակ միջնակարգ ուսումնական հաստատությունն էր: 1936-ին բոլոր ազգային դպրոցների նման փակվել է. սկսել է գործել միայն 1956-57 ուս. տարում: Այդ շրջանից սկսած Թավրիզի ազգային դպրոցները կոչվել են «Հայկազյան-Թամարյան-Մ. Սահակյան» տարրական եւ միջնակարգ երկսեռ դպրոցներ (կրթության նախարարությունում հայտնի էին «Ասադ» անունով): Դասավանդվել են բնական, հասարակական եւ տեխնիկական գիտություններ, լեզուներ, մեծ ուշադրություն է դարձվել մանկավարժությանն ու հովեբանությանը: Մինչեւ 1936-ը ուսուցումը եղել է հայերեն, այնուհետեւ՝ պարսկերեն: Հայոց լեզուն եւ կրոնը դասավանդվել են արտաժամյա, պետական ծրագրից դուրս: Տարբեր տարիների «Հայկազյան-Թամարյան» դպրոցի տեսուչներ են եղել՝ Հովնան Դավթյանը, Գաբրիել Պապյանը, Սոււնյանը, Տիգրան Ռաշմաճյանը, Միքայել Ջարաֆյանը, Նիկոլ Սարգսյանը, Կարապետ Պիոնյանը, Գասպար Հակոբյանը, Արմենակ Աֆթանդիրյանը: 50-ական թթ. դպրոցի վերաբացումից հետո պատական տեսուչներ նշանակվել են միայն պարսիկներ: XIX դ. վերջին- XX դ. խկզբին դպրոցում դասավանդել են իշխան Հովսեփ Արղությանը, Սարգիս Օհանջանյանը, Խաչատուր Գրիգորյանը, Մելքոն Հակոբյանը, Սարգիս Հարությունյանը, Սուշեղ Հովհաննիսյանը, Հայկ Աճեմյանը, Արամ Ալեւոյանը եւ ուրիշներ:

ԱԶԳԱՅԻՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ, տարրական, ապա միջնակարգ ազգային դպրոց: Հիմնադրվել է 1880-ին Նոր Զուղայի Չարսու թաղամասում, Իրանա-հնդկական թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Հովհաննիսյանի նախաձեռնությամբ: Միավորել է մինչ այդ Նոր Զուղայում գործող երեք դպրոցները՝ Հ. Աբգարյանի հիմնած «Հայկական

հայրենասիրականը», Մարիամ Հարությունյանի եւ Մարգար Սուքիասյանի հիմնած դպրոցները: 1892-ին ընդգրկել է նաեւ «Կատարահիման» իգական դպրոցը՝ կոչվելով «Նոր Ջուղայն Ազգային Երկսեռ դպրոց»: Սակայն Ազգային կենտրոնականը հիմնականում եղել է արական տարրական դպրոց: 1936-ին, երբ ազգային դպրոցները պետականացվել են, վերոհիշյալ դպրոցները սկսել են կոչվել «Շահ Աբբաս Մեծ» անունով: Հետագայում կրկին դարձել են ազգային: 1970-70 թթ. Նոր Ջուղայի բոլոր ազգային դպրոցներում աշակերտության թիվը հասել է 1454-ի, ուսուցչուհիները՝ 100-ի (38-ը հայ, 61-թ՝ պարսիկ): Մինչեւ 1936-ը դասավանդումը եղել է հայերեն, պետական ծրագիր մտցնելուց հետո՝ մայրենի լեզուն սահմանափակվել է: Դասավանդվել են՝ հայերեն, հայոց պատմություն, կրոն, անգլերեն, Ֆրանսերեն, պարսկերեն, հանրահաշիվ, երկրաչափություն, Ֆիզիկա, քիմիա, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, երաժշտություն, նկարչություն եւն: Մինչեւ XIX դ. վերջը Նոր Ջուղայի ազգային դպրոցների ղեկավարումն իրականացրել է Առաջնորդը կամ հոգաբարձությունը, հետագայում՝ հատուկ նշանակված տեսուչներ (բոլոր դպրոցները ղեկավարվել են մեկ տեսչի կողմից): 1892-1936-ին տեսուչներն են եղել Մարտիրոս Հարությունյանը, Տեր Վարդան քահանա Վարդանյանը, Բագրատ վարդապետ Վարդազարյանը, Արմենակ Գերասիմյանը, Հայկ ժամկոչյանը, Ռուբեն Աբրահամյանը, Տեր Գարեգին քահանա Կիրակոսյանը, Ասլան Շահնազարյանը, Հակոբ Տեր Հակոբյանը, Մկրտիչ Աբգարյանը: 1936-ից հետո տեսուչի պաշտոնում նշանակվել են պարսիկներ, 1955-ից՝ երբեմն նաեւ հայեր: Դպրոցներն ունեցել են գրադարան, երգչախումբ, պարախումբ, կազմակերպել են թատերական ներկայացումներ:

ԳԵՎՈՐԳ ՔԱՆԱՆՅԱՆ ԴՊՐՈՑ, միջնակարգ ազգային դպրոց: Հիմնադրվել է 1901-1905-ին Նոր Ջուղայի Չարսու թաղամասում, Վարվառե Քանանյանի բարերարությամբ, ի հիշատակ ամուսնու՝ Լազարյան ճեմարանի նախկին տեսուչ Գեւորգ Քանանյանի: 1901-ին բացվել էլ ցայսօր գործում է Գեւորգ Քանանյանի ազգային մանկապարտեզը: 1970-80 ուս.

տարում միջնակարգի երկսեռ աշակերտության թիվը՝ 229 էր, ուսուցիչների թիվը՝ 34 (որից հայ՝ 8-ը):

ԹԵՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ, միջնակարգ, երկսեռ, ազգային դպրոց: Հիմնադրվել է 1909-ին Թավրիզում, թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր Մկրտչյանի ջանքերով, կովկասաբնակ բարերարներ Ջոհրաբյանների կտակով եւ ժողովրդական հանգանակությամբ զոյացած միջոցներով: Գործել է մինչեւ 1936 թ., տվել է հարյուրավոր շրջանավարտներ: Այստեղ են իրենց կրթությունը շարունակել «Արամյան-Աննայան» եւ «Հայկազյան-Թամարյան» տարրական դպրոցների աշակերտ-ուհիները: Դասավանդվել են լեզուներ (հայերեն, պարսկերեն, անգլերեն), հայերենի քերականություն, հայոց պատմություն, մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա եւ այլ առարկաներ: Ուսուցումը հայերեն էր: Որպես տեսուչ աշխատել են՝ Երիցյանը, Հովման Դավթյանը, Կարապետ Պինոյանը, Գասպար Հակոբյանը, Հայրապետ Պանիրյանը, կարճ ժամանակով՝ 1917-19-ին, Հ. Ճերմակը եւ Մամբրե Մկրյանը: Դասավանդել են՝ Հ. Աճառյանը, Տեր Հակոբյանը (Հ. Իրազեկ), Ալեքսան Հովհաննիսյանը, Լեւոն Գրիգորյանը, Վարոս Բաթայանը, Հովսեփ Թադեւոսյանը, Եր. Աֆթանդիլյանը, Սոֆի Ամատունին, Նվարդ Տեր Ստեփանյանը, Արամ Ալշուշյանը եւ ուրիշներ:

ՔՈՒՇԵՇ-ԴԱՎԹՅԱՆ, միջնակարգ, երկսեռ, կիսապետական դպրոց Թեհրանում: Նախապես բացվել է Հայկազյան դպրոցի մասնաճյուղ Քուշեշ անունով: 1932-33-ին հնդկահայ Դավիթ Դավթյանի միջոցներով վերակառուցվել եւ կոչվել է նրա անունով՝ Դավթյան: 1957-58-ին հայ բնակչության միջոցներով կառուցվել է դպրոցի նոր քառահարկ շենքը, որն իր ուսումնական հարմարություններով լավագույնն է քաղաքում: 1954-ին բարերար Մարգար Սարգսյանի նվիրատվությամբ կառուցվել է Մարիամյան դպրոցը, որի նորակառույց շենք են տեղափոխվել Քուշեշ-Դավթյան դպրոցի իգական դպրոցները (այժմ չի աշխատում), 1971 թ. կառուցվեց Քուշեշ (Վաչե Հովսեփյան) տարրական դպրոցը, Ս. Աստվածածին եկեղեցու հարեւանությամբ:

Դասավանդվում էին պետական ծրագրով նախատեսված հանրակրթական առարկաներ՝ պարսկերեն լեզվով: Հայոց լեզուն եւ կրօնը դասավանդվում են արտաժամյա: Ուսուցիչները հիմնականում պարսիկներ են, կան նաեւ հայեր:

ԹՈՒՆՅԱՆ դպրոցներ, հայկական միջնակարգ կրթական հաստատություն թեհրանում: Հիմնադրվել է 1957-ին: 1968-ին Գ. Կյուլպենկյան հիմնակրության նպաստով կառուցվել է նոր շենք: Այժմ (2000 թ.) ունի նաեւ ուղեցույց բաժանմունք (3 տարի) եւ միասեռ (օրիորդաց) է: Հիմնադրման տարում ունեցել է 140 աշակերտ, 1999 թ.-ին՝ 368 տարր. եւ 444 ուղեցույց:

ԻՍՐԱՅԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ ԴՊՐՈՑ, տարրական եւ ուղեցույց, երկսեռ ազգային դպրոց: Հիմնադրվել է 1958-ին թեհրանի Հեշմաթե թաղամասում՝ սարմաստեցի ազգային բարերար Իսրայել Սահակյանի միջոցներով: Տարրական բաժնի հիմնադիրը եւ արտոնատերն էր Ջիբրայել Սահակյանը, աղջիկների բաժինը՝ Դանիել Սահակյանը: 1958-ի նոյմբերի 29-ին դպրոցի եռահարկ շենքի բացումից հետո այստեղ է փոխադրվել 1948-ից Հեշմաթե թաղամասում գործող Շահազիզ դպրոցն իր երկսեռ աշակերտներով: Դասավանդումը կատարվում է պետական ծրագրով (հանրակրթական առարկաները պարսկերեն լեզվով, հայերենը՝ արտաժամյա):

Այժմ թեհրանում աշխատում են հատելյալ հայկական դպրոցները. Քուշեշ-Դավթյան հիմն. (1870), Քուշեշ մանկապարտեզ (1942), Սահակյան (1958), Ռոստոմ (1952), Արաքս (1954), Նայիրի օրիորդաց (1955) տղայոց (1969), Արարատ (1956), Թունյան (1957), Գուլբենկյան (1966), Գոհար (1949), Ալիշան (1962), Նոր Անի (1963), Շանթ (1964), Իրան Փիրուզ (1966), Թովմասյան (1970), Մարի Մանուկյան, Սողոմոնյան, Մարիամ հաստատություն, Ահարոնյան եւ Սասուն մանկապարտեզներ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Իրանում հայկական առաջին հասարակական եւ քաղաքական կազմակերպություններն ու միությունները ծեւավորվել են XIX դ. վերջին-XX դ. սկզբին: Միակ քաղաքական կուսակցությունը Հայ Հեղափոխական Դաշնակցությունն է, որը ներկայումս էլ դերակատար է համայնքի հասարակական կյանքում: Երկրում գործում են 30-ից ավելի հայկական կազմակերպություններ ու միություններ, որոնց գործունեության գլխավոր առանցքը հայապահպանությունն է:

Կրթադաստիարակչական լայն գործունեություն են ծավալել «Ատրպատականի հայուհյաց բարեգործական միացյալ ընկերությունը» (1901-ից), Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերությունը (1905-ից), «Փերիայի կրթասիրաց միությունը» (1928-ից), «Չարմահալի հայ ուսումնասիրաց միությունը» (1930-ից) եւ այլ կազմակերպություններ: Ավելի ուշ՝ իրենց հայապահպան գործունեությունն են սկսել «Հայ Համալսարանականների միությունը» (1943), «Մշակույթ» միությունը (1944), «Հայ մշակութային Արարատ կազմակերպություն» (1944) եւ այլն:

Իսլամական հեղափոխությունից հետո ստեղծվել են ԻԱՄՄ(1979),«Աբուլյան» (1980) միությունը (կարճ գործունեություն է ունեցել), «Սանահին», «Սարդարապատ» (1983) միությունները, հայրենակցական, կին, զրոհների, եկեղեցասերների, բժիշկների, ճարտարապետների սիւնություններ եւն:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՒՅՅԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1901-ին՝ Թավրիզի կականց բարեգործական ընկերության (1891), եւ Ատրպատական կանանց բարեգործական ընկերության (1895) միավորմամբ: Հիմնական նպատակն է բարեգործությունը եւ աջակցությունը Ատրպատականի հայերի կրթական գործին: 1894-97-ին լայն գործունեություն է ծավալել Վասպուրականից փախած գաղթականությանն ընդունելու եւ տեղավորելու, նրանց կարիքները հոգալու ուղղությամբ:

Ընկերությունն իր միջոցներով դպրոցներ եւ մանկապարտեզներ, ինչպես նաեւ արհեստանոցներ է բացել Թավրիզում, Ատրպատականի այլ վայրերում: XX դ. խկզբին ունեցել է 13 հաստատություն (մանկապարտեզ, արհեստանոց, դպրոցներ եւն): Հայապահպան կարեւոր գործ է կատարել հատկապես գյուղական շրջաններում, բացել դպրոցներ եւ երեխաներին մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորություն ընձեռնել: Կազմակերպության հիմնադիրներից եւ աչքի ընկնող գործիչներից էին՝ Իսկուհի Հակոբյանը, Շուշանիկ Մալինցյանցը, Մարիամ Նազարբեգյանը, Սաթենիկ Մատինյանը, Ամատունին (Մայրիկ) եւ ուրիշներ: Ընկերությունը ներկայումս չի գործում:

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1905-ին: Սկզբում կոչվել է «Կարմիր խաչ»: Գործունեությունը շարունակվել է մինչեւ 1921-ը:

Ներկայիս անունով վերաստեղծվել է 1930-ին: Նպատակը հանրային բարեգործությունն է: Ընկերությունը ստեղծել է հատուկ հիմնադրամ: Նրա ջանքերով է հիմնադրվել մայրաքաղաքի առաջին մանկապարտեզը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեծ օգնություն է ցույց տվել հայ գաղթականներին ու որբերին: 1936-ին, հայկական դպրոցների փակումից հետո, հայերեն մասնավոր դասընթացներ է բացել Թեհրանում եւ այլ քաղաքներում: Ներկայումս շարունակում է իր գործունեությունը:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒՅՈՒՆ (ՀՕՄ)

Ատրպատականի մասնաճյուղ, բարեսիրական կազմակերպություն: 1915-ին Թավրիզում հիմնվել է «Ատրպատականի կարմիր խաչ» միությունը, որը նպատակն է ունեցել աջակծել պատերազմի ժամանակ վիրավորված հայ զինվորներին, իսկ պատերազմից հետո՝ գաղթականներին իրենց բնակավայրում հաստատվելուն: 1926-ից միացել է ԱՄՆ-ի «Հայ կարմիր խաչ» կենտրոնի հետ եւ դարձել նրա մասնաճյուղը: 1944-ին «Հայ կարմիր խաչը» վերանվանվել է «Հայ օգնության միություն»: Ատրպատականի մասնաճյուղը եւս վերցրել է այդ անվանումը:

Միությունը լայն գործունեություն է ծավալել 1930-ին Սալմաստի երկրաշարժից տուժած հայությանը օգնելու ուղղությամբ: 1936-ին, հայկական դպրոցների փակումից հետո, հայ մանուկների համար կազմակերպել է մայրենի լեզվի դասընթացներ: 1947-48-ին հիմնել է մանկապարտեզ եւ 4 ժամյա դպրոց: Մինչեւ Ատրպատականի հայկական դպրոցների վերաբացումը (1956) զբաղվել է կրթական, բարեգործական աշխատանքներով: 1941-46-ին հազուստեղեն եւ դրամ է ուղղարկել Հայաստան:

Միության հիմնադիրներից եւ ակտիվ գործիչներից էին՝ Հեղինե Հակոբյանը, Աստղիկ Աֆթանդիլյանը, Աստղիկ Հակոբյանը, Մարի Մաթեոսյանը, Սրբուհի Սեթխանյանը եւ ուրիշներ:

1960-ական թթ. Թավրիզի մասնաճյուղի անդամների թիվը 86 էր, վարչությունը բաղկացած էր 7 հոգուց: Ուրմիայի մասնաճյուղն ուներ 48 անդամ:

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1915-ին Նոր Ջուղայում, գործնում է ցայսօր: Մինչեւ 1932-ը կոչվել է «Կարմիր խաչ»: Նպատանկ էր՝ օգնել չքավոր եւ անօգնական ընտանիքներին, հիվանդներին, որբերին, պատերազմից տուժած զինվորներին եւ նրանց ընտանիքներին, ինչպես նաեւ համագործակցել նման նպատակներ ունեցող հայկական եւ տեղական մյուս կազմակերպությանը: Միությունը ղեկավարում է 2 տարի ժամկետով ընտրված վարչությունը: 1960-ական թթ. ունեցել է 46 անդամ: 1970-ին Նոր Ջուղայում բացվել է միության ծերանոցը:

ՓԵՐԻԱՅԻ ԿՐԹԱՄԻՐԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1928-ին՝ Փերիայի ջուղայաբնակ երիտասարդների նախաձեռնությամբ: Նպատակն էր՝ օժանդակել Փերիայի գավառի հայաբնակ գյուղերի բնակչության կրթական մտավոր եւ բարոյական զարգացման գործին, նյութապես եւ բարոյապես աջակցել տեղի հայ դպրոցներին, քաջալերել այդ նպատակին ուղղված բոլոր ձեռնարկումները: Միությունը զավառի Նամակերտ, Ղարոբուն, Խոյզան, Բուլորան, Բժկերտ, Հադան եւ Հազարջրիք գյուղերում ունեցել է

մասնաճյուղեր, որոնք գոյատևել են մինչև 1950-ական թթ. իսկ Նամակերտի մասնաճյուղը գործել է ավելի երկար:

ՀԱՅ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ՉԱՐՄԱՅԱԼ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1930-ին Աբադանում՝ չարմահացիների՝ Մարտիրոս Մկրտումյանի, Սիմոն Իսրայելյանի, Մնացական Մադաթյանի, Մելքոն Իսրայելյանի, Սիմոն Ավետիսյանի եւ Սարգիս Մադաթյանի նախաձեռնությամբ: 1965-ից գործում է ներկայիս անունով: Նպատակն է՝ աջակցել հայ մատաղ սերնդի կրթադաստիարակչական գործին, նյութապես եւ բարոյապես օժանդակել հայ ազգային դպրոցներին, ինչպես նաեւ շնորհալի հայ ուսաղներին: Մինչև 1963-ը միության կետնրոնը գտնվել է Աբադանում, այնուհետեւ ենթարկվել է Թեհրանի մասնաճյուղին (ստեղծվել էր 1943-ին): Միությունն ունեցել է մոտ 600 անդամ՝ Աիվազի, Աղաջարիի, Բանդար Մաշուրի, Գյաչսարանի, Անդիմեշքի, Համադանի, Բանդար Շահիփուրի եւ Թեհրանի իր մասնաճյուղերում:

1967-ին թեհրանաբնակ չարմահալցիների ուժերով քաղաքի հս. թաղամասերից մեկում կառուցվել է Մշակույթի տուն, որն ունի ընդարձակ սրահ 600 հանդիսատեսի համար, մարզադահլիճ եւ հարակից սենյակներ:

ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԲԸՄ) Թեհրանի Մասնաճյուղ

Հիմնվել է 1924-ին: Գլխավոր նպատակն էր՝ նյութական օգնություն կազմակերպել չքավոր իրանահայերին, աջակցել երիտասարդ սերնդի հայեցի կրթության եւ դաստիարակության գործին, խրախուսել այդ նպատակին ուղղված բոլոր միջոցառումները: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-45) զգալի օգնություն է ցուցաբերել զոհած զինվորների երեխաներին, իսկ 1946-ի զանգվածային հայրենադարձության ընդհատումից հետո՝ Թեհրանում մնացած կարիքավոր հայերին: Մասնաճյուղին կից գործում է կանանց հանձնախումբ:

ՀԱՅ ԿԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1939-ին Թեհրանում: Ստեղծման հիմնական առիթը հայկական դպրոցների փակումն էր (1936): Միության

անդամները մանուկ սերնդին գաղտնի ուսուցանել են մայրենի լեզու, զբաղվել ինքնագարգացմամբ, ծառայել հայ դպրությանն ու մշակույթին: 1946-ի հայրենադարձության ընդհատման հետեւանքով գավառներից թեհրան եկած հայերի համար միությունը կազմակերպել է ուսումնական պարապմունքներ, ստանձնել «Արաքս» թաղամասային դպրոցին օժանդակելու պարտականությունը: Կազմակերպել է մի շարք ցուցահանդեսներ՝ «Հայ կանանց ձեռնարկեստները» «Հայ կանանց պատմական տարազները»: Միության բարոյական եւ նյութական օժանդակությամբ ստեղծվել են «Անի» (1980) «Արմենուհի» (1974) եւ «Անահիտ» քույր միությունները:

ՉԱՐՄԱՅԱԼԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1941-ին՝ ջուղայաբնակ չարմահալցիների նախաձեռնությամբ: Գլխավոր նպատակը գավառի հայության բժշկական սպասարկումը կազմակերպելն էր: Մամուռան գյուղում ունեցել է հիվանդանոց-բուժարան, որը միակն էր ամբողջ գավառում: Գավառի ամենահեռավոր գյուղերից այստեղ բուժվելու են եկել ոչ միայն հայեր, այլեւ պարսիկներ: Հիվանդանոցի բժիշկները պարբերաբար այցելել են գավառի գյուղերը եւ տեղում բժշկական օգնություն կազմակերպել: Հիմնադրամն օրվանից միությունը ստացել է Չարմահալի ուսումնասիրաց միության օժանդակությունը: 1946 թ. դադարել է աշխատանքը:

ՓԵՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1942-ին՝ Ջուղայում բնակվող մի խումբ փերիացի երիտասարդների նախաձեռնությամբ: Նպատակն էր՝ գավառի կենտրոնական գյուղերից մեկում հիմնել հիվանդանոց, բժիշկների միջոցով պարբերաբար կազմակերպել դասախոսություններ եւ բժշկական խորհուրդներով օգնել բնակչությանը, տարբեր վայրերում հիմնել մասնաճյուղեր եւ խրախուսել գործին նպաստող բոլոր նախաձեռնությունները: Հայաշատ վայրերում կատարված հանգանակության շնորհիվ 1942-ին գավառի ամենամեծ գյուղում՝ Նամակներտում, կառուցվել է 12 մահճակալ ունեցող հիվանդանոց եւ

դեղատուն: Հիվանդանոցը սպասարկել է գավառի ոչ միայն հայ բնակչությանը, այլև պարսիկներին:

ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆՐԵՒ ԸՆԴՀԱՆՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1943-ին Թեհրանում: Անդամների ճնշող մեծամասնությունը ուսանողներ էին: Միության աշխատանքները կազմակերպվում են մասնագիտական բաժանմունքների (մարզական, գրական, ճարտարապետական, արվեստի, հայոց պատմության, բժշկական) միջոցով: Ունի կենտրոնական հանձնախումբ, հրատարակչական բաժին եւ գրադարան: Պարբերաբար կազմակերպել է համայնքի արվեստագետների աշխատանքների ցուցահանդեսներ եւ միջնակարգ դպրոցների ավարտական քննությունների դասընթացներ: Միության գործունեությունն աշխուժացել է Իսլամական հեղափոխությունից հետո: Ամենամյա են դարձել միության կենտրոնատեղիում կազմակերպվող աշակերտների նկարչական ցուցահանդեսները: Բացվել է Խորհրդային Հայաստանի տեսարժան վայրերին եւ պատմաճարտարապետական կոթողներին նվիրված լուսանկարների ցուցահանդես: Ներկայումս միությունը թեհրանահայության ամենագործոն կազմակերպություններից մեկն է:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՄԱԿ)

1944 թ. հիմնվել է հայ մշակութային «Մշակույթ» միությունը: 1950 թ. հետեւյալ չորս միությունների՝ «Հայ Երիտ. Մշակութային Միություն», «Միտք ու Արվեստ Ընկերակցություն», «Իրանահայ Մշակութային Միություն» եւ «Հայրենիք» մշակութային բեկորներից կազմվել է «Հայ Մշակութային Արարատ Կազմակերպություն»-ը: Կազմված է մի քանի միություններից՝ սկաուտական, մարզական, արվեստի (ստեղծվել է 1974-ին՝ երաժշտական, թատերական եւ գրական միությունների միավորմամբ) եւ երեցների: Սկաուտական միությունը (հիմնվել է 1951-ին) Կատարում է սկաուտական, կազմակերպչական եւ ազգային հարցերին վերաբերող աշխատանքներ: Մարզական միությունը

ստեղծվել է ՀՄԱԿ-ի հիմնադրումից անմիջապես հետո եւ պետության կողմից ճանաչվել որպես «Արարատ» մարզական ակումբ: Ունի վոլեյբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի, մարմնամարզության, թեթեւ ատլետիկայի եւ լեռնագոնացների խմբեր, իսկ 1961-ից՝ Ֆուտբոլային թիմ: 1964-ից՝ ամեն տարի կազմակերպվում են իրանի համահայկական մրցումներ, որոնց մասնակցում են իրանի մյուս հայաշատ կետրոնների շուրջ 1500 մարզիկներ: 1972-ին միությունը կազմակերպել է մրցումներ Թեհրանի հայկական դպրոցների աշակերտների մասնակցությամբ: 1974-ին Թեհրանում շահագործման է հանձնվել «Արարատ» մարզավանը, որը եզակի երեւոյթ է սփյուռքահայ գաղթօջախների կյանքում: Ունի Ֆուտբոլի դաշտ (10 հզ. հանդիսատեսի համար)՝ թեթեւ ատլետիկայի համար անհրաժեշտ հարմարություններով, լողավազաններ, թենիսի խաղադաշտ, 600 հանդիսատեսի համար նախատեսված բասկետբոլի եւ վոլեյբոլի խաղահրապարակներ, ինչպես նաեւ մշակութային կենտրոն:

Միության գրական բաժանմունքը զբաղվում է իր անդամների դաստիարակմամբ, դասախոսություններով, հրատարակչական աշխատանքով: Երաժշտական բաժանմունքում գործում են 30-ից մինչեւ 120 անդամ ունեցող երգչախմբեր: Թատերական բաժանմունքի ուժերով կազմակերպվել են բազմաթիվ ներկայացումներ:

Կազմակերպության նախկին անդամներին համախմբելու նպատակով 1964-ին ստեղծվել է Երեցների միություն: ՀՄԱԿ-ը մասնաճյուղեր ունի Թավրիզ, Որմիա, Գյարդաբադ (գյուղ Ուրմիայի մոտակայքում) Շիրազ եւ Մաշհադ քաղաքներում: Նոր Զուղայի Արարատ միութիւնը աշխատում է անկախ և ունի իր Աիվազի մասնաճյուղը:

ՄՇԱԿՈՒՅԹ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1944-ի մայիսի 1-ին Թեհրանում՝ մի խումբ իրանահայ մտավորականների նախաձեռնությամբ: Նպատակն էր՝ մասսայականացնել ժամանակակից մշակույթը (հատկապես՝ հայկական), նպաստել հայ-իրանական կապերի զարգացմանը եւ մշակութային համագործակցությանը: Ուներ երաժշտական, թատերական եւ մարզական բաժանմունքներ,

գրադարան-ընթերցարան: Կազմակերպել է հայերեն, պարսկերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներին դասընթացներ: Միությունը լայն գործունեություն է ծավալել հատկապես ՀԽՍՀ-ում՝ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության եւ մշակութային կապերի հայկական ընկերության (1944) եւ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի (1964) հիմնադրումից հետո: 1945-46-ին նրա նախաձեռնությամբ Թեհրանում գործող երիտասարդական միությունները միավորվել են:

ԹԵՀՐԱՆԻ «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

Հիմնադրվել է Հովսեփ Գասպարյանի, Միքայել Մարգարեանի եւ Կարապետ Բազիրկանյանի ջանքերով 1870 թ.:

ՀԱՅՈՒՅԻՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Թեհրանում առաջին հայ կանանց կազմակերպություն, հիմն. 1871թ.:

ՀԱՅ ԹԱՏԵՐԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմն. 1881 թ. որտեղ բեմ է բարձրացել անվանի լեզվաբան Հր. Աճառյանը:

ԹԵՀՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հիմն. 1891 թ.:

ԿԱՊՈՒՅՏ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է Մարգար Ղարաբեգյանի (Դեւ) եւ Հայկ Գարգաշի ջանքերով, 1920 ական թթ. Թեհրանում:

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԱՅՈՑ ԱԿՈՒՄԲ)

Հիմնվել է 1918 թ. Թեհրանում, ունի համերգային դահլիճ. հանգստի սենյակներ, խաղասրահներ եւ այլ հարմարություններ:

ԻՐԱՆԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմն. 1962 թ. Թեհրանում:

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Թեհրան 1925 թ.:

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրան 1927. թ.:

ԳԱՐՈՒՆ ԱԿՈՒՄԲ

Հիմն. 1957 թ. Թեհրանում մի խումբ հայ երիտասարդների ջանքերով:

ՇԱՀԱԶԻԶ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1962 թ. Թեհրանի Հեշմաթիե թաղամասում:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՓԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1964 թ. Թեհրանի Նարմաք-Չարքեշ թաղամասում:

ԱՐՓԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրանի Մաջիդիե թաղամասի «Արարատ» դպրոցի շրջափակում, 1968 թ.:

ՀԱՅ ՄԱՅՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմն. 1973 թ. Թեհրանի Մաջիդիե թաղամասում, նպատակ ունենալով բարձրացնել թաղամասի մայրերի մտավոր մակարդակը:

ԻՐԱՆԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հիմն. 1979 թ. թեժ աշխատանքներ է կատարել, նրա կենտրոնատեղիում հաճախ տեղի են ունեցել դասախոսություններ, գրական-գեղարվեստական ծրագրեր եւ այլն: 1979-1986 թթ. նախագահել է իրանահայ անվանի բանաստեղծ Գալուստ Խանենցը:

ԱԼԵՔՍ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրանի Նարմաք թաղամաս, հիմն. 1979 թ.

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրանի Վահիդիե թաղամաս, հիմն. 1979 թ. ուներ գրադարան, թատերախումբ, գրական բաժանմունք: Այժմ դադարել է աշխատանքը:

ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրան, հիմն. 1980

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրանի Յեշմաթիե թաղամասում, հիմն. 1983

ԱՐՄԵՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրան, աշխույժ աշխատանք է տարել մանավանդ 1979թ.-ից հետո:

ՀՐԱԶԴԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրան, հիմնադրվել է Իսլամական հեղափոխությունից առաջ:

ԷՐԵՐՈՒՆԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրան, հիմն. 1979

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թեհրան, հիմն. 1986

ՀԱՅ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՐԱՖՖԻ ՀԱՄԱԼԻՐ

Հիմն. 1979 թ. Թեհրանի Նարմաք թաղամասում:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՂՔԱՏԱՑ ԱՐԿՂ (1858)

Ն.Զ.Յ.Կ. ԲԱՐ. ՄԻՈՒԹՅՈՒՆ (1892)

Ն.Զ.ՄԱՅՐԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1918)

Ն.Զ.Յ.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1962)

Ն.Զ.ՀԱՅ ԱԿՈՒՄԲ (1932)

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ XXդ. 30-ական թթ. պարսիկ լեզվաբանները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հայոց լեզվի, հատկապես գրաբարի նկատմամբ: Բանասեր Ռեզազադե Շահադը բարձր է գնահատել Միրզա Մելքոն-խանի, Ռ.Աբրահամյանի, Հ.Աճառյանի ծառայությունները պարսկերեն լեզվին եւ գրականությանը: Նա հատկապես շեշտել է, որ հայոց լեզվի բազմահնչյուն այբուբենի շնորհիվ պահպանվել ու վերականգնվել են իրանական պատմական շատ վայրերի ու անձանց անուններ: Հայտնի լեզվաբան Փ.Ն.Խանլարին գտնում է, որ պարսկերենին տիրապետելու համար անհրաժեշտ է քաջածանոթ լինել նաեւ հայերենին:

Պարսիկ գրականագետ ակադեմիկոս Ս.Նաֆիսին իր «Նախախլամական Իրանի պատմության աղբյուրները եւ հայ պատմիչները» հոդվածում բարձր գնահատելով հայ պատմիչների. հատկապես Մովսես Խորենացու երկերը՝ իբրեւ պատմության ճշգրիտ եւ հավաստի աղբյուրներ, դրանց պարսկ. թարգմանությունը համարել է հրամայական պահանջ: Հայ պատմագրության հետազոտությամբ են զբաղվել պատմաբան եւ հնագետ Մ. Մոսթաֆավին, Ա.Մեհրին (Շուշթարի): Վերջինս «Իսլամական Իրանը» մեծածավալ աշխատությունում լայնորեն օգտագործել է հայկական աղբյուրները: Անվանի պատմաբան-բանասեր Էբրահիմ Փուր-Դավուդը նշում է, որ «Հունական- հռոմեական աղբյուրներից ավելի մեծարժեք են հայկական աղբյուրները: Պետք է հնարավորին չափ օգտվել այդ աղբյուրներից եւ գրել Իրանի ժողովրդի պատմությունը»: 1950-ական թթ. Էբրահիմ Դեհգանը պարսկ. է թարգմանել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» հատվածներ («ՕՖոդ») թերթը: 1981-ին լոյս է տեսել «Հայ ժողովրդի Պատմություն»-ը երկու հատորներով:

Պարսկական միտքը բարձր է գնահատել նաեւ հայ գրարանությանը: Դեռեւս 1910-ին լոյս է տեսել Ա.

Ահարոնյանի (Արցունքի Հովիտը): Հետագայում թարգմանվել են նաեւ Շիրվանզադեի (Արտիստը 1945), Րաֆֆու (Ուխտյալ միանձնուհի 1945, Ոսկի աքաղաղը 1968), Շանթի (Հին Աստվածներ 1959), Գ.Զոհրաբի (Պատմվածքներ 1963), Վ.Թոթովենցի (Կյանքը հին հռոմեական ճամբաների վրա 1964), Մ.Արմենի (Հեղնար աղբյուր 1965) եւ այլոց երկեր, պոեզիայից՝ Մ.Նալբանդյանի, Շ.Կուրդինյանի, Հ.Հակոբյանի, Գ.Սարյանի, Ա.Իսահակյանի մի շարք գործեր տպագրվել են «Սաադաթե բաշար», «Աթաշ», «Մարդոն», «Սոգանդ», «Սեթարեյե Սոբի» եւ այլ պարբերականներում: Դեռեւս 1922-ին դրամատուրգ-դերասան Ռ. Բ. Շահրզադը մի շարք հայ արվեստագետների հետ թարգմանել է Հ.Թումանյանի «Անուշ» պոեմը եւ բեմադրել: Ջերմորեն է ընդունվել Իսահակյանի «Աբու-լալա Մահարի» պոեմի թարգմանությունը (առանձին գրքով 1968): Թեհրանում 1969-ին՝ Թումանյանի ծննդյան 100 ամյակի առիթով տպագրվել են նրա հատընտիրը «Ախթամար», «Փարվանա» լեզբեղները «Անուշ», «Թմկաբերդի առունը» պոեմները եւ մի շարք բանաստեղծություններ ընդգրկվող մի հատոր Սպահանում հայ պոեզիայի ժողովածու «Անուշ» անվանումով: Ա.Խաչատրյանի պարսկ. թարգմանությամբ լույս է տեսել «Վշտի դուցազներգություն» (1963) խորագրով անթոլոգիան, որը ընդգրկում է Շիրազի «Բիբլիական» պոեմը եւ արեւելահայ ու արեւմտահայ բանաստեղծների երկեր, «Մայրականը հայ բանաստեղծության մեջ» (1972) ժողովածուն եւ Պ.Սեւակի հատընտիրը՝ «Անլռելի զանգակատուն» (1978) Նարեկացու «Մատյան Ողբերգություն» (1986) «100 տարվա հայ պոեզիա» (1990) վերնագրով:

1960-ին իրանի Մոհամադ Ռեզա Շահ Փահլավու անմիջական թույլտվությամբ Սպահանի համալսարանին կից բացվել է հայագիտական ամբիոն: Այդ գործում կարեւոր նպաստ են բերել Սպահանի համալսարանի դեկան, դր. Ամիր Աբբաս Ֆարուդին եւ Թեհրանի պետական համալսարանի գերմաներեն լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ Հովհաննես Հախնազարյանը:

1967-68 ուս. տարվա սկզբին Թեհրանի պետական համալսարանի գրական ֆակուլտետին կից ստեղծվել է հայոց

լեզվի եւ գրականության ամբիոն: Արդի հայերենի եւ գրաբարի դասավանդումը ստանձնել էր նույն Ֆակուլտետի երկարամյա դասախոս Հ.Հախնազարյանը:

1995 թ. Թեհրանի Իսլամական Ազատ համալսարանի արտասահմանական լեզուների Ֆակուլտետում բացվել հայոց լեզվի եւ գրականության ամբիոն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

XVI դ.-ից սկսած Նոր Ջուղա, Չարմահալ, Փերիա եւ այլ հայաբնակ շրջաններում մեծ զարգացում է ապրել աշուղական արվեստը: Դա պարսկահայ աշուղական գրականության ծաղկման շրջանն էր: Չնայաց այդ ժամանակշրջանում իրանահայ մշակույթը մեծ վերելք էր ապրում, սակայն գրականությունը մնացել էր գուսանական քնարերգության մակարդակին: XVII դ. լայն ճանաչում են ստացել հայ աշուղներ Ղուլ Էգաջը, Ղուլ Արծրունին, Բաղր-օղլին եւ Ամիր-օղլին, Աշուղ Ղուլ Ղազարը, Աշուղ Մաթեոսը, Օհան Օղլին (Տեր Կարապետ Օհանյան) եւ այլոք, որոնք իրենց երգերով պարսկահայ աշուղական պոեզիայի սկզբնավորողները եղան:

Իրանահայ ժամանակակից գրականությունը սկսել է ծեփավորվել XIX դ. 2-րդ կեսից, երբ եվրոպական գրականության հետ առնչվելով, երկրի գրական կյանքը վերածննդի առաջին նշաններն է ցուցաբերել: Այդ շրջանում հատկապես աշխուժացում է ապրել թարգմանական գրականությունը, որով եւ իրենց գրական կյանքն են սկսել հայ մտավորականներ՝ Հովհաննես Խան Մասեհյանը եւ Հովսեփ Միրզայանը:

Հ.Մասեհյանը իր գրական գործունեությունը սկսել է դեռեւս Նասերեդդին Շահի պալատում. շահի համար պարսկերեն է թարգմանել եվրոպացի հեղինակներ Ա.Դյումայի, Պ.Լոթի, Զ.Դիքենսի եւ Մոլիերի որոշ երկեր:

Նրա հայերեն անգլագական թարգմանությունների ոսկե պսակն են կազմում Շեքսպիրի ստեղծագործությունները՝ «Համլետ», «Արքա Լիր», «Ռոմեո եւ Ջուլիետա», «Օթելլո», «Վենետիկի վաճառականը», «Մակբեթ», «Ոչինչից մեծ աղմուկ» եւ այլն:

Անցյալ դարի 90-ական թթ. թարգմանչական բեղուն գործունեություն է ծավալել Հովսեփ Միրզայանը: Հայերեն է թարգմանել եվրոպացի հեղինակներ Վալտեր-Սկոտի, Մոլիերի, Բայրոնի որոշ երկեր, նաև Լերմոնտովի «Դեւը» պոեմը: Պարսկական գրականության թարգմանության հայ առաջնեկը հանդիսանալով, հայ ընթերցողին է ներկայացրել Սաադիի, Հաֆեզի, Օմար Խայամի, Բաբա Թահերե Օրիանի լավագույն ստեղծագործությունները, Ֆիրդուսու, «Շահնամե»-ի երեք հատվածները, կազմել է ծաղկաքաղ ժողովածու պարսիկ հին եւ միջնադարյան բանաստեղծներից՝ «Հաֆեզ» խորագրով:

Արդեն 1920-ական թթ-ին Թեհրանում, Թավրիզում եւ Նոր-Ջուղայում սկսում են կազմակերպվել գրական միավորումներ, լույս են տեսնում գրական պարբերաթերթեր ու հոդվածներ: Գրական հանդեսներում («Խոսք», «Նոր պատգամ») եւ գաղութի տարբեր հրատարակչություններում պարբերաբար լույս են տեսել հայ հեղինակների արձակ եւ չափածո ստեղծագործություններ ու գրական հոդվածներ: Այս պայմաններում ասպարեզ իջավ իրանահայ գրողների նոր սերունդ: 1920-30-ական թթ. Թավրիզում առանձին գրքերով լույս են ընծայվել Արշիի «Երազ եւ հուշեր» հատորյակը, Արամ Գարոնեի «Հրաժեշտի պոեմ» գիրքն ու «Արա եւ Շամիրամ» պոեմը, Գեւորգ ԴարՖիի «Սիավուշ ու Սուդաբե» թատերգությունը:

1935-ին Թեհրանում ստեղծվել է «Նոր էջ» գրական միավորումը, որը ընդլիմջումներով գոյատևել է մինչև 1970-ական թթ. եւ տպագրել գրական-գեղարվեստական 23 տարեգիրք ապա կրկին երկար ընդմիջումից հետո նոր էջի 24-րդ համարը լույս է տեսել 1999 թ. Երեւանում: Միավորման կյանքին մասնակցել են հիմնադիր անդամներ Դեւը (Մարգար Դարաբեգյան), Աշոտ Ասլանը, Հրանտ Ֆալյանը, Արշավիր Մկրտիչը, Գալուստ Խանենցը, Արմեն Գեսը, Արա Տեր Հովհաննիսյանը, ավելի ուշ՝ Ջորայր Միրզայանը եւ Ռ.Բենը (Ռուբեն Հովհաննիսյան):

Երկրորդ աշխարհամարտից հետո մինչև 60-ական թթ. իրանահայ գրական ասպարեզ են իջել մի շարք նոր հեղինակներ: Առաջին անգամ իրենց առանձին ժողովածուներն են հրապարակում Երվանդ Բազենը՝

«Վեներայի գրկում», Արշավիր Մկրտիչը «Չորս հողմեր եւ ես», Աշոտ Ասլանը՝ «Եթե ապրի...», Գալուստ Խանենցը՝ «Բարեւ քեզ, մարդ», Ժորժ Բաբայանը՝ «Կյանքի հետ», Հրանդ Ֆալյանը՝ «Նոր աչքեր», Չորայր Միրզայանը «Թաց մայթ» եւ ուրիշներ:

Բազմաթիվ այլ հեղինակներ հանդես էին գալիս մամուլի էջերում, ինչպես՝ Սիրաք Բեդիվինը, Արա Տեր Հովհաննիսյանը, Գալուստ Խանենցը, Պետրոս Քաջբերունին, Ռ.Բենը, Վարդգես Ֆրանկյանը, Արամ Անտոնյանը եւ ուրիշներ: 1962-ին հիմնադրվել է «Իրանի հայ գրողների միությունը» որը գործում է առայսօր:

1960-ական թթ. վերջին երկրում արդեն արմատավորվել էր նորարարության հոսանքը, որը նոր շունչ էր հաղորդում գրականությանը: 1972-ին լույս է տեսնում Գ.Խանենցի «Հրաշալի գործությունը»: 1970-80-90-ական թթ. լույս են տեսնում Հայգալի (Հայկ Գալստյան) «Կենսաշող կերոններ», Հովիկ Էդգարյանի «Լուսաշող» (1984) «Եթերային» (1998), Գ.Խանենցի «Լուսամուտ» 1993, եւ «Հուշերիս Բեռը» (1999), նաեւ իրենց առաջին ժողովածուներ են լույս ընծայել իրանահայ երիտասարդ բանաստեղծներ՝ Վարանդը (Սուքիաս Քյուրքյան), «Արեւի ճամբով», Ռուբինան «Իմ սիրտը», Կոլյա Տեր Հովհաննիսյանը «Մայթեր, մայթեր», Հովսեփ Նազլունյանը «Արդյոք ելնելու են մի օր», Խաչիկ Խաչերը «Անտարբերություն», ավելի ուշ՝ Ազատ Մաթյանը «Անապատի ծաղիկներ», Արմանտը «Շքեղ մերկություն», Ծաղկանուշ Ծատուրյանը «Կապույտ երազներ»:

1986 թ. Թեհրանում հիմնադրվում է «Թեհրանահայ գրական շրջանակ»-ը որի հիմնադիրներ էին Գ.Խանենցը, Խ.Խաչերը, Էդ. Բաղդասարյանը (Էդ.Գերմանիկ), Հ. Էդգարյանը, Ա. Բաբայանը, Էլսո Գարյանը, Հայգալը: Դա հրատարակել է իր պաշտոնաթերթը՝ «Հանդիպում» տարեգիրքը (հատոր 1, 1988, հատոր 2, 1990, հատոր 3, 1993):

ԹԱՏՐՈՆ: Հայ թատերական կյանքն իրանում սկզբնավորվել է 1878-ին Թեհրանում («Ուստա Պետրոս», «Երկու քաղցածներ»): 1879-ին մանկավարժ Մ. Փափազյանը

կազմակերպել է ներկայացումներ իր տանը, ավելի ուշ՝ «Արամյան թատրոն»-ում (հիմնվել է 1915-ին): Խաղացել են իր հեղինակած «Արա գեղեցիկ», «Աշոտ ողորմած» եւ այլ պիեսներ: 1881-ին՝ Թեհրանում, 1990-ին՝ Թավրիզում, հիմնադրվել է «Հայ թատերասիրաց ընկերություն»ը, որի նպատակն էր օժանդակել թատերական գործին եւ ազգային դպրոցներին: Ներկայացումներ են կազմակերպվել նաեւ Ղազվինում (1880) Նոր Ջուղայում «Թատերական ակումբ» (1886-1890), ինչպես եւ Ռաշտում(Ռեշտ), Էնզելիում (Անգալի) եւ այլուր: Տեղի թատերական կյանքի զարգացմանը մեծապես նպաստել են հյուրախաղերի եկած թատերախմբերն ու անհատ դերասանները, որոնց մի մասը երկարատեւ գործունեություն է ծավալել իրանի հայ թատրոնում: 1888-89-ին Թեհրանում եւ Թավրիզում ելույթներ են ունեցել Սաֆրազյան ամուսինները, 1890-ական թթ. տարբեր քաղաքներում՝ Փառանձեմը, Ֆելեկյան քույրերը: 1910-ական թթ. լրագրող եւ թարգմանիչ Հայկ Գարգաշը Թեհրանում հիմնադրել է «թատերական ընկերություն», որի թատերասրահում թատերադրվել են Պարոնյանի, Յուժին-Սումբատովի եւ այլոց գործերը: Իրանի թատերական կյանքում մեծ իրադարձությունն էր Սիրանուշի (1912, 1919-21), Աբելյան-Արմենյան (1909, 1913), Մայսուրյան-Ջարիֆյան խմբերի (1911), Ոսկանյան ամուսինների (1913), Արմենյան, Կոստանյան ամուսինների (1918-24-ին), Հայաստանի առաջին պետթատրոնի (1924) եւ այլոց հյուրախաղերը: Իրանահայ թատրոնի զարգացման գործում մեծ ներդրում ունեն Մ.Թաշճյանը, Մ.Մարությանը, Գ.Իփեկյանը, Հ.Ստեփանյանը, Մանարյան ամուսինները, Տերյան ամուսինները, Աթայան ամուսինները, Հայկ Գարգաշը եւ ուրիշներ: 1934-ին հրավիրվել է Վ.Փափազյանը (Օթելլոյի դերակատարումով): Թեհրանում գործել է Մ.Մարությանի ստեղծած թատերական ստուդիան (1934-37-ին, 1942-45-ին), որը վերածվել է դրամատիկական թատրոնի, բեմադրվել են Շանթի, Շեքսպիրի, Պարոնյանի եւ այլոց ստեղծագործությունները: 1944-ից գործում է հայ մշակութային «Արարատ» կազմակերպությունը, որի թատերական բաժանմունքի (առաջին ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան) կազմակերպած ներկայացումները մեծ հաջողություն ունեցան Իրանում: 1939-

46-ին Թավրիզի թատերախումբը (ղեկավարներ Ե.Բարոյան եւ Ա.Յովհաննիսյան) բեմադրել է հայ եւ ռուս հեղինակների գործեր: 1944-ին կազմակերպվել է Թավրիզի թատերական կոմիտեն: Թատերական կյանքն աշխուժացել է նաեւ Աբաղանում (Կրթասիրաց միությանը կից գործել է թատերախումբ, ղեկ.՝ Ն.Շաղզոյան) եւ Ուրմիայում: Թեհրանում հիմնադրվել են մի շարք թատերախմբեր՝ Հայ դրամատիկ դերասանախումբը (1944), Շանթ (1945) եւ Հայ պատանեկան մշակութային միությունները (1945), Պատանի հանդիսատեսի թատրոն (1946 ղեկավար՝ Ռ.Աթայան, Ն.Աղայան), «Սունդուկյան» թատերախումբը (1947), Թեհրանահայ երիտասարդական արվեստասիրաց թատերախումբը (1951, ԹեԱԹ), «Շահեն Սարգսյան» (1982) «Շերանիկ» (1982) եւ այլն:

1984-ին Թեհրանում կազմակերպվել է վերջին 50-ամյակի իրանահայ թատրոնի վետերանների մեծարման երեկո, փառատոններ, հրատարակվել դրամատիկական ստեղծագործություններ: Իրանահայ թատրոնի զարգացմանը մեծապես նպաստել են նաեւ՝ Մ.Յովհաննիսյանը, Ա.Ահարոնյանը, Ա.Աղամալյանը, Հ.Ստեփանյանը, Մ.Դավթյանը, Մ.Մանուկյանը, Հ.Արմանը, Ս.Մնացականյանը, Ա.Յովհաննիսյանը, Ա.Մելիք-Ազարյանը, Շ.Սարգսյանը, Լ.Բզնունին եւ ուրիշներ: 1980-ական թվականներին «Իրանահայ Ազգային եւ մշակութային միության» թատերախումբը ներկայացրեց մի քանի բեմադրումներ որոնք մինչեւ օրս էլ ժողովուրդը լավապես հիշում է դրանք («Ես էս տունն օճչինչ», Հ.Հրանդ, բեմադրիչ Անդ.Խեչումյան, «Ռաֆայել Աղան Ամերիկայում» նույնը, «Ինչքան զարդեր կա շուրջս» Արամ Աշոտ Բաբայան, բեմադրիչ Անդ. Խեչումյան, նույնի «Գնա մեռի արի սիրեն», «Հայկական հարսանիք», Արամ Աշոտ Բաբայան, բեմադրիչ Հայկազ Ստեփանյան, Շիրվանզադեի «Եվգինե», բեմադրիչ Մարտիկ Գրիգորյան, եւ այլն): Դերերում էին Հայկազ Ստեփանյանը, Վիգեն Զաքարյանը, Գրիգոր Զաքինյանը, Վահիկ Վարդանյանը, Ադրինե Եսայանը: Հայ Մշակութային «Սիփան» Միության թատերական բաժնի առաջին ղեկավարն էր Ա. Թաշճյանը (1964-66-ին): Նրա ղեկավարությամբ ներկայացվել են Ա.Աբելյանի «Մարվող ճրագներ», Շիրվանդաշեի «Նամուս» եւ

այլ պիեսներ: Միության թատերական գործունեությունը դադարել է 1966-ին: 1989-ին վերսկսվել է Ս. Մնացականյանի ղեկավարությամբ, որի ջանքերով բեմադրվել են Շիրվանզադեի, «Շառլատան», «Երկու քաղցածներ», «Ավելորդը» (ըստ Դեմիրճյանի), «Սամվել» (ըստ Րաֆֆու) եւ այլն: Միության թատերախումբն այժմ կոչվում է «Սկրտիչ Թաշճյան»:

Իրաննահայերը որոշակի դեր են խաղացել նաեւ իրանական թատրոնի զարգացման գործում: Իրանի դրամատուրգիայի հիմնախնդիրն է հայազգի դիվանագետ եւ քաղաքական գործիչ Միրզա Մալքոմ Խանը (գրել է կատակերգություններ): 1910-ին Թեհրանի պարուհի Ա.Օհանյանը բեմադրել է Գոգոլի «Ռեւիզորը» (պարսկերեն), որը մեծ արձագանք է ունեցել նաեւ Ռուսաստանում: Իրանի թատրոնում են գործել նաեւ Ա. եւ Լ. Տեյյանները:

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ

Հիմնվել է 1922-ին, Թեհրանում: Խմբի հիմնական կազմում Միշա եւ Մարգո Կոստանյան ամուսիններն էին, որոնք տեղի սիրողների հետ կազմակերպել են մի շարք բեմադրություններ եւ շրջագայել Իրանում: 1933-ին ստեղծել են «Դրամատիկ դերասանական խումբ»-ը, 1935-ին՝ «Դրամա-օպերետային դերասանական խումբը»: Բեմադրել են բազմաթիվ պիեսներ, կատարելով գլխավոր դերերը: Խումբը գործել է մինչեւ 1950-ական թթ.:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ստեղծվել է 1979-ին Թեհրանում: Ղեկավարել են՝ Ալֆրեդ Դանիելյանը (1979-1980), Սուրեն Շահբազյանը (1980-1984), Անուշ Հովույանը (1984-ից): Բեմադրություններից են՝ «Գիքորը», «Սպանված աղավնի», «Խաչագողներ», «Ավերակների վրա», «Ծիրանի ծառ», ստեղծագործությունները, «Ուշ լինի, նուշ լինի», օպերետը եւ այլն: Հետագայում վերանվանվել է «Հայ ժողովրդական թատրոնի համագործակցության միավորում»: Այժմ չի աշխատում:

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրվել է Թեհրանում 1881 թ., ակտիվ անդամներից էին Ս.Պետրոսյանը, Ղ.Ղուկասյան, Ներսես Խանը, Հ. Մարտիրոսյանը, Հուսիկ Փափազյան, եւ ուրիշներ, որոնք համարվում էին թատրոնի հիմնադիրներ, մասնակցում էին նաեւ Հ.Մասեհյանը, Ավ.Ղարաբեգյանը եւ Հով.Թումանյանը. կազմալուծվում է 1916 թ.-ին: Ներկայացվել են «Շուշանիկ», «Արշակ երկրորդ», «Մեծն Ներսես», «Սեւ հողեր» եւ այլ ողբերգություններ եւ մի կատակերգություն:

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՏՈՒԴԻԱ

Ստեղծվել է «Թեհրանի Հայկազյան երկսեռ դպրոցի նախկին աշակերտներ» միությանը կից (ԹՀԵԴՆԱ) 1920-30-ական թթ. Արտո Տերյանի ղեկավարությամբ: 1930-37 թթ. ներկայացումներ են կազմակերպել «ԹՀԵԴՆԱ», Կոստանյան ամուսինները, Մանար ամուսինները, Վահրամ Փափազյանը եւ Մ.Թաշճյան:

ՇԱՀԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ

Ստեղծվել է 1982-ին, Թեհրանում՝ ռեժիսոր եւ թարգմանիչ Շ.Սարգսյանի հիշատակին: Բեմադրությունները են՝ Շանթի «Հին Աստվածներ» (ռեժ. Ռ.Բոլդի), «Թղթախաղ» (ըստ Պարոնյանի, ռեժ. Հ.Եգանյան), «Առաջարկություն» (ռեժ. Ռ.Բոլդի), «Արջը» (երկուսն էլ՝ ըստ Չեխովի, ռեժ. Ս.Սաֆարյան) եւ այլն: Թատերախմբում են Ա.Ազարյանը, Վ.Ազիզյանը, Ս.Միրաբեգյանը, Հ.Մուրադյանը , Վ.Սուրենյանը եւ ուրիշներ:

ՀԱՅ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ստեղծվել է 1989-ին, Թեհրանում՝ Լ.Հովհաննիսյան-Աբրահամյանի ղեկավարությամբ: Թատրոնի ստեղծագործության հիմքը իմպրովիզացիան է: Ներկայացումների երաժշտությունը ստեղծվում է թատրոնում: Բեմադրություններից են՝ «Մի խանգարեք, որ տեսնեմ» (ըստ Շանթի եւ Վ.Շուշանյանի), Գ.Դարձիի «Սիավուշ եւ Սուդաբե», Իբսենի «Տիկնիկի տունը» եւ այլն: Թատրոնին կից գործում են դրամատիկական դասընթացներ: 1991-ին Հայ փորձնական թատրոնը Երեւանում մասնակցել է սփյուռքահայ

թատրոնների փառատոնին: Թատերախմբում են՝
Ռ.Բաբախանյանը, Ս.Աբրահամյանը, Ժ.Մադաթյանը,
Լ.Խանգալոյանը, Մ.Տեր Հովհաննիսյանը եւ ուրիշներ:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Նշանակելի է իրանահայ երաժիշտների ներդրումը հայ ազգային եւ իրանական ժողովրդական ու պրոֆեսիոնալ երաժշտության մեջ: Այն սկսել է զարգանալ դեռեւս 17-րդ դարում եւ ընդհուպ մինչեւ 20-րդ դ. այն գյուղւոյն է ունեցել գուսանական երգի ձեւով: Իրանի ժողովրդական երգարվեստի զարգացմանը XVIII դ. նպաստել են հայ աշուղներ Հարթուն Օղլին, Ամիր Օղլին, Ղուլ Էգաջը, Օհան Օղլին (Տեր Կարապետ Օհանյան), Ղուլ Արծրունին, Բաղեր Օղլին, Ղուլ Սարգիս Շուրիշկանցին, Մատթեոսը, Ալլահվերդին, Մարտիրոս Մանուկյանը, Ստեփանը եւ ուրիշներ:

XIX-XX դդ. պրոֆեսիոնալ երաժշտության ներկայացուցիչներից են՝ Ա. Տեր Հովհաննիսյանը (XIX դ. վերջին թեհրանում հիմնել է երաժշտասերների միւլոյուն եւ լարային նվագախումբ), կոմպոզիտոր, խմբավար Ն.Գալանտեթյանը: Հայտնի է Գրիգորյանների տոհմը՝ հատկապէս՝ մանկավարժ, խմբավար, դիրիժոր Լ.Գրիգորյանը (1986-1957), երգահան, խմբավար Հ.Գրիգորյանը (1893-1976 , 40 տարի ղեկավարել է Թեհրանի «Կոմիտաս» երգչախումբը), պարսկական ժողովրդական երգերի առաջին գրառող եւ ներդաշնակող, կոմպոզիտոր, խմբավար, դիրիժոր Ռ.Գրիգորյանը եւ ուրիշներ: Իրենց գործունեւոյամբ աչքի են ընկնում երգչուհի Ռոզ եւ կոմպոզիտոր, խմբավար Աշոտ Պատմագրյանները: Թեհրանի ազգային կոնսերվատորիայում տարբեր տարիներ դասավանդեն են՝ Տ.Խառատյանը, Մ.Ղարախանյանը, Ռ.Ժորժը, Է.Մելիք-Ասլանյանը, Օ.Կոմբաջյանը, Լ.Փիլոսյանը, Ս.Հախնազարյանը, Թ.Սաֆարյանը, Լ.Աբիանոսը եւ ուրիշներ: Թեհրանի օպերային թատրոնում երգել են՝ Հ.Կարապետյանը, Ս.Աղաբաբյանը, Շ.Մակարյանը, Մ.Սանոսյանը, Ա.Աղաբեկյանը, Գ.Մովսիսյանը եւ ուրիշներ: Տարբեր տարիներ գործել են՝ լարային քառյակ (Ռ.Մելիք Ասատրյան, Ժ.Գրիգորյան, Ղ.Թալեք-Չաղե,

Զ.Մելքոնյան), նվագախմբեր: Հայկական երգչախմբերից են՝ «Գողթան» (ղեկավարներ՝ Ն.Գալանտերյան, Է.Հովհաննիսյան), «Գուսան» (ղեկավարներ՝ Լ. Գրիգորյան, Ժ.Մինասյան), «Անուշ» (ղեկավար Հ.Գասպարյան), «Հայ երգ» (ղեկավար Լ.Բազիլ), «Արարատ» (ղեկավար Է.Հովհաննիսյան), «Արագ» (ղեկավար Ա.Բազուկյան), «Անի» (ղեկավար Հ.Մակարյան), Աշակերտական միացյալ երգչախումբ (ղեկավար Հ.Հարությունյան) եւ այլն: Իրանահայ միջավայրից են սերվել կոմպոզիտորներ Լ.Բազիլը, Ա.Ջամբազյանը, Լ.Ճգնավորյանը, Հ.Բեկլարյանը, Է.Մելիք-Ասլանյանը, ջութակահարներ Վ.Խոջայանը, Հ.Մանուկյանը, Խ.Բաբայանը, երգչուհիներ Ա.Թերզյանը, Թ.Փիլոսյանը, Հ.Վարդանյանը, Ա.Խաչատրյանը, դաշնակահարներ՝ Ռ.Սաիդխանյանը, Ռ.Մինասկանյանը եւ ուրիշներ: Թեհրանում աշխատել են «Կոմիտաս», «Արմեն», «Հայերգ», «Գողթան», «Ուրարտու», «Անուշ» երգչախմբերը:

ՊԱՐ

1920-ական թթ. Ե.Ավետիսյանը Թավիրիզում ստեղծել է իրանի բալետի առանձին ստուդիան, որը 1939-ին տեղափոխվելով Թեհրան, վերաբնակվել է պարարվեստի դպրոցի: Պարուհիներ են եղել նրա դուստրերը՝ Ժ. եւ Լ.Ավետիսյանները: 1939-ին պարուսույց Ա.Ջամբազյանը Թեհրանում հիմնել է բալետի դպրոց: Բալետմայստերներից էր Ա.Ջամբազյանը: Թեհրանում գործել է նաեւ «Պապիկյան-բալետ» խումբը:

ԿԵՐՊԱՐՎԵՍ

Իրանահայերը կերեսոր դեր են խաղացել նաեւ երկրի կերպարվեստի զարգացման գործում: Մանրանկարչության շնորհալի ներկայացուցիչներից էր Հակոբ Ջուղայեցին: Նոր Ջուղայի Աստվածածին, Բեթղեհեմ, Գրիգոր Լուսավորիչ, Ս.Կատարինե, Ամենափրկիչ վանքի Հովսեփի Հարեմաթացու եւ այլ եկեղեցիների հարդարամքում տեղի նկարիչները պատկերել են տերունական սյուժեներ, ավետարանական թեմաներ: Նկարների մեջ հաճախ ներգրավվել են պատվիրատուները: Տեղի նկարիչները հրավիրել են նաեւ

նկարագարողելու մեծահարուստների ապրանքները: Եկեղեցիներում եւ մասնավոր տներում ցուցադրել են նաեւ Եվրոպայից, հատկապես Վենետիկից բերված գեղանկարչական աշխատանքներ: XVII դ. անվանի նկարիչներից էր Մինասը, հիշատակվում են նաեւ Ստեփանոսի, Դավթի եւ այլոժ անունները: Տաղանդավոր նկարիչներից էր Բ.Սալթանովը: XVII դ. վերջին XVIII դ.-ում Իրանում զգալի աշխատանք են կատարել Յովնաթանյան ընտանիքի ներկայացուցիչները: Շահի պալատական նկարիչն էր Յակոբ Յովնաթանյանը: Յայ նկարիչները նկարագարողել են Թավրիզի, Թեհրանի, Ատրպատականի եկեղեցիները, ստեղծել դիմանկարներ:

1920-ական թթ. տեղի հայ շնորհալի երիտասարդները ուսանել են Յոնում, Փարիզում, ինչպես նաեւ Թեհրանի նկարչական բարձրագույն դպրոցում: Այդ հանգամանքն էլ պայմանավորել է նրանց ստեղծագործության բազմակողմանի դրսևորումները:

Իրանի հայաբնակ շատ քաղաքներում ստեղծվում են նկարիչների, միություններ ու ընկերություններ: Երկրի գեղանկարչական արվեստի լավագույն ներկայացուցիչներից էր Դարվիշը (Անդրե Սերուգյան): Ֆիրդուսու «Շահնամեի» թեմաներով ստեղծած նրա գեղանկարների շարքը ցուցադրվել է մի շարք երկրներում: Յայտնի են նկարիչներ Մ.Շահբազյանը, Մ.Ղարաբեկյանը (Դելը), Մ.Գրիգորյանը, Յ.Մինասյանը, Է.Այվազյանը, Ս.Նազարյանը, Ե.Նահապետյանը, Ս.Մելքումյանը, Ա.Քոլյանը, Բազիլը, Ա.Ֆուրգենյանը, Ա.Ստեփանյանը, Ա.Բաղդասարյանը, Ե.Շահիջանյանը, մանրանկարիչ Կլարա Աբգարը եւ ուրիշներ:

Քանդակագործությունը հիմնականում զարգացել է որպես եկեղեցիների արտաքին հարդարանք, խաչքարի եւ տապանաքարի արվեստ: Խաչքարերի արվեստն իր վերջին վերելքը ապրել է Նոր Զուղայում: Յայերը զբաղվել են նաեւ ոսկերչությամբ, ակնագործությամբ, ասեղնագործությամբ, խեցեգործությամբ եւ այն: Փայտի փորագրության նշանավոր վարպետներից էր Յակոբջանը (XVII դ.), որը նաեւ պալատական հյուսների ղեկավարն էր: Այս ստեղծագործ վարպետների աշխատանքի լավագույն նմուշներից է

«Ալմաստե գահը» (1659, Մոսկվա, Կրեմլ, Ջինապալատ): Աչքի են ընկել նաեւ հայ խեցեգործները:

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում Սարգիս Խաչատրյանը հիմնադրել է թանգարան (1933), իրանի քաղաքներում բացել Սեֆյան շրջանի գեղանկարչության ընդօրինակումների ցուցահանդեսներ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Իրանի հնագույն հայ ճարտարապետական հուշարձանը գտնվում է Արտազ գավառի Մակու քաղաքից ոչ հեռու գտնվող Ս.Թադեի վանքը՝ ըստ ավանդության, հիմնադրված 66-ին Թադեոս առաքյալի կողմից: 12 նիստանի թմբուկով գմբեթավոր այս կառույցը հետագա դարերում վերակառուցվել է, մասամբ՝ Էջմիածնի մայր տաճարի հորինվածքով: Ներսը զարդարված է թեմատիկ որմնանկարներով: Դեպի վեր կառույցը երիզված է քանդակազարդ կենդանական եւ բուսական ոճավորված թեմաների զոտիով: Վանքն իր շրջակայքով պահպանվում է «Յունեսկո»-ի Թեհրանի հուշարձանների պահպանության ինստիտուտի կողմից:

Իրանահայ գաղութի ճարտարապետական հին հուշարձաններից է 1655-ին Նոր Ջուղայում կառուցված Ս.Ամենափրկիչ վանքը: Բարձր պատերով ու շքեղ կամարներով այս կառույցը ունի մզկիթ հիշեցնող երկառաստաղանի գմբեթ: Տաճարի հատակից 1,5 մետր բարձրությունից սկսվող եւ մինչեւ գմբեթի ձեղունը հասնող 2 դահլիճների ներքին պատերը զարդարված են կրոնական թեմաներով զուգավոր յուղաներկ նկարներով եւ ոսկեզույն քանդակներով: Հոլանդական եւ իտալական ոճով կառուցված այդ զարդաքանդակների հեղինակը XVIII դ. հայ որմնանկարիչ Հովհ. Մրկուզն է: Ճարտարապետական եզակի արժեք է ներկայացնում Ս.Բեթղեհեմ եկեղեցին (1627-1635)՝ կառուցված հայկական եւ պարսկական ճարտարապետության յուրահատուկ համադրումով:

Երկրով մեկ սփռված հայկական ճարտարապետական հուշարձանների (մասնավորապես եկեղեցիների)

վերանորոգման նպատակով պետության կողմից նյութական օժանդակություն է տրվում:

1907-ին կառուցվել է Ն.Զուղայի մատենադարանի շենքը: 1931-ին նկարիչ Ս.Խաչատրյանը ձեւավորել է մատենադարանի եռադահլիճը, նորակառույց թանգարան-մատենադարանը:

Իրանում ցայսօր ճարտարապետական եւ ամենահայտնի շինություններից է 1974-ին կառուցված «Արարատ» մարզավանը (ճարտարապետ՝ Ռոստոմ Ոսկանյան): Բաղկացած է 3 մասից՝ մարզադաշտ, մարզասրահ, մշակութային կենտրոն: Գ.Կյուլպենկյան հաստատության նյութական միջոցներով, ճարտարապետ Ժենյա Ավթանդիլյանի նախագծով 1973-ին կառուցվել է Սպահանի համալսարանի հայագիտական ֆակուլտետի շենքը: Իրանահայ ճարտարապետներն ունեն իրենց միությունը: Իրանահայ նշանավոր ճարտարապետներից էին՝ Վարդան Յովհաննիսյանը (արքունական ճարտարապետ), Լեւոն Թադեոսյանը, Մարգար Եղիա Գալստյան (Էլգար) ճարտարապետ Գեւորգյանը եւ ուրիշներ, նրանք հիմնել են պալատներ եւ այլն:

ԿԻՆՈԱՐՎԵՍ

Իրանում կինոգործի սկզբնավորողները եղել են հայ արվեստագետները: 1912-ին Արտաշիր Խանը (Պատմագրյան) Թեհրանում բացել է իրանի առաջին կինոթատրոնը: Առաջին գեղարվեստական ֆիլմը նկարահանել է Ավանես (Յովհաննես) Օհանյանը՝ «Աբին եւ Ռաբին» (1930): Իրանի առաջին կինոդերասանուհին էր Ա. Կոստանյանը («Յաջի աղան կինոդերասան», ռեժ. Ա.Օհանյան): 1950-ին Զ.Բաղդասարյանը եւ ուրիշներ հիմնել են «Ալբորգ» կինոստուդիան, 1951-ին Ս.Խաչատրյանը՝ «Դիանա-ֆիլմ» 1956-ին Ժ.Վայեգյանը (Խաչիկյան եղբայրների հետ)՝ «Աժիր-ֆիլմը», 1960-ին Ռ. եւ Ս.Ծատուրյանները՝ «Շահաբ», 1956-ին Զ. եւ Վ.Ավետիսյանները՝ «Շահին-ֆիլմ կրկնօրինակման ստուդիաները, Ս. եւ Ն.Մինասյանները՝ «Զապլին-ֆիլմը»: Ռեժիսոր Ս.Խաչիկյանի ստեղծած մի շարք ֆիլմերում նկարահանվել են հայ դերասաններ Արամը, Զ. Մինասյանը,

Թ.Ամատունին, Մ.Մինասյանը եւ ուրիշներ: Ֆիլմեր են ստեղծել նաեւ ռեժիսորներ Ս.Ազարյանը, Ա.Աղամալյանը, Մ.Սարվարյանը եւ ուրիշներ: 1960-70ական թթ. կինոդերասաններից են՝ Մ.Մարությանը, Ի.Ջազյանը, Ա.Շաֆրազյանը, Մ.Գրեգորին, Մ.Ափիկը, հեռուստակինոյում՝ Ա. Յուսեֆյանը: Մուլտ. կինոյում ճանաչվաց են՝ Յ.Շահբազյանը, Ա.Բաղդասարյանը, կոմպոզիտորներ Վ.Շահբանդյանը, Ա.Արզումանյանը, հնչյունային ռեժիսորներ Ռուբիկ Մանսուրին, Վ.Կարապետյանը, մոնտաժիստ Գ.Գրիգորյանը կինոգետ Ժ.Լազարյանը, Զ. Ղուկասյանը: Արդի կինոգործիչ Վարուժան Քարին Սասիհիի (Գրիգորյան) «Վերջին վարագույրը» ֆիլմը շահել է 9 մրցանակ (1991): Ճանաչված կինոդերասանուհիներ են Մ.Պետրոսյանը եւ Ժ.Ոսկանյանը: Հայկական թեմայով հիմնկարներ են ստեղծել Ա.Հովաննիսյանը, Զ.Ղուկասյանը: Հայ եւ իրանցի կինոգործիչների համագործակցությամբ նկարահանվել են «Տավարիշ» եւ «Զինաթափում» ֆիլմերը:

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1636-ին, Խատաչուր Կեսարացու եւ մի խումբ հա յ գործիչների ջանքերով, հիմնվել է Նոր Զուղայի հայկական տպագրությունը, որն առաջինն էր Իրանում եւ ամբողջ Միջին Արեւելքում: Իր գոյության առաջին հինգ տարում (1638-42) հրատարակել է «Սաղմոս ի Դավիթ»-ը «Հարաց վարք»-ը «Պատարագատետր (խոնրհրդատետր)-ը եւ «Ատենի ժամագիրք»-ը, ապա՝ «Գիրք տոմարաց...»-ը (1647): 1637-38-ին լույս է ընծայել երեք դավանաբանական գիրք: Մոտ երկու հարյուրամյա դադարից հետո՝ 1872-ից, տպարանը գործում է մշտապես: Տպագրել է շուրջ 380 անուն գիրք եւ գրքույկ, որոնցից հատուկ արժեք են ներկայացնում՝ Հ.Տեր Հովհաննիսյանի «Պատմություն Նոր Զուղայի...» (հ.1-2, 1880-1881), Ա.Աթայանի «Սալմաստ» (1906), Լ.Մինասյանի «Սպահանի Փերիա գավառը» (1971): « Փերիաի Աշուղները » (1964): Վերջին տարիներին հրատարակություններից կարելուր են Է.Մանճիկյանի «Հովհաննես կաթողիկոս Օփեցի» (1967), Հ.Ալահվերդյանի «Դել (Մարգար Ղարաբեգյան) եւ իր պոեզիան» (1972) եւ այլ աշխատություններ նույն

տպարանում է տպագրվել նաեւ «Նոր Ջուղայի լրաբեր»-ը: 1979 թվականից հետո տպագրվել են հարյուրավոր գրքեր հայերենով եւ պարսկերենով հայոց պատմության եւ մշակույթի մասին:

Իրանահայ տպագրության երկրորդ կենտրոնը եղել է Թավրիզը: Տեղի Արամյան դպրոցում 1888-ին, Ատրպատականի հայոց առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Մխիթարյանի ջանքերով եւ Մոսկվայաբնակ Յովհաննես Յովնանյանցի բաերարությամբ, հիմնվել է տպարան, որտեղ լույս են տեսել գրքեր, դասագրքեր, օրացույցներ, պարբերականներ: «Թեհրանահայ ուսումնասիրաց ընկերություն» հիմնադիրներ՝ Մ.Մարգարյանի, Յ.Գասպարյանի եւ Կ.Բազիրկանյանի ջանքերով ճավայի հայություն օժանդակությամբ 1890 թ. Թեհրանում հիմնադրվում է «ճավահայ տպարան» որտեղ տպագրվել է իրանահայ առաջին պարբերականը՝ «Շավիղ» շաբաթաթերթը: Հետագայում Թեհրանում հիմնադրվել են «Նուրբախշ» (Մասիս 1955), «Վերածնունդ» (Բոբոխ 1933-1953), «Փարոս» (1901-1963), «Մողեբն», «Նայիրի» (1959), «Ալիք» (1950), «Ֆարաբի» (1975), «Արաքս» (1955), «Անի» (1956-1980), եւ այլ տպարաններ:

ՄԱՍՈՒԼ

Իրանում մինչեւ օրս հրատարակվել են ավելի քան 80 անուն հայերեն պարբերական: Առաջինը՝ «Շավիղ» շաբաթաթերթը, հրատարակվել է 1894-97 թ. Թեհրանում: Ներկայումս (2000 թ.) լույս են տեսնում «Ալիք» օրաթերթը, «Լույս» երկշաբաթերթը, «Արաքս» ամսագիրը, «Ապագա» եռամսյա հանդեսը եւ «Պայման» պարբերականը:

ԱԼԻԶ

ՀՀԴ կուսակցության հասարակական քաղաքական, գրական-գեղարվեստական պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1931-ից Թեհրանում՝ նախ որպես շաբաթաթերթ, ապա կիսաշաբաթաթերթ, 1935-ի հունվարից՝ երկօրյա, այնուհետեւ՝ երեկոյան օրաթերթ: Անդրադառնում է համաիրանական լուրերին, իրանահայ կյանքին, սփյուռքի եւ Հայաստանի իրադարձություններին, ՀՀԴ գաղափարախոսության

հարցերին: Թերթի արտոնատերերն են եղել Ա.Միքայելյանը, Ա.Բաբայանը, Ռ.Ստեփանյանը, 1989-ից՝ Ա.Աճեմյանը, խմբագիրներ՝ Յ.Յովհաննիսյանը, Տ.Պողոսյանը, Բ.Մինասյանը, Ն.Պահլավունին, Յ.Խալաթյանը, Էդ.Երիցյանը, Ն.Էլսայանը:

ԱՅԳ

Հանրամատչելի շաբաթաթերթ, ապա՝ հասարակական-քաղաքական եռօրյա, այնուհետև՝ երկօրյա: Հրատարակվել է 1912-22-ը Թավրիզում: Խմբագիրներ՝ Մ.Սահակյան, ապա Գ.Հակոբյան:

ԱՊԱԳԱ

Մշակութային եւ հասարակական անկախ ամսագիր: Առաջին համարը լույս է տեսել 1995 թ. սեպտեմբերի 30-ին, Թեհրանում, սակայն երկրորդ համարից արգելվել է: Երեք տարի ընդմիջումից հետո, երբ ռեֆորմիստականները գործի գլուխ անցան, շարունակվել է մինչեւ 15 համար (1994 թ. դեկտեմբեր) այնուհետև վերածվել է հայագիտական-իրանագիտական եռամսյա հանդեսի: Ամսագրի 2/3-ը հայերեն, իսկ 1/3-ը պարսկերեն էր տպագրվում: Էջերը հատկացվել էին իրանահայ համայնքի եւ այրենիքի ամենակարեւոր հարցերին, ներկայացվում էին հայ եւ պարսիկ ժողովուրդների մշակութային արժեքները: Մեծ ազդեցություն թողեց իրանահայ համայնքում եւ զգաստացրեց թեմական իշխանություններին: Արտոնատեր եւ գլխավոր խմբագիրն էր Էդիկ Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ):

ԱՊԱԳԱ

Հայագիտական-իրանագիտական եռամսյա հանդես, առաջին եւ երկրորդ միացյալ համարները լույս են տեսել 2000 թ. ամռանը, Թեհրանում: Հանդեսը միջազգային սպառում ունի եւ հրատարակվում է հայերեն, պարսկերեն եւ անգլերեն լեզուներով: Արտոնատեր եւ գլխավոր խմբագիրն է Էդիկ Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ):

ԱՐԱՔՍ

Գրական, մշակութային, հասարակական ամսագիր, «Հայկական ժողովրդական շարժման» հրատարակչություն: Լույս է տեսնում ընդմիջումներով՝ 1987-ից Թեհրանում: Արտոնատեր՝ Յ. Գրիգորյան եւ Ա.Եսայան: Պաշտպանել է

խորհրդային Հայաստանի շահերը, այժմ՝ վերապահումներով պաշտպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը: Թերթի առանցքային հարցը Հայ Դատն է: Անդրադառնում է իրանական, մասամբ՝ իրանահայ կյանքին: Յուրաքանչյուր համարում 5-10 էջ հատկացվում է պարսկերեն նյութերի հրատարակմանը: Պարսիկ ընթերցողին ծանոթացնում է հայկական հարցին:

ԱՐԵՒԵԼՔ

Հասարակական-քաղաքական գրական շաբաթաթերթ, 1945-ից՝ եռօրյա: Լույս է տեսել 1944-46-ին, Թավրիզում: Հրատարակվել է «Հակաֆաշիստական թերթիկ» (1943-44), «Հակաֆաշիստական թերթ» (1944), «Հակաֆաշիստ» (1943-45) անուններով: Խմբագիր՝ Դ.Գեւորգյան: Լուսաբանել է ԽՍՀՄ հայրենական մեծ պատերազմի ընթացքը, տպագրել է հաղորդագրություններ եւ ակնարկներ հայ ռազմիկների քաջագործությունների մասին, ինչպես նաեւ՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, խորհրդային Հայաստանի տնտեսական, գիտական ու մշակութային կյանքը պատկերող նյութեր:

ԱՐՄԵՆՈՒՅԻ

Գրական-մշակութային եւ պատմագիտական ամսօրյան հանդես: Հրատարակվել է 1949-55-ը Թեհրանում: Արտոնատեր՝ Ա.Տեր Օհանյան: Խմբագրական մարմին՝ Ա.Անտոնյան (Արմանտ), Ա.Մամյան, Ս.Խաչիկյան: Տպագրել է գրական, պատմական, գիտա-առողջապահական, արվեստաբանական հոդվածներ, նաեւ՝ հայ եւ համաշխարհային գրականության դասականների, ինչպես նաեւ իրանցի եւ իրանահայ սկսնակ գրողների գործերը: Պարբերաբար տեղեկություններ է տվել իրանահայ կրթական եւ մշակութային կյանքի մասին:

ԱՐՓԻ

Գրական, գիտական, հասարակական ամսագիր: Հրատարակվել է 1949-55-ը Թեհրանում: Հրատարակիչ խաբազիր՝ Հ.Թադեւոսյան: 1950-53-ին ունեցել է մանկական «Արփի» հավելվածը: Տպագրել է գրական-գեղարվեստական, արվեստաբանական նյութեր, թարգմանություններ եւրոպական եւ հատկապես ռուս գրականությունից, մեծ տեղ է հատկացրել խորհրդահայ գրողների ստեղծագոր-

ծություններին եւ միջազգային քաղաքական նորություններին: Մանկական «Արփի» հավելվածում տպագրվել են բանաստեղծություններ, հեքիաթներ, մանկական խաղեր:

ԲՈՐՈՒՄ

Հասարակական, երգիծական երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Հրատարակվել է 1920-1942-ը թեհրանում: Արտոնատեր՝ Ա.Աղասյան, խմբագիր՝ Հ.Գարգաշ: 1933-ին ունեցել է «Մանկական բոբոխ» էջը: 1930-ին «Բոբոխի» հետ լույս է տեսել «Վերածնունդ» հասարակական-քաղաքական եւ գրական անկախ շաբաթաթերթը: Խարազանել է հայ հասարակական կյանքի ստվերոտ կողմերը, պատկերել ժամանակի իրանահայ կյանքի ելեւեջները, արտացոլել հասարակական հոսանքների ձգտումներն ու տրամադրությունները: 1940-43-ը նրան կից հրատարակվել է երկու էջով «Բոբոխ»-ի պատանեկան եւ մանկական բաժինը:

ԳԱՂԱՓԱՐ

Հասարակական-քաղաքական գրական եռօրյա թերթ: Լույս է տեսել 1925-27-ը թեհրանում, արտոնատեր՝ Ա.Բեգյան, խմբագիր՝ Ա.Ղազարյան: Ձգտել է սփյուռքը կապել մայր հայրենիքին, ջատագովել հայահավաքման գաղափարը՝ աջակցելով Խորհրդային Հայաստանի կառավարության միջոցառումներին: Մեծ տեղ է հատկացրել Խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքին: Տպագրել է գիտագրական եւ գեղարվեստական նյութեր, թարգմանություններ: Պարբերականին կից 1926-27-ը լույս է տեսել «նոր գաղափար» եռամսյա հավելվածը:

ԶԱՆԳ

Հասարակական-քաղաքական, տնտեսական եւ գրական շաբաթաթերթ (վերջում՝ կիսաշաբաթաթերթ): Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության հրատարակություն: Լույս է տեսել 1910-22-ը Թավրիզում: Արտոնատեր՝ Ա.Պատմագրյան, հիմնադիր խմբագիր՝ Ալ. Տեր Վարդանյան, ապա՝ Վ.Մարսյան:

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական երկշաբաթաթերթ: Լույս է տեսնում 2000 թ. մարտից թեհրանում, անդրադառնում է իրանահայ գաղութի կյանքի բոլոր հարցերին, Հայաստանի,

Արցախի եւ սփյուռքի կյանքին: Արտոնատեր եւ գլխավոր խմբագիրն է Էդիկ Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ):

ԼՈՒՍԱԲԵՐ

Մանկապատեկան, գրական, գեղարվեստական, մանկավարժական պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1949-1971 թթ. Թեհրանում: Արտոնատեր-խմբագիր՝ Ա.Մուրադխանյան հետագայում խմբագրել է Ա.Գառոնեն (Ա. Տեր-Բաղդասարյան): Տպագրել է հայ եւ օտար դասականների ստեղծագործություններ, արձակ եւ չափածո գործեր, պիեսներ, երգեր եւ այլն: Մատչելի նյութերով ներկայացրել է գրականության եւ արվեստի նշանավոր գործիչների կյանքն ու գործունեությունը (Կոմիտաս, Պ.Աղամյան, Ա.Իսահակյան, Ա.Զորյան եւ ուրիշներ), ծանոթացրել Հայաստանի պատմական հուշարձաններին երեխաներին ուսուցանել վարվելակերպի կանոններ:

ԾԻԱԾԱՆ

Գրական, մշակութային եւ հասարակական ամսագիր: «Իրանահայ ազգային եւ մշակութային միության» օրգան: Հրատարակվել է 1982-88 թթ. Թեհրանում: Արտոնատեր՝ Կ.Օհանջանյան: Անդրադառնում էր երկրի քաղաքական կարեւորագույն իրադարձություններին, ներկայացնում իրանահայ ազգային եւ մշակութային կյանքը, արտատպություններ կատարում հայկական մամուլից:

ՀՈՒՐ

Գրական, գիտական եւ հասարակական ամսագիր: Լույս է տեսել 1971-74 թթ. Թեհրանում, հայերեն եւ պարկերեն: Խմբագիր՝ Գ.Հովակիմյան: Տպագրել է հայ եւ պարսիկ ժողովուրդների պատմական կապերն ու փոխհարաբերությունները լուսաբանող հոդվածներ, ուսումնասիրություններ, բանասիրական գործեր: Ներկայացրել է իրանահայ մշակութային կյանքը, պարսիկ ընթերցողին ծանոթացրել դասական եւ ժամանակակից հայ գրողների ստեղծագործություններին: Ամսագրում տեղ են գտել նաեւ գիտական, մատենագիտական, մանկավարժական ուսումնասիրություններ:

ՄԻՏՔ

Հասարակական-քաղաքական, գրական շաբաթաթերթ: Հրատարակվել է 1912-14 թթ. Թավրիզում: Տնօրեն՝ Մ.Բաղդա-

սարյան, խմբագիր-հրատարակիչ՝ Ալ.Տեր Վարդանյան: Անդրադարձել է իրանահայ գաղութի կյանքին, Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմական ճակատագրին, տպագրել իրանահայ գրողների ստեղծագործություններ, գրախոսականներ, մշակութային լուրեր:

ՆՈՐ ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր: Հրատարակվել է ընդմիջումներով՝ 1942-48 թթ. Թեհրանում (1944-ին լույս չի տեսել): Խմբագիր՝ Ա.Տեր Օհանյան: Մեծ ուշադրություն է դարձրել իրանահայ երիտասարդության կրթության, բարոյական եւ գեղագիտական դաստիարակության հարցերին: Տպագրել է իրանահայ գրողների եւ համաշխարհային (թարգմանաբար) գրականության դասականների գործերի: Բնագիտությանը, արվեստի ու պատմությանը նվիրված հոդվածներ:

ՆՈՐ ԷԶ

Գրական ժողովածու: Լույս է տեսել 1935-43, 1953-78 թթ. Թեհրանում՝ իրանահայ երիտասարդ ստեղծագործողների նախաձեռնությամբ: Խմբագիրներ՝ Զ.Միրզոյան, Գ.Խանենց: Տպագրել է իրանահայ արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործությունները: Լույս է տեսել 24-րդ համարը երեւանում:

ՆՈՐ ԽՈՍԷ

Հասարակական-քաղաքական շաբաթաթերթ, Թեհրանի «Հայ մշակութային կենտրոնի» օրգան: Լույս է տեսել 1979-80 թթ. Թեհրանում, խմբագիր Սուրեն Համբալչան:

ՀԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորագիրը ծանոթացրել է Խորհրդային Հայաստանի գրականության ու մշակույթի նորություններին: Թարգմանաբար տպագրել է նաեւ ռուս եւ եվրոպացի գրողների գործերը:

ՆՈՐ ԿՅԱՆՔ

Հասարակական-քաղաքական եւ գրական շաբաթաթերթ, հետագայում՝ եռօրյա: Հրատարակվել է 1922-27 թթ. Թեհրանում: Արտոնատեր՝ Ստ.Խանբաբյան, ապա՝ Վ.Հովհաննիսյան, խմբագիր Օ.Մխիթարյան («Ֆենիքս»):

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԼՐԱԲԵՐ

Ամսաթերթ: Նոր Ջուղայի ազգային հոգաբարձության հրատարակություն: Լույս է տեսել 1904-08 թթ. Նոր Ջուղայում: Խմբագիր՝ Ի.Վարդազարյան: Տպագրել է հոգաբարձության եւ առաջնորդարանի տեղեկագրերն ու բարեգործական հաստատությունների գործունեության վերաբրյալ: Ծանոթացրել է Պարսկաստանի եւ Հնդկաստանի հայկական գաղթավայրերի կյանքին, տպագրել պասրկահայ գրողների ստեղծագործություններ, ռուս եւ եվրոպական գրականության մնուշներ:

ՇԱՎԻՂ

Գրական եւ քաղաքական շաբաթաթերթ: Իրանահայ ռաջին պաբերականը: Հրատարակվել է 1894-97 թթ. Թեհրանում: Արտոնատեր ու հրատարակիչ (նաեւ անվանական խմբագիր) Ա.Բեկնազարյան: Խմբագիրներ՝ Հ.Խան Մասեյան (1894), Վ.Փափազյան: Մեծ տեղ է հատկացրել իրանահայ աշխատանքավորության, հատկապես գյուղացիության սոցիալ-տնտեսական, իրավական կենցաղային վիճակին, բարձրացրել լուսավորության հարցեր: Ունեցել է գրական հարուստ բաժին, թարգմանաբար ներկայացրել եվրոպական, ռուս եւ պարսիկ գրողներին:

ՊԱՅԱԿ

Քաղաքական-հասարակական եւ գրական երկօրյա թերթ, Թեհրան 1952 թ.: Արտոնատերը Մուշեղ Մաստյան:

ՊԱՐՍԿԱՅԱՅ ՏԱՐԵՑՈՒՅՑ

Թեհրան 1927, 1929, 1930: Խմբագիր եւ հրատարակիչ՝ Հայկ Գարգաշ:

ՋԱՅԱԿԻՐ

Հոգեւոր, բարոյագիտական, առողջապահական եւ տեղեկատու պարբերական (ամսաթերթ): Գալստյան եկեղեցու հրատարակություն: Լույս է տեսել 1963-90 թթ. Թեհրանում: Խմբագիր՝ Հ.Սալաքյան:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Հասարակական-քաղաքական, գրական լրագիր: Լույս է տեսել 1930-53 թթ. Թեհրանում՝ տարբեր պարբերականությամբ (օրաթերթ, երկօրյա, եռօրյա եւ այլն): Խմբագիր-արտոնատեր՝ Հ.Գարգաշ: Լուսաբանել է իրանահայ համայնքի առօրյան, հանդես է եկել հանուն նրա միասնության: Լայնորեն ներկայացրել է Խորհրդային

Հայաստանի տնտեսության, գիտության ու մշակույթի առջընթացը, սփյուռքահայության գոյատևման նախապայման համարել սերտ կապը հայրենիքի հետ: ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի տարիներին անդրադարձել է ռազմաճակատի իրադարձություններին, հայ ռազմիկների սխրանքներին: Հետապատերազմյան շրջանում սատարել է հայրենադարձությանը: Ունեցել է գրական բաժին, ուր հայ գրողների գործերից բացի թարգմանաբար ներկայացրել է պարսկական գրականությունը: Տպագրել է նաեւ գիտության ու մշակույթի տարբեր բնագավառներին նվիրված հոդվածներ: 1930-42 թթ. հրատարակել է նաեւ «Բոբոխ» հավելվածը:

ՐԱՖԶԻ ՏԱՐԵԳԻՐԸ

Թեհրան, 1969, 1970, 1971 հրատարակիչ խմբագիր՝ Տաճատ Պողոսյան: 1971-ին հատորը լույս է տեսել 1984 թ. խմբագրի դստեր՝ Արմինե Պողոսյանի կողմից, Լ.Գ.Մինասյանի խմբագրությամբ:

ՑԱԽԱՎԵԼ

Երգիծական պատկերազարդ երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1943-1944 եւ 1950-1958 թթ. Թեհրանում: Խմբագիր՝ Ե.Բազեն (Միրզայան): 1943-44 թթ. հրատարակվել է որպես ժողովածու (1-8 համար): Խարազանել է իրանահայ կյանքի արատավոր կողմերը:

ՓՅՈՒՆԻԿ

Գրական, հասարակական-քաղաքական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1979-83 թթ. Թեհրանում: Հանդես է եկել իրանական հեղափոխությանը սպառնացող ուժերի, միջազգային իմպերիալիզմի դեմ, ծանոթացրել ԽՍՀՄ քաղաքական կառուցվածքին եւ միութենական հանրապետությունների իրավունքներին: «Կռունկ խաբրիկ մը չունիս» խորագրով պատմել է Խորհրդային Հայաստանի առօրյայի մասին: Արտոնատեր՝ Ժորժ Համբարչյան, խմբագիր Յրաչ Հախվերդյան:

Իրանահայության դերն Իրանի փաղափական կյանքում

Ինչպես նախապես հիշեցինք, Իրանում հայերը եղել են դեռևս մ.թ.ա. 6-րդ դ.։ Դրանք հիմնականում հայկական զորամասեր էին, որոնք վասալական պարտավորություն էին կատարում՝ ծառայելով Աֆեմենյան պետականությանը։ Թերևս մ.թ.ա. 7-րդ դ. (605թ.) Պարույր Սկայորդին օգնեց Մարաստանի Կիսաբարին՝ Ասորեստանի կործանման համար։ Հիշատակելի է, որ Տիգրան Երվանդյանը եղել է Կյուրոսի մերձավոր, որսակից ընկերը։ Դարեհ Ա Վշտասյանի գահակալության ժամանակ (մ.թ.ա. 522-486 թթ.) եւ մինչև նա կամրապնդեր իր գահը, մի շարք երկրներ դուրս էին եկել Աֆեմենյանների հպատակությունից եւ ապստամբության դրոշ պարզել։ Ապստամբ երկրների թվում էր եւ Հայաստանը։ Աֆեմենյանների դեմ ընդվզած հայերին ճնշելու համար ուղարկված պարսից զորաբանակները ստիպված են եղել մի քանի ամիսների ընթացքում մղելու հինգ նակատամարտ՝ երկուսը պարսիկ զորավար Վահումիսայի, իսկ երեքը՝ հայ զորավար Դադարշիշի հրամանատարությամբ։ Վերջինս ապստամբ հայերի դեմ նակատամարտեր մղեց հետեվյալ վայրերում։ Հայաստանի Զուլա ավանի մոտ՝ 521 թ. մայիսիս 21-ին, Հայաստանի Տիգրա ամրոցի մոտ՝ 521 թ. մայիսի 31-ին, Հայաստանի Ուլամա ամրոցի մոտ՝ 521 թ. հունիսի 21-ին։ Սակայն մեզնի հայ ապստամբներին վերջնական ընկնել չէր հաջողվել։ Հետագայում հայերը իրենց դերն են ունենում պարսկական բանակում՝ օրինակ, մ.թ.ա. 480 թ. Հունաստան արշաված Քսերքսես արքայի բանակում կար նաեւ հայկական զորամաս։

15-րդ դարի երկրորդ կեսին Իրանի Ադ-Ղոյունլու իշխան Ուզուն Հասանը օսմանցիների դեմ միացյալ նակատ կազմելու նպատակով, 1496 թ. Իտալիա է ուղարկում իր հավատարիմ սպասավոր եւ պաշտոնյա հայազգի խոջա Միրաֆին (Մուրազ կամ Միրաթ)։ Նա 1470 թ. փետրվարին հասնում է Վենետիկ եւ բանակցության նստում Վենետիկի հանրապետության հետ։ Ապա տեսակցություն է ունենում Հռոմի Պապի եւ Նեապոլի թագավորի հետ։

Շահ Աբբաս մեծի օրոք հայերը չափազանց նշանակալից դեր են ունեցել երկրի քաղաքական եւ զինվորական կյանքում, նրանցից կարելի է հիշել մի քանիսին։ Շահը դափնափոխ քրիստոնյաներից ստեղծում է 15.000 հոգանոց հեծելազոր, որի կարեվորագույն մասն էին կազմում հայերը։ Այսպես, նրանք ստրուկներ եւ ծառաներ էին եւ կազմում հայերը։ Այսպես, նրանց հրամանատարը Ղուլար-Աղասի էր անվանվում։ Շահ Աբբասի ամենանշանավոր սպարապետ եւ Ղուլար-Աղասին էր հայազգի Ալլահվերդի խանը, որ Շահի կողմից շատ սիրված եւ հարգելի անձնավորություն էր։ Նա նշանակվեց Ֆարս նահանգի իշխանաց իշխան («Ամիր-օլ-Օմարա») եւ ընդհանուր զորքի սպարապետ (1595 թ.), ապա Քուլիդյե նահանգն էլ անցավ նրա իշխանության

տակ: Այնուհետև մինչև 1601 թ. Լարի մարզի եւ Օմմանի ծովափնյա շրջանների ու Բահրեյն կղզու իշխանությունն ստացավ:

Ալլահվերդի խանի մահից հետո, Շահը Ֆարս նահանգի իշխանաց իշտանությունը հանձնեց նրա անդրանիկ որդուն՝ Էմամ-Ղուլի խանին, որը Լարեստանի կառավարիչն էր, իսկ մյուս որդուն՝ Դավուդ խանին նշանակեց Ղարաբաղի իշխանաց իշխան:

Մյուս հայազգի գործիչներից էր երեվանցի Ղարչղայ խան Ղուլար-Աղասին: Նրան իր ցուցաբերած ֆաշագործությունների եվ հավատարմության պատճառով, նշանակեցին երկրի սպարապետ, Ատրպատականի եւ Խորասանի իշխան եւ իր մահից հետո Խորասանի նահանգապետությունը հանձնեցին նրա որդուն՝ Մանուչեհր խանին:

Յուսեֆ խանը վերոհիշյալ Ղարչղայ խանի մտերիմ ընկերներից, Շիրվանի իշխանից իշխանն էր: Շահ Աբբասը հանախ սիրալիլը կերպով երկուսին միասին իր մոտ էր կանչում:

Շահ Աբբասը բոլոր դեսպանական այցերին եվրոպական եւ արեվելյան երկրներ, օգտագործում էր հայերին, բարձր գնահատելով նրանց գիտելիքները տվյալ երկրի մասին: Օրինակ Նոր Զուղայի ֆալանթարներ (ֆաղաֆապտներ) Խոջա Նազար եւ Խոջա Սաֆրազը «Թագավորի խորհրդականներն» էին: Նա հանախ հայերից էր ընտրում իր դեսպաններին, օրինակ, Հակոբ Մարգարյան Ամեդեցի (1547 թ.), առեւտրական դեսպաններ չուղայեցիներ Մարտիրոս, Տեր-Գաբրիել եւ Գալաթեկ: Խոջա Սաֆարը Շահի դեսպանն էր Վենետիկում (1610 թ.), եւ Յաղուբը (Հակոբ) Լեհաստանում ու Գերմանիայում (1616 թ.), իսկ Շահ Սեֆին 1640 թ. Միրզա Մուսաբեգ անունով մի հայի վարչակալ է ուղարկում :

Նադիր Շահ Աֆշարը (1688-1747 թթ.) մի խումբ հայերի, հակառակ իրենց կամքի, գաղթեցրեց Խորասան նահանգը , որպեսզի աջակցեն այդ շրջանի առեվտրի զարգացմանը: Մի խումբ հայեր ներգրավեց իր բանակում: Թուրքերի դեմ Նադիր Շահի պայքարում նրան դաշնակցել են Արցախի, Սյունիքի, Այրարատի հայերը:

Հայասեր Քարիմ Խան Զանդից (1699-1779) հետո Աղա Մահմեդ խան Ղաջարն (1742-97 թթ.) է գահակալում: Սա եվս իր բանակում ուներ մեծ թվով հայեր, որոնք գլխավորապես ծառայում էին որպես թնդանոթաձիգներ:

Ղաջարների (Կաջարների) հարստության տիրապետության նախնական ժամանակաշրջանում, նրանց ծառայել են բազմաթիվ հայեր, օրինակ, գեներալ Դավիթ Խան Սագինյանը, Ֆաթալիշահի ժամանակ Իրանի զորաբաժանումների հրամանատարն էր Ֆարս եւ Սպահան նահանգներում, Խուդադ-խան էրմենին (1781-1847), որը 1831-ից ստացել է իսանության տիտղոս, դարձել Խոյի,

Արդարիւի, Ուրմիայի, Քերմանշահ եւ Իրաքի հրամանատար, 1844 թ. Թալիքի գի կուսակալ, Կուլամ-Հյուսեյն խան Ֆաթալիշահի եւ հայուհի Խորիշանի (շահի 57-րդ կնոջ) դստեր՝ Մահ-Բեգումի ամուսինը. եղել է Իրաքի մարզպանի տեղապահ, 1824-ից սպարապետ: Մուսիս խան (18-րդ դ. երկրորդ կես 1820 կամ 1821) ռազմական գործիչ, թնդանոթաճիգների գլխավոր, ծառայել է Աղա Մահմեդ խանի եւ Ֆաթալի շահի ժամանակ, մասնակցել է բազմաթիվ հակատամարտերի, թաղված է Ղազվինի հայոց եկեղեցու բակում: Յուսուֆ-խան Ամիր Թուփխանե Գոլոյենց (ծն. 1783-85) ռազմական գործիչ, 19-րդ դարի Իրանի պատմության ականավոր դեմքերից էր:

Ղաջարների (կամ Կաջարների) հարստության տիրապետության ժամանակ բազմաթիվ իրանահայեր ծառայել են պետական եւ արքունական շրջանակներում: Ստորեւ ժամանակակցական կարգով ներկայացնում ենք նրանց.

1. Մարգար խան Դավիթխանյան. Ֆաթալի շահի գործակալը 1804-1848 թթ.,

2. Միր Դավիթ Մելիք Շահնագարյան. Նրա մասին կենսագրական նյութերը պակասում են, սակայն գիտենք, որ 1816 թ. որպես դեսպան մեկնում է Փարիզ: Թագածառանգ Աբբաս Միրզան նրան Կ. Պոլսի հանապարհով Պետերբուրգ է ուղարկել, ուսումնական սահմանային վեների կապակցությամբ, ցարական կառավարության հետ բանակցություններ վարելու: Կ. Պոլսի հանապարհն ընտրելու պատճառն այն էր, որ Աբբաս Միրզան ցանկանում էր ուղղակիորեն բանակցել Պետերբուրգի հետ, սակայն Կովասում գտնվող ուսումնականությունները Իրանի դեսպանին թույլ չէին տալիս Ռուսաստան անցնելու: 1826 թ. հոկտեմբերի 7-ին Միր Դավիթն Աբբաս Միրզայի պատկերով մի նամակ է գրում Ավստրիայի իշխան Մտտերնիխին եւ նրանից խնդրում է, որ Իրանի շահերը պաշտպանի:

Կ. Պոլսում նա բանակցում է ուսումնական հետ. նրան տեղեկացնում են, որ բոլոր բանակցությունները պիտի վարել Վրաստանի փոխարքայի հետ: Թեհրանի սուրբ Թադեոս Բարդուղիմեոս եկեղեցու բակի շիրմաքարերից մեկի վրա գրված է «Ասպետ Մելիք Շահնագարեան, հանգեաւ 1853 ապրիլ 30»:

3. Յուսուֆ խան (Մատուր կամ Մինաս Մայիլյանց): Ծնվել է 1781(82)-ին Թիֆլիսում: 1792 թ. գերեվարվել է պարսիկների կողմից, եղել է պետական գործիչ եւ Ֆաթալի Շահի խորհրդատու: Նա զաղտնի պահել է ֆրիստոնեությունը: Մահացել է 1824-ին: Մահից հետո սպարապետության պաշտոնն անցել է որդուն՝ Կուլամ-Հյուսեյնին:

4. Յուսուֆ խան, թնդանոթաճիգ, ծնվել է Թիֆլիսում, արցախցիների ընտանիքում: 1795 թ. Աղա-Մահմեդ խանը նրան

քերել է Իրան եւ Թեհրանում նրան հանձնել թնդանոթաձուլման գործը: Մահացել է Թեհրանում:

5. Դավիթ խան Դավթյան. Մնվել է 1786 թ. Կարբիում: Տիրապետել է հայերեն, պարսկերեն, իտալերեն, ֆրանսերեն, հունարեն, թուրքերեն լեզուներին: Նդել է հյուպատոսը Զմյուռնիայում, Վիեննայում եւ Պետերբուրգում: Մահացել է 1850 թ.:

6. Զոհրաբ-խան Խազն Շահրիար. Մնվել է 1786-87 թ. Թիֆլիսում: Սմիրջանյան ընտանիքում, 1795 թ. գերեվարվել է Աղա Մահմեդ խանի ժամանակ: Նդել է Շահի սենեկապետ: Ամուսնացել Ֆաթիալի Շահի դստեր՝ Փաշա խանումի հետ: Նդել է արժույթի գանձապահ:

7. Զոհրաբ խան Վարդ Պատրիկեց. Մնվել է Թիֆլիսում, գերեվարվել է Աղա Մահմեդ խանի արշավանքների ժամանակ: Նդել է Իրանի արժույթի գանձապետ: Մահացել է 1850 թ.:

8. Ժան Դավութ խան (Հովհաննես Դավթյան). Մնվել է Զմյուռնիայում, նդել է դիվանագետ, պարգեվատուրել է պարսկական եւ եւրոպական զանազան շքանշաններով: Մահացել է 1865 թ.:

9. Սեթ խան Աստվածատրյան. Սեթ-խանյան կամ Աստվածատրյան 9 կամ Ասատրյան0: Այս գերդաստանի ավագ՝ Սեթ խան Աստվածատրյանը (Սեդդի Բեյզ) ծնվել է Բուշեհրում: Նա իր մայրենի լեզուն սովորում է ծննդավայրի հայկական եկեղեցում: 13 տարեկանում մեկնում է Հնդկաստանի Բոմբեյ ֆաղաֆը ուսանելու: Ավարտելով ուսումը Իրան է վերադառնում եւ անցնում պետական աշխատանքի: Նա Թեհրանում դարձավ արժույթի պաշտոնյա, ապա 1810 թ. Իրանի պետությունը նրան ուղարկում է Լոնդոն: Որպես Միրզա Սալեհ Շիրազի խորհրդատու, երկրորդ անգամ Լոնդոն է մեկնում:

1828 թ. Սեթ խանը Ֆաթիալի Շահի կողմից ներկայացավ Օսմանական Սուլթանի մոտ: Նա մի շարք աշխատանքներ կատարեց Ատրպատականում, եւ վայելում էր, թագաժառանգ Աբբաս Միրզայի սերը: Նրա զավակները՝ Էսֆանդար խան եւ Սամսոն խանը եւս պետական բարձրաստիճան պաշտոնյաներ էին:

Սեթ խանը վախճանվեց 1842 թվականին Թեհրանում:

10. Մանուչար խան Էնոկոլոպյան-Մամիկոնյան (Շամս-օլ-դոլլե).

Ղարաբ հարստության հիմնադիր Աղա Մահմեդ խանը 1795-1797 իր կովկասյան արշավանքից հետո մեծ թվով հայեր է քերում Իրան, Էնոկոլոպյան ազնվատոհմ ընտանիքը մույնպես նրանց մեջ էր: Նրանք իրենց հիմնադրող պապի անունով՝ Զոհրաբյան էին կոչվում: Իսկ Էնոկոլոպ վրացերեն նշանակում է «գիտության շտեմարան», (Զոհրաբի գիտական հաբավի պատմառոյ):

Մանուչեհր (կամ Մանուշար) խանը 8-10 տարեկանում է Իրան բերվում (1795 թ.). նրա մասին կենսագրական տվյալները լրիվ չեն, սակայն նրա գլխավոր գործունեությունը սկսում է 1837 թ.: Այդ թվականին Բասրան ապստամբել էր Իրանի դեմ: Մանուչեհր խանը 40.000 զինվորների գլուխն անցած, հաջողությամբ զսպում է ապստամբությունը: 1840-47 թթ. լինում է Սպահանի նահանգապետ, հայազգի Խոսրով Տեր-Սամվելյանից հետո (Ֆաթհալի, Մահմեդ եւ Նասրեդդին շահերի ժամանակ): Նա կատարել է շինարարական բարեփոխական լայն գործունեություն եւ վախճանվել է 1847 թ. փետրվարի 9-ին: Թաղված է Ղում ֆաղաֆում: Նրա գերեզմանը զարդարել է իշխան Դավիթ Մելիֆոլը, Մանուշար խանի քրոջ որդին:

11. Աղազար խան էնոկոլոպյան. Նա Մանուշար խանի եղբայրն է, ծնված 1807 թ. Թիֆլիսում (ներանց ծնողները Աղա Մահմեդ խանի արշավանքից հետո, մնացել էին Թիֆլիսում): Աղազարն անցնելով Իրան, իր եղոր աջակցությամբ զբաղեցնում է տարբեր պաշտոններ: Նոյն է հյուպատոս Թիֆլիսում, Վանում, Կարինում, Հին Բայազետում եւ այլ տեղերում:

12. Միրզա Գեորգ խան էնոկոլոպյան. նա Մանուշար խանի եղբորորդին էր, լավ կրթված եւ մասնագետ մեքենագիտության եւ նարտարապետության բնագավառներում: 1847 թ. Սպահանի նահանգապետ նշանակվեց Մանուշար խանից հետո:

13. Սողոսոն խան էնոկոլոպյան (Սահամոլոդոլե). Նա Գեորգ խանի եղբայրն է եւ Իրանի պետական կյանքի մեջ ծանոթ էր Սոլեյման խան անունով:

Նա Թիֆլիսից կամովին եկել էր Իրան եւ գործակցել իր հորեղբոր՝ Մանուշար խանի հետ: Նոյն է նահանգապետ Ֆարսի, Սպահանի եւ Խուզստանի:

14. Նարիման խան էնոկոլոպյան-Մամիկոնյան (Ղավամոսաթանե). Սողոմն խանի մեծ որդին էր, ծնված Թեհրանում: Նա իր տարրական ուսումը ստանալով ծննդավայրում, բարձրագույն կրթության համար մեկնում է Փարիզ: Սովորել է արեւելյան եւ արեւմտյան մի քանի լեզուներ:

Նա վարել է պետական զանազան պաշտոններ, եղել է Կ.Պոլսում Իրանի դեսպանի խոհրդական, 1861 թ. Նասրեդդին շահի թիկնապահ, 1869 թ. Իրանի հյուպատոս Նեփտոսում: 1895 թ. Խտալիայում, 1882 թ. Իրանի դեսպանը Վիեննայում: Հիշյալ եւ այլ ծառայությունների համար Իրանի կառավարությունից ստացել է «Շիրոխորշիդ» (Առյուծ-Արեւ) շքանշան եւ կոչվել Ղավամոսաթանե (Պետության նեցուկ):

15. Զահանգիր խան Օնոկոլոպյան-Մամիկոնյան. Մահամ-օլ-դովլե՝ Սողոմոնի որդին եւ Նարիմանի եղբայրն էր,

ծնվել է 1833 թ. Թավրիզում⁴: Ակնառու մեքենագետ ու ֆարտարապետ էր: Ուսանել է Նվրոպայում, ֆաշայերությամբ հորեղբոր՝ Գեորգ խանի: Ապա անցնում զինվորական ծառայության, ստանում է գեներալի աստիճան, ապա դառնում՝ Նսարեղդին Շահի գեներալ ադյուտանտը¹: 1862 թվականին, նա նշանակվում է որպես զինագործարանի պետ եվ որպես հմուտ ֆարտարագետ 1882 թ. կարողանում է փամփուշտներ շինել Իրանի բանակի հրացանների համար: Նրա սույն գործը արժանացավ Շահի ուշադրությանը եվ վերջինս նրան նշանակեց արդյունաբերության նախարար: Նա լուրջ աշխատանք է տարել վառոդաշինության, չթագործության, քղթաշինության բնագավառներում: Նա ուներ ծրագրեր նոր գործարաններ հիմնելու համար, որոնք չիրականացան նրա մահվան պատճառով 1892 թ.: Ջահանգիր խանը Իրանի առաջին արդյունաբերության նախարարն էր: Նրա դին ամփոփեցին Թեհրանի Ս.Գեորգ եկեղեցում:

16. Խոսրով խան Տեր-Սամվելյան. Աղա-Մահմեդ խանի քերած գերիներից էր, ծնված Թիֆլիսում:

Իրան գալուց հետո պետական բարձր պաշտոնների է հասել եվ վստահված էր Ֆաթհալի, Մահմեդ եվ Նասերդդին շահերի մոտ:

Նա Գիլանում ուներ բազմաթիվ գյուղեր. 1836 թ. Խոսրով խանը Սպահանի նահանգապետ է նշանակվում, սակայն այդ պաշտոնում է մնում կարճ ժամանակով:

Նրան հաջորդում է Մանուչար խանը եվ նահանգը կառավարում 7 տարի (1840-1847 թթ.): Խոսրով խանը վախճանվել է 1857 թվականին:

17. Մաթեոս խան Մելիքյան. Ծնվել է 1875 թ. Համադանում: Սովորել է Թեհրանի դպրոցներում եւ Ամերիկյան եղեջում: Նա տիրապետում էր անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն եվ հայերեն լեզուներին եվ կատարում էր թարգմանություններ: 1910 թ., երբ հիմնվում է ֆինանսների նախարարության տուրքերի վարչությունը, Մաթեոս խանը նշանակվում է տնօրեն: 1921 թ. իր ծառայությունների համար Ահմադ Շահի կողմից պարգևատրվում է Շիրոխորշիդի երկրորդ կարգի շքանշանով:

1936 թ. երբ հայոց դպրոցները փակվեցին Ռեզա Շահի հրամանով, Մաթեոս խանը, որ այդ ժամանակ Թեհրանի հայոց դպրոցի տեսուչն էր, բանտարկվում է եւ 1941 թ. ազատվում. նա մահացել է նույն թվականին:

18. Մովսես խան Խաչատրյան. ծնվել է Համադանում 1878 թ. հուլիսի 3-ին: Երկու տարեկան էր, երբ ընտանիքի հետ տեղափոխվեց Թեհրան: Ավարտել է «Հայկազյան» եւ Ամերիկյան եղեջը:

1909-ից պաշտոնավարել է մաֆսատանը, որպես կառավարչի օգնական եվ ֆենիչ: 1914 թ. եղել է Ֆարս նահանգի ֆինանսների տնօրեն, 1916-ին նշանակվել է ընդհանուր տնօրեն

Աֆիոնի հիմնարկության, 1920-ից վերահսկել է ծխատուտի, ինչպես նվ ամբողջ Իրանի հարկային վարչությունները: 1921 թ. եղել է Ատրպատականի ֆինանսների ընդհանուր կառավարիչ: Օժանդակել է հայ նվ պարսիկ դպրոցներին: Պաշտոնավարել է նաև որպես Ֆարս նահանգի ելեվմտի տնօրեն:

1921 թ. Ահմադ Շահի կողմից պարգևատրվեց Շիրոխորշիդի երկրորդ կարգի շքանշանով:

Նա մինչև իր մահը Թեհրանի բարգեռածական ընդհանուր միության նախագահն էր ու 1921-ից 1933-ը կառավարիչն էր Թեհրանի հայ ակումբի, Մովսես խանը վախճանվեց 1933 թ. հունվարի 17-ին, Թեհրանում:

19. Միրզա Մելիմ խան (Նագեմ-օլ-դովլե). ծնվել է 1833 թ. Նոր Զուղայում: Նրա հայրը Միրզա Ֆադուրը հմուտ քարգմանիչ էր ֆրանսերենի նվ ռուսերենի: Նա ուսանում է Փարիզում նվ Իրան վերադառնալով աշխատում է կառավարական քարգմանչի պաշտոնում: 1856-ին մեկնում է Փարիզ նվ 1858-ին վերադառնալով հիմնադրում է հեռագրատուն: 1859-ից մասնակցություն է գործիչներից է նվ կետրոնի հիմնադիրը, («Փարամուշխան»): Նասերեդդին Շահը Մելիմ խանին ախորում է Իրաֆ, ապա Նգիպտոս: Սակայն 1871 թ. ետ է կանչվում նվ 1837-ին որպես լիազոր դեսպան մեկնում է Լոնդոն մինչև 1889 թ.: Նա մասնակցում է 1878 թ. Բեռլինի վեհաժողովին նվ արժեքավոր ծառայություն ցուցաբերում Կոտուր ֆադաբը օսմանցիներից վերադարձներու գծով: Այդ ծառայության համար Շահը նրան շնորհեց «Նագոմուդովրե» նվ «Փրանս» տիտղոսները:

Մելիմ խանը 1889 թ., հրատարակում է «Կանոն» թերթը (Լոնդոնում): Նա սահմանադրության կողմնակիցներից էր: 1898 թ. նշանակվում է Իրանի դեսպան Իտալիայում: 1903 թ. մահանում է Շվեյցարիայում:

20. Հովհաննես Մասեհյան (Մոսաբ-եղ-օ-սալթանե). Ծնվել է 1864 թ. Թեհրանում, ուսանել է տեղի Հայկազյան դպրոցում, ապա Փարիզում ֆաղաֆական գիտություններ, պաշտոնավարել է որպես Շահի քարգմանիչ (1884 թ.), Արտգոծնախարարության դիվանապետ (1894 թ.), նվ գանազան բաժանմունքների նվ արտաֆին քղթակցության տնօրեն (1900 թ.), Բեռլինի դեսպանատան խորհրդական (1900-1906 թթ.), Բեռլինի դեսպանատան վոյս-դեսպան (1906-1910):

Մասեհյանը 1911 թ. կանչվում է Թեհրան ստանձնելու ինամակալ իշխան Նասր-օլ-Մոլլի դիվանապետի պաշտոնը: 1912-ին հակառակ երկրի սահմանադրական օրենքի, որի համաձայն ոչ իսլամներին չէր թույլատրվում դեսպանության պաշտոն ստանձնել, Նասր-օլ-Մոլլի դեսպան Բեռլինում (1912-1916 թթ.): 1927 թ. հարավային իրանահյության կողմից ընտրվեց

Իրանի խորհրդարանի պատգամավոր եվ շուտով կառավարության կողմից նշանակվեց է Իրանի դեսպան Լոնդոնում:

1929 թ. Հով. Մասեհյանը նշանակվում է Իրանի անդրանիկ դեսպան Թուֆլոյում: Սակայն Հասպոնիայի կլիման աննպաստ ազդեցություն է թողնում նրա վրա և Իրան վերադառնում, Խարբինում, 1931 թ. նոյեմբերի 19-ին վախճանվում է: Նրա դին Թեհրան է հասնում 1932 թ. մարտի 31-ին և ամփոփվում Վանագի հայոց եկեղեցու բակում:

Իր պետական մակարդակի գործունեությանը զուգահեռ նա մնում էր բարձր մակարդակի մտածողության տեր մարդ: Նրա հետաքրքրության շրջանակները բազմաբնույթ էին: Այդ թվում նա կատարել է Շեֆապիրի ստեղծագործությունների թարգմանությունները (աւելի քան 16 հատոր), որոնք անգերազանցելի էին մինչ օրս և թարգանչական արվեստի լավագույն նմուշներից են:

21. Նփրեմ խան Դավթյան (Ասիրբեկյան). ծնվել է 1868 թ. Գանձակի Բարսում գյուղում, եղել է հայ ֆիդայի և 1905-11-ի իրանական հեղափոխության գործիչ: 1880-ական թթ. վերջերին միացել է Արեվմտյան Հայաստանի հայդուկային խմբերին: 1890-ին Սարգիս Կուկունյանի խմբի արշավանքին մասնակցելու համար ձերբակալվել է, աքաղվել Սիրի (1892), ապա Սախալին: 1896-ին փախել է աքաղից, անցել Իրան, որտեղ հարել է դաշնակցությանը: Զինվորագրվել է իրանական հակաֆեոդալական բուրժուական հեղափոխությանը՝ դառնալով նրա ակնավոր կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը: Նրբ գրավվեց Ռաշտը, Նփրեմը նշանակվեց Գիլանի ոստիկանության պետ՝ իսկ Թեհրանի գրավումից հետո (1909-ի հուլիսի 10) նշանակվում է Թեհրանի եվ շրջանի պաշտպանության ուժերի հրամանատար եվ ոստիկանության պետ: Նրա կապը դաշնակցության տեղական օղակների հետ հետզհետե թուլանում է եվ նա կապվում է կուսակցական բարձրագույն մարմնի հետ ժնջվում:

Նփրեմը գոհվեց Համադանի մոտ, Սուրջիեի ֆակատամարտում եվ թաղված է Թեհրանի Հայկազյան (Դավթյան) դպրոցի բակում:

Նփրեմի զինակիցներից էին Արշակ Գավաֆյանը (Քեռի, 1863-1916), Պետրոս խան Մելիք Անդրեասյանը 91879-1912), Աբրահամ խան Հովակիմյան (1877-1963), և ուրիշներ:

22. Ամիր Թուման Մարտիրոս խան. Կոզակների զորամասերի շտաբի պետ,

23. Գնդապետ Գրիշա. Նփրեմ Դավթյանի զինակիցը Իրանի սահմանադրական հեղափոխության ժամանակ և Թեհրանի ոստիկանության հրամանատար:

24. Դուկտոր Ալեք Աղայան. Նփրեմի մտերիմ զինակիցներից. Նփրեմը նրան նշանակեց ոստիկանության

ֆինանսների վարչության տնօրեն: Նա Իրանի առաջին իրավաբաններից էր եվ ապահովագրության հիմանդիրն:

25. Հովսեփ Միրզայան. Մեկել է 1868 թ. Համադանում: Երեմ անգամ ընտրվել է Իրանի պատգամավոր, 2-րդ նստաշրջանին 1910-11 թթ., 3-րդ նստաշրջանին 1915 թ. եվ 4-րդ նստաշրջանին 1923 թ.: Եղել է ֆինանսական մախարարության պաշտոնյա 1900-ից, իսկ 1927-ից Իրանի ֆինանսների լիազոր կառավարիչ՝ դոկտոր Միլիսպոյի հատուկ օգնական: Եվրոպական եվ իրանական գրականությունից կատարել է թարգմանություններ: Մահացել է 1935 թ. Թեհրանում:

26. Գասպար Իփեկյան. Մեկել է 1883 թ. Կ.Պոլսում: 1916-17 թ.ին Թեհրանում Սեյեդ Զիա Էդդին Թաթաթաթի հետ աշխատակցում է նրա «Ռաբդ» թերթին:

1919 թ. նշանակվում է որպես ընդհանուր բնիչ Իրանի կրթական մախարարությունում: Սեյեդ Զիան, 1921 թ. պետական հեղաշրջումից հետո, Գասպար Իփեկյանին նշանակում է Թեհրանի բաղադաստի: Նա մահացել է 1952 թ. մարտի 27-ին Բեյրութում:

Մոհամեդ Ռեզա Շահ Փահլավիի գահակալության շրանում հայերը շարունակել են գրավել պետական բարձր դիրքեր, այսպես՝ մարտարագծի Զավեն Սիմոնյան Զադեի գահակալության մախարարի օգնական), տիկ.Էլիզ Դադարյան (տեղեկատվական եվ գրոսաշրջակային մախարարության արարողությունների վարչության գլխավոր տնօրեն), դոկտ. Սուլեկյան (Առողջապահության մախարարի օգնական), Անդրանիկ Ավանեսյան (Թեհրանի բաղտորիդի շինարարական կոմիտեի պետ):

Օգտված գրականություն

Եգանյան Զ.Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում XIX դարի վերջին XX դարի սկզբին, Ե., 1966: Գորոյանց Ն., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968: Դադարյան Մ., Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Ե., 1974: Սիմայան -Լ.Գ. Իրանի հայկական եկեղեցիները, Նոր Զուղա 1983: Մարտիրոսյան Զ., Հայերի տեղաբաշխումը Իրանում, Մերձավոր եւ Սիջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ (իրան) գրքում, Ե., 1969: Նույնի իրանահայ գաղութի պատմությունից, նույն տեղում, Զ., Ե., 1975: Ստեփանյան Ա., Նոր Զուղայի արհեստները, նույն տեղում, հ.15, Ե., 1989:Փահլեւանյան Զ.Լ. իրանահայ համայնքը(1941-1979), Ե., 1989: Alpago-Novello A. Sorhul (Documenti di architettura Armena, No. 20) Milano, 1989 Ֆիրդուսի: Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու, Ե., 1934: Չուգասյան Բ., հայ-իրանական գրաքան առնչություններ (5-18-րդ դդ.), Ե., 1963: Մովսիսյան Զ., Հայ գրականությունը արդի պարսկական գրական մտքի գնահատմամբ, Մերձավոր եւ Սիջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ գրքում, հ.8, Ե., 1975: Նույնի, Հայ

գրողները պարսկերեն, մատենագիտություն, նույն տեղում, հ.11 է., 1982: Նույնի, Պարսկական մամուլը հայ պոեզիայի մասին, «ՊԲՀ», 1988, №2: Էդ. Բաղդասարյան «Թեհրանի հայկական գաղթօջախի պատմություն», Թեհրան 1993: Ամենուն Տարեգիրք 1958: Լ.Գ.Մինասյան, «Իրանահայ հարբերական մամուլը» (1894-1994) Ն. Ջուղա 1994: «Պարսկահայ Տարեցույց» 1927-30: Բաֆֆի տարեգիրք 1969-1981, Թեհրան 1981: Ե.Ֆրանգյան, «Ատրպատական» Թիֆլիզ 1905: Էդ. Բաղդասարյան «Իրանահայ արխիվ»:

Բովանդակություն

1-	Համառոտ պատմություն.....	3
2-	Եկեղեցի.....	2
5		
3-	Դպրոց.....	30
4-	Հասարակական-քաղաքական կյանք.....	38
5-	Գիտություն	և
	մշակույթ.....	48
6-	Իրանահայության դերն Իրանի քաղաքական կյանքում.....	71
7-	Օգտված	
	գրականություն.....	80